# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Լ. ՏԱՐԻ ԹԻՒ 24 (1474) ՇԱԲԱԹ, ՅՈՒԼԻՍ 03, 2010
VOLUME 30, NO. 24 (1474) SATURDAY, JULY 03, 2010

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ, ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՒ ՖՐԱՆՍԱՅԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ ՀԱՆԴԷՍ ԵԿԱՆ ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐՈՎ

*Գանատայի Հանթսվիլ քաղաքին մէջ տեղի ունեցած «Մեծ Ութնեակի» գագաթաժողովի շրջագիծէն ներս, ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահող երկիրներու՝ Միացեալ Նահանգներու, Ռուսաստանի եւ Ֆրանսայի նախագահները Յունիս 26-ին հանդէս եկան միացեալ յայտարարութեամբ՝ ներկայացնելով ղարաբաղեան հարցի լուծման իրենց առաջարկները, որոնք առաջին հայեացքով իսկ կը կրեն ոչ հայանպաստ բնոյթ:*

*«Մենք՝ ԱՄՆ-ի, Ռուսաստանի եւ Ֆրանսայի նախագահներս, որպէս ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահող երկիրներու ղեկավարներ, կը վերահաստատենք մեր պարտաւորութիւնը՝ աջակցութիւն ցոյց տալու Հայաստանի ու Ատրպէյճանի նախագահներուն՝ ղարաբաղեան հակամարտութեան խաղաղ լուծման հիմնական սկզբունքներու համաձայնեցումը աւարտին հասցնելու հարցով»,- ըսուած է երեք նախագահներու յայտարարութեան մէջ:*

*Պարաք Օպամա, Տիմիթրի Մետվետեւ եւ Նիքոլա Սարքոզի կ՚առաջարկեն.*

*-Լեռնային Ղարաբաղին յարակից գրաւուած տարածքներու վերադարձ.*

*- Լեռնային Ղարաբաղի համար միջանկեալ կարգավիճակ՝ ապահովելով անվտանգութեան ու ինքնակառավարման երաշխիքներ.*



*- Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը իրար կապող միջանցք.*

*- Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակը պէտք է որոշուի ապագային պարտադիր իրաւական ուժ ունեցող կամքի արտայայտման միջոցով.*

*-Ներքին տեղահանուածներու եւ փախստականներու՝ իրենց նախկին բնակութեան վայրեր վերադառնալու իրաւունք.*

*- Անվտանգութեան միջազգային երաշխիքներ, ներառեալ՝ խաղաղարար գործողութիւններ.*

*Երեք նախագահները կը յայտնեն թէ, հիմա Հայաստանի ու Ատրպէյճանի նախագահները պէտք է կատարեն անհրաժեշտ յաջորդ քայլը եւ աւարտեն Հիմնարար սկզբունքներու շուրջ աշխատանքը:*

*Յայտարարութեան կապակցութեամբ պաշտօնական Երեւանի հրապարակային պատասխանը դրական էր:*

*«Մենք բարձր ենք գնահատում ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահ երկրների ղեկավարների՝ Ռուսաստանի, Միացեալ Նահանգների եւ Ֆրանսիայի նախագահների ցանկութիւնը եւ հետեւողական ջանքերը աջակցելու հակամարտութեան կողմերին՝ մօտեցնելու դիրքորոշումները եւ առաջ ընթանալու հիմնախնդրի խաղաղ կարգաւորման ուղղութեամբ», - յայտարարեց Հայաստանի Արտաքին Գործից նախարար Էդուարդ Նալբանդեան՝ մեկնաբանելով նախագահներ՝ Օպամայի, Մետվետեւի եւ Սարկոզիի յայտարարութիւնը:*

*Միացեալ Նահանգներու, Ռուսաստանի եւ Ֆրանսիայի նախագահներու՝ Հայաստանի եւ Ատրպէյճանի ղեկավարներուն ուղղուած կոչը հակառակ գնահատականներու արժանացան ընդդիմադիր Հայ Ազգային Գոնկրէսի եւ իշխող Հանրապետական Կուսակցութեան ներկայացուցիչներուն կողմէ:*

*«Դա ցոյց է տալիս, որ միջազգային հանրութիւնը շարունակում է ուշադրութեան կենտրոնում պահել Ղարաբաղի հարցը եւ շարունակում է իր ճնշումները հարցի շուտափոյթ կարգաւորման ուղղութեամբ», - «Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցի ընթացքին ըսաւ ՀԱԿ-ի համակարգող*

*Շար.ը էջ 4*

## ՎԱՀԱՆ ՇԻՐԽԱՆԵԱՆ. «ՊԷՏՔ Է ԴՆԵԼ ՄԻՆՍԿԻ ԽՄԲԻ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ»

*Յունիս 30-ին Երեւանի մէջ կայացած ասուլիսի ժամանակ ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան անդամ, պաշտպանութեան նախկին փոխ-նախարար Վահան Շիրխանեան մեկնաբանելով Մինսկի Խումբի համանախագահող երկիրներու ղեկավարներու յայտարարութիւնը, ըսած է, որ հոն եղող պահանջները անընդունելի են: «Եթէ մենք ընդունենք նրանց առաջարկները, եւ ստորագրուի փաստաթուղթ, որի համաձայն Հայաստանն ու Ադրբեջան ընդունում են այս սկզբունքները, դա կը բերի հնարաւոր երկու հետեւանք՝ Արցախի հայաթափում կամ պատերազմ»: Ըստ Շիրխանեանի՝ Հայաստանը Ղարաբաղի հարցով շտապելու կարիք չունի: Ան ըսած է. «Հաւատացած եղէք, որ մեր բոլոր խնդիրների լուծումը Ցեղասպանութիւնը Թուրքիային ճանաչել տալու մէջ է: Այդ դէպքում Ղարաբաղի խնդիրն այլ կերպ կը լուծուի»:*

*Վ. Շիրխանեան, անդրադառնալով բանակցային գործընթացին, ըսած է, որ Հայաստան պէտք է դուրս գայ Մատրիտեան սկզբունքներու շրջանակէն եւ դնէ Մինսկի խումբի օրինականութեան*

*Շար.ը էջ 4*

## «ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՏՈՒՆԻ» ՀԱՄԱՁԱՅՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՅԱՌԱՋԸՆԹԱՑ ՉԷ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԱԾ

*Յունիս 29-ին «Ազատութեան Տուն» (Freedom House) իրաւապաշտպան միջազգային կազմակերպութիւնը հրապարակեց իր տարեկան զեկոյցը, որու համաձայն 2009 թուականի Հայաստանի մէջ ոչ մէկ յառաջդիմութիւն չէ արձանագրուած՝ թափանցիկ ընտրութիւններ, ազատ լրատուամիջոցներ, անկախ դատական համակարգ ու ժողովրդավարական կառավարում կարեւորագոյն այս ոլորտներէն եւ ներս եւ Հայաստան կը շարունակէ պահպանել իր «կիսամիապետական համակարգ» ունեցող երկրի վարկանիշը:*

*Ուսումնասիրութիւնը կը հաստատէ, որ պաշտօնական Երեւանը անցեալ տարուայ ընթացքին յաջողած է որոշ յառաջընթաց արձանագրել տարածաշրջանային քաղաքականութեան ոլորտէն ներս, սակայն այդ չէ ազդած երկրի ժողովրդավարացման վրայ, քանի որ ուժի մէջ մնացած են 2008 թուականի նախագահական ընտրութիւններէն յետոյ յառաջացած քաղաքական ճգնաժամի ու համաշխարհային տնտեսական անկման ժխտական հետեւանքները:*

*«Մարտի 1-2-ի առնչութեամբ ձերբակալուած 15 ընդդիմադիրները կը շարունակեն մնալ անազատութեան մէջ, միւս կողմէ, շուրջ 16 տոկոսանոց տնտեսական անկումը ալ աւելի սրած է անվստահութեան ու յոռետեսութեան մթնոլորտը երկրէն ներս», - կ՚արձանագրէ հեղինակաւոր կազմակերպութիւնը:*

*Յառաջընթաց չէ արձանագրուած նաեւ ընտրական ոլորտէն ներս. 2009 թուականին առաջին անգամ կազմակերպուած Երեւանի աւագանիի ընտրութիւնները կրկին անցած են լայնածաւալ խախտումներու ու կեղծիքներու մասին պնդումնե-*

*Շար.ը էջ 4*

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը, գնահատելով Լեռնային Ղարաբաղի վերաբերեալ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների ղեկավարների՝ Օբամայի, Մեդվեդեւի եւ Սարկոզիի յայտարարութիւնը, գտնում է.

Ա. Խաղաղութիւնն ու տարածաշրջանային կայունութիւնն անհրաժեշտ են ոչ միայն հայ եւ ադրբեջանցի ժողովուրդներին, այլ նաեւ ողջ տարածաշրջանին եւ խոշոր պետութիւններին: ՍԴՀԿ-ն, սակայն, համարում է, որ այս առաջարկները տանում են միայն եւ միայն դէպի պատերազմ:

Բ. Համանախագահող երկրների ղեկավարների առաջարկը բովանդակութեամբ աւելի հակահայ է, քան նոյնիսկ տխրահռչակ Մադրիդեան սկզբունքները:

Գ. Հերթական անգամ գերտէրութիւնները առաւել բարձր են փորձում գնահատել Բաքուի սեւ նաւթը, քան արդարութիւնն ու միջազգային իրաւունքի նորմերը:

Դ. Համանախագահող երկրները միջազգային իրաւունքի մէջ գործածում են երկակի ստանդարտներ: Վստահ ենք, որ նմանատիպ առաջարկներ Ռուսաստանը չէր էլ ցանկանայ լսել Աբխազիայի եւ Հարաւային Օսեթիայի, իսկ Միացեալ Նահանգները՝ Կոսովոյի դէպքերում

Ե.Հայաստանի իշխանութիւնները նմանատիպ իրավիճակում պարտաւոր են անցկացնել հասարակական լայն քննարկումներ, իսկ որեւիցէ փաստաթուղթ ստորագրելուց առաջ ունենալ Հայ ժողովրդի կարծիքն արտայայտող հանրաքուէ՝ թէ Հայաստանում, թէ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնում եւ թէ Սփիւռքում:

***Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Հայաստանի Կազմակերպութեան Մամլոյ Դիւան***

# ՍՊԱՍՈՒՄԻ ԱՆՀԱՄԵՍՏ ՀՄԱՅՔԸ

*ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների առաջնորդները հանդէս են եկել Ղարաբաղի հակամարտութեան վերաբերեալ հերթական յայտարարութեամբ: Առիթը, ինչպէս մօտ մէկ տարի առաջ իտալական Լ՝Ակվիլա քաղաքում արած յայտարարութեան դէպքում, Մեծ Ութնեակի վեհաժողովն էր, որն այս անգամ տեղի ունեցաւ կանադական Հանթսվիլ քաղաքում: Յայտարարութեան բովանդակութիւնը, ինչպէս մէկ տարի առաջ, անկասկած Հայաստանում հիմք է տալու խօսել այն մասին, որ եռանախագահ երկրների առաջնորդները եկել են Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման տարբերակի շուրջ համաձայնութեան եւ այն պարտադրելու են հակամարտող կողմերին, այսինքն շուտով լինելու է համաձայնագրի ստորագրում Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման Հիմնական սկզբունքների վերաբերեալ:*

*Այսինքն, ԱՄՆ, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի նախագահների յայտարարութիւնից յետոյ մօտաւորապէս լինելու է այն, ինչ տեղի ունեցաւ մէկ տարի առաջ արած յայտարարութիւնից յետոյ՝ ընդդիմութիւնն ասելու է, թէ վերջ, գերտէրութիւնները եկել են համաձայնութեան, եւ հիմա արդէն իշխանութիւնը կամ ստորագրելու է, կամ տալ հրաժարական, իսկ իշխանութիւնն էլ մատնանշելու է, որ երեք գերտէրութիւնները խօսում են Ղարաբաղի կարգավիճակի, Հելսինկեան սկզբունքների, ինքնորոշման իրաւունքի իրացման եւ այլնի մասին:*

*Արտգործնախարար Նալբանդեանն արդէն իսկ յայտարարել է, որ Հայաստանը ողջունում է Հանթսվիլի յայտարարութիւնը: Տարօրինակ կը լինէր, որ եթէ Ակվիլայի յայտարարութիւնը ողջունել են, մերժէին Հանթսվիլի յայտարարութիւնը: Բայց խնդիրը տուեալ դէպքում դա չէ: Այսինքն այն չէ, թէ ինչպէս են վերաբերում Հայաստանում ընդդիմութիւնը կամ ընդդիմութիւնները, եւ իշխանութիւնը եռանախագահ երկրների առաջնորդների յայտարարութեանը: Ինչպէս որ առաջին յայտարարութիւնից յետոյ արուած կանխատեսումները փուչ դուրս եկան, թէ հաշուուած ամիսների ընթացքում բեկում է լինելու, եւ այլն, եւ այլն, այնպէս էլ փուչ են դուրս գալու ներկայիս յայտարարութիւնից յետոյ արուած կանխատեսումները:*

*Եւ թերեւս լաւ կը լինի, որ այդպիսի կանխատեսումներ չլինեն էլ: Խնդիրը պարզապէս ընկալման դաշտում է: Այստեղ է, որ Հայաստանի հասարակական-քաղաքական դաշտում անհրաժեշտ են արմատական վերանայումներ: Ղարաբաղի հարցը, այդ հարցի առիթով միջազգային յայտարարութիւնները պէտք է դադարեն իշխանութեան եւ ընդդիմութեան միջեւ լեզուակռուի առարկայ դառնալուց, երբ մէկն ասի՝ «տեսէք՝ յեսա ոնց են պարտադրում, բա մեր ժամանակ տենց բան կա՞ր», իսկ միւսն էլ ասի՝ «տեսէք ոնց են խօսում կարգավիճակի մասին, ինքնորոշման մասին, բա էն ժամանակ տենց բան կա՞ր»:*

Ժամանակի ընթացքում թերեւս պէտք է հասկանալի դառնար այն պարզ իրողութիւնը, որ Ղարաբաղի հակամարտութեան գործընթացում հնչող յայտարարութիւնները ոչ թէ կանխորոշող բնոյթի են, ոչ թէ յայտարարութիւններն են մթնոլորտ ու միջավայր ձեւաւորում, այլ աւելի շուտ եւ աւելի շատ արտայայտում են ձեւաւորուած միջավայրն ու մթնոլորտը

*Ժամանակի ընթացքում թերեւս պէտք է հասկանալի դառնար այն պարզ իրողութիւնը, որ Ղարաբաղի հակամարտութեան գործընթացում հնչող յայտարարութիւնները ոչ թէ կանխորոշող բնոյթի են, ոչ թէ յայտարարութիւններն են մթնոլորտ ու միջավայր ձեւաւորում, այլ աւելի շուտ եւ աւելի շատ արտայայտում են ձեւաւորուած մի ջավայրն ու մթնոլորտը: Հետեւաբար, Հայաստանի հասարակական-քաղաքական դաշտի համար առաւել արդիւնաւէտ կը լինի, որ գնան հենց այդ միջավայրը «ճանաչելու» ճանապարհով, որպէսզի հնարաւորութիւն լինի նաեւ լրջօրէն մտաւել ու յաւակնել այդ միջավայրի եւ մթնոլորտի ձեւաւորման գ ործում Հայաստանի մասնակցութեան, Հայաստանի դերի մասին: Մինչդեռ այժմ, միջավայրի եւ մթնոլորտի ձեւաւորման «արտօնութիւնը» յօժարակամ յանձնուել է գերտէրութիւններին, յոյսը դնելով այն բանի վրայ, որ նրանց շահերը փոխադարձաբար կը զսպեն իրար, եւ դա Հայաստանը զերծ կը պահի ճնշումներից (առաւելապէս հասարակական-քաղաքական դաշտի իշխանական սեգմենտի տրամադրութիւնն է), կամ յոյսը դնել այն բանի վրայ, որ վերջապէս կը լինի գերտէրութիւնների շահերի ներդաշնակութիւն, եւ Հայաստանի իշխանութեանը կը դնեն իրական փակուղու առաջ եւ կը բացեն ընդդիմութեան կամ ընդդիմութիւններից որեւէ մէկի ճանապարհը (դա էլ հասարակական-քաղաքական դաշտի տարբեր աստիճանի ընդդիմադիր մտադրութիւններ ունեցող հատուածների տրամադրութիւնն է):*

*Բնականաբար հարց է առաջանում, թէ իսկ ինչ մթնոլորտի կամ միջավայրի արտայայտութիւն է եռեակի նոր յայտարարութիւնը: Ինչի՞ մասին է այն, ունի՞ արդեօք տողատակ, կարգաւորման սկզբունքների յստակ շարադրումից բացի, քանի որ այդ սկզբունքները կարծես թէ նոր չեն եւ դրանց մասին առաջին անգամ չէ, որ խօսւում է թէ պաշտօնական, թէ փորձագիտական մակարդակներով: Վերջին հաշուով, համանախագահները թէեւ աստղեր չեն, բայց նրանք էլ կարծես թէ նախանշում են, սակայն չեն պարտադրում: Ինչո՞ւ, եթէ նրանք այդքան միակարծիք են Հիմնական սկզբունքների հարցում: Ինչո՞ւ չեն պարտադրում: Գուցէ նրանք այդ սկզ բունքների հրապարակման հարցո՞ւմ են միակարծիք, իսկ իրականում բոլորովին այլ վերաբերմունք ունեն դրանց վերաբերեալ: Գուցէ իրավիճակն այնպիսին է, որ այդ սկզբունքները Հայաստանին ու Ադրբեջանին առաջարկելով որպէս փոխզիջում, գերտէրութիւնները միմեանց միջեւ էլ փոխզիջման են հասնում դրանք բարձրաձայնելու հարցում՝ գործընթացի իրական սահմաններն ընդլայնելու եւ այդպիսով առկայ խտութիւնը պայթիւնավտանգ աստիճանի չհասցնելու համար:*

***ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ***
***«ԼՐԱԳԻՐ»***

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**
**Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**
**1060 N. Allen Ave.**
**Pasadena, CA 91104**

# ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԸ ԿԸ ԼԻՆԻ ՎԵՐՋԻՆԸ

*Իշխանական եւ ընդդիմադիր ուժերը Հայաստանում, ինչպէս նաեւ Ադրբեջանի ղեկավարութիւնը (ճիշտն ասած, վստահ չեմ, որ հարեւան երկրում Ղարաբաղի հարցում ընդդիմութիւն կա) այս երեք օրը ինտենսիվօրէն մեկնաբանում են երեք տէրութիւնների՝ ԱՄՆ-ի, Ֆրանսիայի եւ ՌԴ-ի յայտարարութիւնը, եւ ամէն մէկն այդ փաստաթուղթը շուռ է տալիս իր կողմը: Մեր իշխանութիւնը ասում է, որ այդ փաստաթղթով Ղարաբաղը կարող է անկախութիւն ստանալ, ընդդիմութիւնն ասում է, որ դա հերթական դիւանագիտական պարտութիւնն է, որովհետեւ մեզ ճնշում են: Ադրբեջանն էլ պնդում է, որ այս յայտարարութեամբ Ղարաբաղը սկուտեղի վրայ վերադարձւում է իրեն, եւ մնում է, որ Հայաստանն այնքան «կառուցողական գտնուի», որ այդ նուէրն իրենց անի: Նման դէպքերում ընդունուած է ասել, որ այդպիսի խօսակցութիւնները «ներքին սպառման համար» են: Երեւի այդպէս է, բայց եկէք մտածենք, թէ ինչ է խօսւում «արտաքին սպառման համար»: Տրամաբանական է ենթադրել, որ ասւում է հենց այն, ինչ ֆիքսել են համանախագահ երկրների ղեկավարները. Լեռնային Ղարաբաղը շրջապատող տարածքների վերադարձ, միջանկեալ կարգավիճակ, ինքնակառավարում, միջանցք, կամարտայայտութիւն, փախստականների վերադառնալու իրաւունք, անվտանգութեան միջազգային երաշխիքներ: Կողմերը, հաւանաբար, հենց սա են ասում «արտաքին սպառման համար», իսկ յետոյ իրենց ժողովուրդների ուղեղները լուալու նպատակով այդ սկզբունքները մանրամասնում են այնպէս, ինչպէս յարմար է: («Երկիր մեդիան» հետաքրքիր համեմատական վերլուծութիւն է անցկացրել, ըստ որի, յիշեալ յայտարարութեան նոյնիսկ անգլերէն եւ ռուսերէն տեքստերը իրար չեն համապատասխանում):*

*Հենց սկզբից հարց է առաջանում՝ այդ քայլերը արուելու են հենց ա՞յս հերթականութեամբ, թէ՞ սա պարզապէս միջոցառումների ցանկ է: Եթէ դա քայլերի հերթականութիւն է, ապա թէ՛ երեք երկրների ղեկավարները եւ թէ՛ բանակցող կողմերը ընկել են պատրանքների յետեւից կամ գուցէ անկեղծ չեն իրենց «խաղաղասիրական» ձգտումներում: Բանն այն է, որ առաջին քայլից՝ «Ղարաբաղը շրջապատող տարածքների վերադարձից» յետոյ, երկրորդ, երրորդ եւ մնացած քայլերը պարզապէս չեն իրականացուի՝ Ադրբեջանը կը յարձակուի Ղարաբաղի վրայ, եւ կը սկսուի պատերազմ:*

Ղարաբաղը շրջապատող տարածքների վերադարձից յետոյ, երկրորդ, երրորդ եւ մնացած քայլերը պարզապէս չեն իրականացուի՝ Ադրբեջանը կը յարձակուի Ղարաբաղի վրայ, եւ կը սկսուի պատերազմ

*Հիմա միջնորդները եւ երկու կողմերի դիւանագէտները ի՞նչ են ուզում՝ հարցի կարգաւորո՞ւմ, թէ՞ պատերազմ: Առանց «վերադարձի» էլ հարեւան երկիրը իրականացնում է ագրեսիվ գործողութիւններ եւ նրան ոչ ոք, նոյնիսկ թեթեւակի, չի կշտամբում, ինչո՞ւ դա չանի աւելի բարենպաստ դիրք ստանալու դէպքում: Կը յարձակուի եւ կասի, որ «վերականգնում է իր տարածքային ամբողջականութիւնը»: Այնպէս որ, եթէ ամէն ինչ պէտք է սկսուի «տարածքների վերադարձից», ապա մնացած քննարկումներն ու մեկնաբանութիւնները, քաղաքական դիվիդենդներ հաւաքելը կամ կորցնելը ոչ մի իմաստ չունեն: Դատարկ ժամավաճառութիւն է:*

***ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ***
***«ԱՌԱՒՕՏ»***

## ՀԱՅԱՍՏԱՆ

# ԲԱՑՈՒԵՑ ԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 5-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ



Գրողների համահայկական 5-րդ համաժողովի մասնակիցներուն էջմիածնի մէջ ընդունեց Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոս

Հայաստանի Գրողների Միութեան Ծաղկաձորի ստեղծագործական տանը Յունիս 29-ին բացուեց Գրողների համահայկական 5-րդ համաժողովը, որին մասնակցում են 300-ից աւելի պատուիրակներ:

20 երկրներից ժամանած շուրջ 90 սփիւռքահայ գրողներն ու նրանց հայաստանցի գրչակիցների քննարկումները առաջիկայ օրերին նուիրուած կը լինեն «Նոր իրականութիւն եւ նոր գրականութիւն», «Հայ գրականութիւնն արդի աշխարհի համատեքստում», «Ժամանակակից Գրողների 5-րդ համահայկական համաժողովի դահլիճում հայ գրականութեան միջազգայնացումը», «Գրական մամուլը Հայաստանում եւ Սփիւռքում» եւ այլ խնդիրների:

Համագումարի պատուիրակներից Երեւանի պետական համալսարանի Հայ գրականութեան ամբիոնի վարիչ Վազգէն Գաբրիէլեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում առանձնացրեց հետեւեալ խնդիրները. - «Որքան հնարաւոր է՝ աւելի մօտենալ կեանքին եւ ոչ թէ օդում սաւառնել, ինչպէս որ մեր շատ պոետներ: Ազգային մտածողութիւն եւ ո՛չ դրսից եկած տարբեր գրական եւ այլ կարգի հոսանքներ ու ոճեր: Երկու ոտքով՝ մայր հողի վրայ»:

Գրականագէտ Դաւիթ Գասպարեանը գրականութեան խնդիրներից կարեւորեց «հայոց լեզուի համար շարունակուող պատերազմը, որ այսօր վտանգի է ենթարկւում», «գրականութեան ուսուցումը դպրոցում, բուհերում, որը ոտնահարւում է»:

Ստամբուլում հրատարակուող «Մարմարա» օրաթերթի հիմնադիր խմբագիր Ռոբեր Հատտէճեանը նոյնպէս ցաւով խօսեց սփիւռքում տարէցտարի աւելացող օտարագիր հայ գրողների թեմային: Նրա համոզմամբ, օտար լեզուով գրուող գրականութիւնը դժուար է հայ գրականութիւն կոչել:

«Որովհետեւ գրականութիւնը ինչ լեզուով որ գրւում է, այդ ազգին, այդ ժողովրդին է պատկանում», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում փաստարկեց նա՝ շարունակելով. - «Այդ տեսակէտից, ես կարծում եմ, որ սփիւռքում հայ գրականութիւնը, դժբախտաբար, շատ-շատ 10 տարի, 15 տարի եւս կը դիմանայ, իսկ դրանից յետոյ, եթէ մի հրաշք չպատահի... Բայց ես հրաշքի հաւատացողներից եմ, քանի որ հայ ժողովուրդը քանիցս հրաշքներ է իրագործել...»:

Արձակագիր Ռուբէն Յովսէփեանի համոզմամբ՝ կարեւորը գրելն է. - «Թող նոյնիսկ գրամոլները գրեն, թող գրեն, մի բան դուրս կը գայ»:

# «ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՄԵՆԱՄԵԾ ՎՏԱՆԳԸ ԱՏՈՄԱԿԱՅԱՆՆ Է»

Թուրքական «Բահչեշեհիր» համալսարանի պրոֆեսոր Էրհուն Քուլան Zaman պարբերականում լոյս տեսած իր յօդուածում անդրադարձել է Մեծամօրի ատոմակայանին՝ այն ներկայացնելով որպէս «անասելի մեծ վտանգ Թուրքիայի համար»: Թուրք պրոֆեսորը նշում է, որ իր երկրի համար գլխաւոր խնդիրը ոչ թէ Հայոց ցեղասպանութեան ճանաչման գործընթացն է, ղարաբաղեան հակամարտութիւնը կամ ԱՄԱԼԱ-ի կողմից թուրք դիւանագէտների ոչնչացումը, այլ ամենամեծ ու ամենավտանգաւոր խնդիրը Մեծամօրի ատոմակայանն է: Ըստ Էրհուն Քուլայի՝ Մեծամօրը կարող է դառնալ «երկրորդ Չեռնոբիլ» եւ «իսկական չարիք հանդիսանալ Թուրքիայի արեւելեան հատուածում գտնուող Կարսի, Արդահանի, Իգդիրի, Արթուինի, Ռիզէի եւ Աղրը նահանգների բնակիչների համար»: Ըստ թուրք գիտնականի՝ բացի առողջապահական խնդրից կարող է ի յայտ գալ նաեւ տնտեսական լուրջ խնդիրներ: «Ո՞ր զբօսաշրջիկը կ՚այցելի Թուրքիա, եթէ այստեղ միջուկային աղէտ գ րանցուած լինի»-,«անհանգստանում» է Քուլան:

Թուրք պրոֆեսորը վերջում կոչ է անում հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման գործընթացում ներառել նաեւ Մեծամօրի ատոմակայանի փակման հարցը:

Փաստօրէն, Թուրքերը շարունակում են նոր նախապայմաններ յօրինել:

# ՆԱԽԱՐԱՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԵՐԿԱԹԳԻԾՆ ԷԼ ՄԵՐՆ Է, «ՀԱՅՓՈՍՏՆ» ԷԼ

Հայաստանի կապի եւ տրանսպորտի նախարար Մանուկ Վարդանեանը վստահեցնում է, որ «երկաթուղին հայկական է», թէեւ դրա կառավարման խնդիրները կոնցեսիայի պայմանագրի հիման վրայ փոխանցուել են ռուսական կողմին. «Մենք ռուսներին ոչինչ չենք յանձնել: Ամբողջը մեր սեփականութիւնն է, նրանք ընդամէնը կառավարելու են 30 տարի»:

Ըստ նախարարի՝ «Հայփոստ»-ն էլ էդուարդօ Էռնէկեանի սեփականութիւնը չէ: Նա ասաց, թէ թիւր կարծիք կայ, թէ նրան է պատկանում: «Մենք ոչինչ չենք տուել պարոն Էռնէկեանին: «Հայփոստ»-ը եւս հայկական ընկերութիւն է, իրաւաբանական անձն է, որի ընդամէնը կառավարման իրաւունքը փոխանցել ենք «Հայփոստ մենեջմենտ» ընկերութեանը, որի սեփականատէր եւ հիմնադիրը Էռնէկեանն է»,- ասաց Մանուկ Վարդանեանը:

Հարցին, թէ արդեօք հնարաւոր է չիրագործուի Իրան-Հայաստան երկաթգծի կառուցումը թանկարժէքութեան պատճառով, Մանուկ Վարդանեանը բացառեց, քանի որ այդ անհրաժեշտութիւն է: Բացի այդ, ըստ նրա, թանկ է եւրոպացի մասնագէտների հաշուարկներով՝ 4 մլրդ դոլար, քանի որ նրանք աշխատուժը աւելի թանկ են հաշուարկել, իսկ հայ մասնագէտները աւելի քիչ են ստանում: Այնպէս որ հայկական հաշուարկներով՝ այն գնահատւում է 1,7-1,8 մլրդ դրամ:

Այս նախագիծը Հայաստանի ուսերին կը փաթաթի եւս մէկ վարկային պարտաւորութիւն՝ եւս մէկ արտաքին պարտք:

# ԿՈԱԼԻՑԻՈՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ Կ'ԱՆԴԱՄԱԿՑԵՆ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆԸ

Բրիւսելում Յունիսի 24-ին Եւրոպական ժողովրդական կուսակցութեան անդամակցութեան հարցերով աշխատանքային խմբի նիստին քննարկուել է Եւրոպական ժողովրդական կուսակցութեանը հայաստանեան կուսակցութիւնների ինտեգրման հարցը: Որոշուել է հնարաւորութիւն տալ հայաստանեան կոալիցիոն կուսակցութիւններին ապագայում անդամակցել Եւրոպական ժողովրդական կուսակցութիւն:

Առաջիկայում կը սկսուեն երկկողմ բանակցութիւններ մի կողմից «Բարգաւաճ Հայաստան», Հայաստանի Հանրապետական եւ «Օրինաց Երկիր» կուսակցութիւնների եւ միւս կողմից Եւրոպական ժողովրդական կուսակցութեան միջեւ: Մինչեւ 2010-ի տարեվերջ Հայաստան կը ժամանի Եւրոպական ժողովրդական կուսակցութեան բարձրաստիճան առաքելութիւն՝ ուսումնասիրելու համար, թէ որքանով են հայաստանեան կոալիցիոն կուսակցութիւնները համապատասխանում եւրոպական չափանիշներին:

Յիշեցնենք, որ Եւրոպական ժողովրդական կուսակցութեան խմբի բիւրոյի նիստին վերջերս ելոյթով հանդէս է եկել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսեանը:

# ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ԹՈՒՐՔԵՐՆ ՈՒԶՈՒՄ ՄԵՐ ԵՐԳԵՐԸ ԳՆԵԼ ՈՒ ԹԱՐԳՄԱՆԵԼ



Դանիէլ Երաժիշտ (ձախին) եւ Ռուբէն Հախվերդեան ասուլիսի ժամանակ

Վերջերս երաժիշտների հեղինակային իրաւունքներով զբաղուող «Հայ-յեղինակ» ընկերութիւնը «Univercial Studio» ընկերութեան թուրքական ներկայացուցչութեան կողմից առաջարկ է ստացել, որ հայկական ընկերութիւնից ցանկանում է գնել արդէն մեծ ճանաչում վայելող հայկական երաժշտական կատարումներ եւ թողարկել ձայնասկաւառակ՛ դրանք ներկայացնելով թուրքերէն, թուրք երգիչների մատուցմամբ:

Անդրադառնալով այդ առաջարկին՝ Դանիէլ Երաժիշտը լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասել է, թէ նախ պէտք է հասկանալ, թէ ի՞նչ են ուզում թուրքերը:

-Նրանք շատ խորամանկ են, եւ մինչեւ հիմա կեանքը ցոյց է տուել, որ ինչի թուրքը ձեռք է տուել, թուրքացել է: Ես չէի ուզենայ, որ մեր երգերի մասին ասէին, թէ այստեղով թուրք է անցել: Բացի այդ, երգը ծնւում է լեզուից, ինչպէս Կոմիտասն է հաստատել: Հայոց լեզուից բխած երգը որքանո՞վ է համատեղելի այդ խորթ մշակոյթին: Կոմիտասն իր ամբողջ գործունէութիւնը նուիրել է՝ զատելու թուրքականը, արեւելեանը եւ մաքուր հայկականը: Հիմա հակառակ գործընթաց են ուզում սկսել, որ նորից գցեն ցեխի մէջ: Այսինքն՝ Կոմիտասն իր առաքելութեամբ վերանում է: Կոմիտասն ասում է, որ երգի մէջ բառերն ու երաժշտութիւնը պէտք է այնքան համահունչ լինեն, որ համբուրուեն: Հարց է, թէ որքանո՞վ է մեզ պէտք Հուդայի համբոյրը,-նշել է նա:

Երգահան Ռուբէն Հախվերդեանն էլ նշել է, թէ եթէ պիտի ռաբիս՝ թուրքախառը երգերը գնեն, ապա մեզ լաւութիւն արած կը լինեն՝ մաքրելով մեր երգը:

-Էն օրը մէկն այնքան լկտիացաւ, որ հաղորդման մէջ ասում է՝ Կոմիտասն ինչ քառակուսի բան է, հայկականը մուղամն է,-ասել է նա:

# ԼՈՒՐԵՐ

## ՖԻԼԻՊ ԳՈՐԴՈՆ. «ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑԸ ՊԵՏՔ Է ԼՈՒԾՈՒՄ ՍՏԱՆԱՅ»



*Միացեալ Նահանգների պետքարտուղարի տեղակալ Ֆիլիպ Գորդոն*

*«Լեռնային Ղարաբաղի հարցը պէտք է լուծում ստանայ», - Երեքշաբթի, 29-ին Վաշինգտոնում ասել է Միացեալ Նահանգների պետքարտուղարի Եւրոպայի եւ Եւրասիայի հարցերով տեղակալ Ֆիլիպ Գորդոնը՝ անդրադառնալով պետքարտուղար Հիլարի Քլինթոնի առաջիկայ այցին Արեւելեան Եւրոպայի եւ Հարաւային Կովկասի երկրներ:*

*«Բռնութեան վերջին դէպքերն էլ ցոյց տուեցին, որ կայունութիւնը չենք կարող համարել ինքնին ենթադրելի երեւոյթ: Պետքարտուղարի այցի նպատակներից մէկը երկու կողմերի հետ՝ Հայաստանի ու Ադրբեջանի, քննարկելն է՝ ինչպէս կարելի է հարցը առաջ մղել», - ասել է ամերիկացի բարձրաստիճան դիւանագէտը:*

*Լրագրողի հարցին ի պատասխան անդրադառնալով ղարաբաղա - ադրբեջանական շփման գօտում տեղի ունեցած միջադէպին, որը հայկական կողմից 4, ադրբեջանականից՝ 1 զինուորի կեանք խլեց, Գորդոնը նկատել է. - «Գործընթացը ձգձգուեց աւելի, քան կը ցանկանայինք: Եւ այս կամ այն չափով բռնութեան ժայթքումը մեզ շատ է անհանգստացնում»:*

*Նա նշել է, որ պետքարտուղարը երկու երկրներում էլ հնարաւորութիւն կ՚ունենայ ընդգծել այն, ինչ երեք նախագահներն ասել են Կանատայում:*

*Ամերիկեան կողմը կարեւորում է այդ յայտարարութիւնում առկայ բոլոր սկզբունքները, փոխանցել է Գորդոնը:*

*Անդրադառնալով Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի՝ ուժի չկիրառման համաձայնագիր ստորագրելու վերաբերեալ Ադրբեջանին արուած առաջարկին, ԱՄՆ-ի պետքարտուղարի տեղակալը նշել է, թէ երկու կողմերն էլ բաւական յստակ արտայայտել են իրենց հաւատարմութիւնը Հելսինքեան սկզբունքներին, որոնցից առաջինը հենց ուժի կամ դրա գործադրման սպառնալիքի կիրառումից հրաժարուելն է:*

*Ֆիլիպ Գորդոնի խօսքերով՝ հայաստանեան հանդիպումների ժամանակ Քլինթոնը չի շրջանցի նաեւ հայ - թուրքական յարաբերութիւնների կարգաւորման թեման:*

*«Մենք շարունակում ենք հաւատալ, որ լաւ կը լինի, եթէ արձանագրութիւնները վաւերացուեն ու իրականացուեն, եւ բացուի Թուրքիայի հետ սահմանը, ինչից կը շահեն թէ՛ Հայաստանը եւ թէ՛ Թուրքիան», - ասել է պետքարտուղարի տեղակալը:*

*Հիլարի Քլինթոնը Հայաստանում կը լինի Յուլիսի 4-5-ը:*

## ՎԱՀԱՆ ՇԻՐԽԱՆԵԱՆ

*Շարունակուած էջ 1-էն*

*հարցը: Շիրխանեանի կարծիքով՝ մեզ համար շատ աւելի ընդունելի կ՚ըլլայ, եթէ երաշխաւոր դառնար մէկ երկիր, քան խումբ մը որոշ լիազօրութիւններ ունեցող երկիրներ, որոնք պատասխանատու չեն հետեւանքներու համար:*

*Ըստ Շիրխանեանի, Հայաստան պէտք է պահանջէ Մինսկի խումբի մանդատի յստակեցում, որպէսզի պարզ դառնայ, թէ ով է պատասխանատու հետեւանքները կանխելու համար. «Այս հարցը յստակեցուած չէ, իսկ անորոշութիւնը շատ վտանգաւոր է մեզ համար»:*

*Ինչ կը վերաբերի պատերազմի վերսկսման, ապա պաշտպանութեան նախկին փոխնախարարի կարծիքով՝ նման բանի հաւանականութիւնը քիչ է: Շիրխանեան յայտնած է, որ հակամարտութեան սրում կրնայ ըլլալ, սակայն պատերազմի հաւանականութիւնը փոքր է՝ հակառակ այն փաստին, որ ատրպէյճանական բանակը կը ղեկավարեն թուրք զօրավարներ:*

## «ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՏՈՒՆԻ» ՀԱՄԱՁԱՅՆ

*Շարունակուած էջ 1-էն*

*րով: Մրցակցութիւնը մեծ էր, սակայն մրցակցային եղանակները կը շարունակէին շատ հեռու մնալ ժողովրդավարութեան չափանիշներէն՝ ներառեալ ընտրակաշառքն ու ճնշումները:*

*«Քաղաքապետ Գագիկ Բեգլարեանի տնօրինած վարչական միջոցներու պարագային իսկ, անոր ստացած ձայներու առաւելութիւնը մեծ էր», - կ՚ըսէ Freedom House:*

*Չէ բարելաւուած ցուցանիշը նաեւ խօսքի ազատութեան բնագաւառէն ներս. - «Ի տարբերութիւն 2008 թուականին արտակարգ դրութեան ժամանակ մտցուած ուղիղ գրաքննութեան, 2009-ին կառավարութիւնը իր ճնշումները մեծ մասամբ բանեցուցած է գովազդի միջոցով՝ յորդորելով գործարարներուն գովազդ չտեղադրել իշխանութիւններուն չենթարկուող լրատուամիջոցներու եթերներով: Նոր հաղորդումներ կան նաեւ լրագրողներու նկատմամբ սպառնալիքներու ու յարձակումներու վերաբերեալ»:*

*Հետազօտութեան համաձայն, յառաջընթաց չէ արձանագրուած նաեւ դատական համակարգի անկախութիւնը բարելաւելու ուղղութեամբ. - «2008 թուականի նախագահական ընտրութիւններէն ետք ի յայտ եկած գործերու քննութիւնը վճռական փորձութիւն դարձաւ Հայաստանի արդարադատութեան համար՝ բացայայտելով համակարգի թուլութիւնն ու կախուածութիւնը գործադիր մարմիններէն: Դատախազութեան կողմէ տասը մահուան հանգամանքներու քննութիւնը մինչ օրս յստակ արդիւնքներ չէ տուած»:*

*ԵԽԽՎ-ի կողմէ Հայաստանի վերաբերեալ ընդունուած բանաձեւերու պահանջները ամբողջութեամբ չեն կատարուած, այդ իսկ պատճառով այս ոլորտէն ներս եւս Հայաստանի իշխանութիւններու ցուցանիշը չէ բարելաւուած:*

*Զեկոյցը քննադատութեան արժանացուցած է նաեւ կոռուպցիայի դէմ իշխանութիւններու ձեռնարկած պայքարը: Ընդգծելով, որ համատարած կաշառակերութիւնը հայաստանցիներուն յուզող ամենալուրջ խնդիրներէն մէկն է: «Գործող իշխանութիւններէն որեւէ մէկուն մինչ օրս չի յաջողուած էական յառաջընթաց արձանագրել այս ուղղութեամբ: 2003-2007 թուականներուն կոռուպցիան յաղթահարելու ուղղութեամբ կատարուած քայլերու արդիւնքով բարելաւուած է միայն օրէնսդրական դաշտը, բայց ոչ անոր կիրարկումը: 2009-ին եւս, նախորդ տարիներու նման, իշխանութիւններու ձեռնարկած կոռուպցիայի դէմ գործողութիւնները շրջանցած են բարձրաստիճան պաշտօնեաներուն ու խոշոր գործարարներուն», ըսուած է «Ազատութեան Տունի» տարեկան զեկոյցին մէջ:*

## ՀԱԱԳԱՅԻ ՔՐԷԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ՍՏԱՑԵԼ Է ՌՈԲԵՐԴ ՔՈՉԱՐԵԱՆԻ ԴԷՄ ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ

*Հաագայի միջազգային քրէական դատարանի Դատախազի գրասենեակը ստացել է «Հայաստանի քաղաքացիներն ընդդէմ Ռոբերդ Քոչարեանի» փաստաթուղթը:*

*Հայ ազգային կոնգրեսի մամուլի ծառայութիւնից NEWS.am-ին յայտնում են, որ Հաագայի ՄՔԴ Դատախազի գրասենեակից ստացուած նամակ/ծանուցման մէջ մասնաւորապէս նշուած է. «Հաղորդումը պատշաճ կերպով գրանցուել է Գրասենեակի Հաղորդումների Ռեգիստրում: Մենք այն կ՚ուսումնասիրենք, ինչպէս հարկն է՝ համաձայն Միջազգային քրէական դատարանի՝ Հռոմի ստատուտի դրոյթների»:*

*Նշենք, որ Հայ ազգային կոնգրեսի ներկայացրած հայցը կազմուած է մարտի 1-ի իրադարձութիւնների վերաբերեալ փաստերից, տեսագրութիւններից: Հայցը բաղկացած է 280 էջից, իսկ նրան կցուած փաստաթղթերը կազմում են աւելի քան 4500 էջ:*

## ՀԱԿԱՌԱԿՈՐԴԸ ԽԱԽՏԵԼ Է ՀՐԱԴԱԴԱՐԸ ԵՒ ԳՆԴԱԿՈԾԵԼ ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՅԵՆԱԿԷՏԵՐԸ

*Ադրբեջանական կողմը շարունակում է պարբերաբար խախտել հրադադարը: Ինչպէս NEWS.am-ը տեղեկանում է ԼՂՀ պաշտպանութեան նախարարութեան մամուլի ծառայութիւնից, Յունիսի 28-ի լոյս 29-ի գիշերը եւ օրուայ ընթացքում ղարաբաղա-ադրբեջանական զօրքերի շփման գօտու մի շարք հատուածներում արձանագրուել են հրադադարի ռեժիմի խախտման դէպքեր: Հակառակորդը տարբեր տրամաչափի հրաձգային զէնքերից եւ դիպուկահար հրացաններից գնդակոծել է Հորադիզ, Լիալա-Իլագլի, Քարվենդ, Կորգան, Աշաղը Վէյսալի, Ջէյիլ լեռ, Եուսուֆջանլու, Մարգիլի, Քենգեռլի, Սարըջանլու, Բաշ Քարվենդ, Շիխլար, Լեւոնարխ, Ջրաբերդ, Նամիրլի, Յարմջա եւ Թալիշ ուղղութիւններում տեղակայուած ղարաբաղեան դիրքապահների հենակէտերը:*

*Պաշտպանութեան բանակի առաջապահ ստորաբաժանումների ձեռնարկած պատասխան գործողութիւններից յետոյ հակառակորդը լռել է:*

## ՊՈԼՍՈՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ ԳՏԵԼ Է ԻՐ ԼՈՒԾՈՒՄԸ

*Թուրքիայում լուծում են գտել Պոլսոյ հայոց պատրիարքի ընտրութիւնների անցկացման հարցում: Hurriyet-ի փոխանցմամբ՝ Անկարայի միջնորդութեամբ որոշում է կայացուել ընտրել պատրիարքի տեղապահ, այլ ոչ թէ պատրիարք, ինչպէս պնդում էին հայկական համայնքի մի շարք ներկայացուցիչները: Թուրքիայի ներքին գործերի նախարարութեան կրօնի եւ ազգային փոքրամասնութիւնների հարցերով վարչութիւնը որոշել է, որ պէտք է անցկացուի պատրիարքի տեղապահի ընտրութիւն, քանի որ ներկայիս պատրիարք Մեսրոպ Երկրորդը կենդանի է եւ հրաժարական չի ներկայացրել:*

*Պոլսոյ Հայոց Պատրիարքարան ուղարկուած նամակում Թուրքիայի ՆԳՆ կրօնի եւ ազգային փոքրամասնութիւնների հարցերով վարչութիւնը նշել է, որ պէտք է անցկացուի միայն պատրիարքի տեղապահի ընտրութիւն: Այսպիսով, երկար ժամանակ շահարկուող ընտրութիւնների թեման լուծում է գտել, իսկ պատրիարքի տեղապահի ընտրութիւններին կը մասնակցեն երեք թեկնածուներ՝ Արքեպիսկոպոս Արամ Աթէշեանը, Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ Եպիսկոպոս Չուլջեանն ու Գերմանիայի հայերի հոգեւոր առաջնորդ Գարեգին Եպիսկոպոս Բեկչեանը:*

## ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

*Շարունակուած էջ 1-էն*

*Լեւոն Զուրաբեան:*

*Հանրապետական Կուսակցութեան մամլոյ խօսնակ, Ազգային Ժողովի պատգամաւոր Էդուարդ Շարմազանով, իր կարգին ըսաւ, «Մեզ համար ընդունելի է յայտարարութիւնը, որովհետեւ այն երեք կէտերը, որոնք բազմաթիւ անգամներ հայկական կողմը արտայայտած է, նրանք կան»:*

*Առաջինը, ըստ ՀՀԿ-ի խօսնակի, «այն է, որ ի հեճուկս ատրպէյճանական կողմի, որ մնայուն կերպով խօսած է, որ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի խնդիրը բանակցութիւններու ընթացքին չի քննարկուիր, իսկ այս յայտարարութեան մէջ յստակ նշուած է Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի մասին:*

*Երկրորդ դրականը, Շարմազանովի կարծիքով, այն է, որ «խօսւում է Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի ընդհանուր ցամաքային կապի մասին, սահմանի մասին», եւ երրորդը՝ «անվտանգութեան երաշխիքներն են»:*

*ՍԴՀԿ Հայաստանի կազմակերպութիւնը իր կարգին յայտարարեց որ, համանախագահող երկիրներու ղեկավարներու առաջարկը բովանդակութեամբ աւելի հակահայ է, քան նոյնիսկ տխրահռչակ Մատրիտեան սկսկզբունքները: Կուսակցութիւնը պահանջեց Հայաստանի իշխանութիւններէն չհամաձայնիլ այս առաջարկներուն, առանց ունենալու Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի հայութեան տեսակէտները:*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ ԷԴՈՒԱՐԴ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ ԱՒՍՏՐԻԱԿԱՆ «ՓՐՈՖԻԼ» ԱՄՍԱԳՐԻՆ

-Պարոն Արտաքին Գործերի նախարար, տարածաշրջանը վերջին տարիներին կանգնած է եղել լուրջ փոփոխութիւնների առաջ. Իրանը ջանքեր է գործադրում աւելի ու աւելի ազդեցութիւն ունենալու համար, Թուրքիան փորձում է ինքնահաստատուել իբրեւ տարածաշրջանային միջնորդ, Հայաստանը, որպէս փոքր պետութիւն, դրանց մէջտեղում է: Արդեօք դուք անհանգստացա՞ծ էք ապագայի համար:

*-Հայաստանը փոքր պետութիւն չէ: Տարածաշրջանում մենք զբաղեցնում ենք այս փոքր հողակտորը, բայց հարիւրաւոր այլ Հայաստաններ կան աշխարհով մէկ, ամենուր, ուր ապրում են հայեր, նրանք ստեղծել են իրենց համայնքները՝ փոքրիկ Հայաստաններ, որոնք մեզ միաւորում են աշխարհով մէկ:*

-Բայց ձեր անմիջական հարեւաններն աւելի մեծ եւ երբեմն աւելի ագրեսիվ պետութիւններ են:

*-Մեր պատմութեան ընթացքում անհանգստանալու պատճառներ եղել են: Մենք ջանքեր ենք գործադրում մեր տարածաշրջանում կայունութեան եւ անվտանգութեան ամրապնդման համար, բայց դա միայն մեզնից չի կախուած: Մենք փորձում ենք բնականոն յարաբերութիւններ ունենալ մեր բոլոր հարեւանների հետ եւ այդ պատճառով է, որ մենք նախաձեռնեցինք Թուրքիայի հետ յարաբերութիւնների կարգաւորման գործընթացը: Մենք լաւ յարաբերութիւններ ունենք Իրանի հետ, մենք լաւ յարաբերութիւններ ունենք Վրաստանի հետ, եւ մենք փորձում ենք կարգաւորել Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի միջեւ եղած հակամարտութիւնը, ինչը հնարաւորութիւն կը տայ Ադրբեջանի հետ նոյնպէս նորմալ յարաբերութիւններ հաստատել:*

-Այս պահին աշխարհը կասկածանքով է նայում Իրանի միջուկային ծրագրին. արդեօք դուք կարծում էք, որ դա սպառնալիք է նաեւ Հայաստանի համար:

*-Մենք ուշադրութեամբ հետեւում ենք այդ հարցի զարգացումներին: Մենք յուսով ենք, որ Իրանը եւ միջազգային հանրութիւնը համատեղ ջանքերով, բանակցութիւնների միջոցով կը գան խնդրի հանգուցալուծմանը:*

-Վերջերս տպաւորութիւն էր ստեղծուել, որ առկայ է մեծ առաջընթաց Հայաստանի եւ Թուրքիայի յարաբերութիւններում, այնուամենայնիւ, մերձեցումը նորից կանգ առաւ: Դուք մօտ ապագայում տեսնո՞ւմ էք առաջընթացի հնարաւորութիւն:

*-Հայ-Թուրքական յարաբերութիւնները փակուղում էին, երբ Հայաստանի Նախագահ Սերժ Սարգսեանը Հայաստան հրաւիրեց իր Թուրք գործընկերոջը՝ Աբդուլլահ Գիւլին: Ապագայի տեսլական ունեցող այս նախաձեռնութիւնը, որը դրական պատասխանի արժանացաւ Թուրքիայի Նախագահի կողմից, մեզ թոյլ տուեց սկսել գործընթացը, եւ մի քանի ամիս տեւած բարդ բանակցութիւնների արդիւնքում մենք նշանակալից քայլ կատարեցինք հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման ուղղութեամբ՝ անցեալ տարի Ցիւրիխում ստորագրելով դիւանագիտական յարաբերութիւնների հաստատման, ընդհանուր սահմանի բացման եւ երկկողմ յարաբերութիւնների զարգացման վերաբերեալ երկու արձանագրութիւնները:*

-Բայց վաւերացումն առկախուած է: Ինչո՞ւ:

*-Արձանագրութիւնների ստորագրումից յետոյ Հայաստանը սկսեց վաւերացման գործընթացը, համապատասխան ընդունուած ընթացակարգի՝ Սահմանադրական դատարանի որոշումը կայացուեց կանոնակարգով նախատեսուած ժամկէտից մէկ ամիս առաջ եւ արձանագրութիւնները երկրի հիմնական օրէնքին համահունչ համարեց: Փետրուարի սկզբին հանրապետութեան նախագահը Լոնդոնի Ջեթըմ Հաուսում իր ելոյթում յայտարարեց, որ Հայաստանի խորհրդարանը, որտեղ նախագահի ղեկավարած կուսակցութիւնը բաւարար մեծամասնութիւն ունի, կը վաւերացնի արձանագրութիւնները, հենց որ Թուրքիան անի դա:*

*Թուրքական կողմը, որն ունի աւելի պարզ վաւերացման գործընթաց, գործնականում այդ ուղղութեամբ որեւէ քայլ չկատարեց, բացի արձանագրութիւնները խորհրդարան ուղարկելուց, եւ արդէն փաստօրէն 9 ամիս արգելափակում է վաւերացման գործընթացը:*

-Արդեօք դուք սպասո՞ւմ էք, որ մերձեցման գործընթացը շուտով շարունակութիւն կ'ունենայ:

*-Հայաստանի մօտեցումն ամբողջովին համընկնում է միջազգային հանրութեան դիրքորոշմանը՝ համաձայնագրերի վաւերացումը եւ իրականացումը պէտք է տեղի ունենան առանց նախապայմանների եւ խելամիտ ժամկէտներում: Հենց այս փոխըմբռնմամբ մենք սկսել եւ վարել ենք այս գործընթացը եւ հանգել համաձայնութիւնների: Եւ բնականաբար, արձանագրութիւններում եւս նախապայմաններ չկան:*

*Մենք յուսով ենք, որ գործընթացը ոչ թէ վերջնականապէս տապալուած է, այլ առկախուած: Ինչպէս ասուել է շատ պարզ՝ մենք պատրաստ կը լինենք շարժուել առաջ, եթէ Թուրքիայում կրկին կը լինեն գործընկերներ, որոնք պատրաստ կը լինեն շարժուել առաջ եւ կարգաւորել յարաբերութիւններն առանց նախապայմանների:*

-Թուրքիան իր հերթին պնդում է, որ Հայաստանն է արգելափակում մերձեցումը. ո՞վ է այդ դէպքում պատասխանատու:

*-Թուրքիան փորձում է անհիմն պատճառներ գտնել գործընթացը ձգձգելու համար: Ե՞րբ է Հայաստանը արգելափակել կարգաւորումը: Ոչ ոք չի կարող նման բան ասել: Կարգաւորման գործընթացում Հայաստանի բոլոր քայլերն արժանացել են միջազգային հանրութեան հաւանութեանը: Նոյնիսկ վաւերացման գործընթացի առկախման որոշումը ըմբռնումով է ընկալուել եւ ողջունուել է:*

-Ըստ լրատուամիջոցների տեղեկութիւնների, Թուրքիայի հետ բանակցութիւնների կասեցման ամենակարեւոր պատճառը Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնն է: Արդեօք դա նշանակո՞ւմ է, որ Ցեղասպանութեան հարցում մերձեցումն աւելի առաջ է գնացել քան Լեռնային Ղարաբաղի խնդրում:

*-Գործընթացի կասեցման հիմնական եւ միակ պատճառը Թուրքիայի կողմից յարաբերութիւնների կարգաւորումն այլ հարցերի հետ կապելու փորձի վերսկսումն է: Արձանագրութիւնների ստորագրումից յետոյ Թուրքիան յետքայլ արեց եւ նորից սկսեց խօսել նախապայմանների լեզուով, օրինակ՝ հայ-թուրքական կարգաւորման գործընթացը փորձելով կապել Լեռնային Ղարաբաղի խնդրի հանգուցալուծման հետ: Ոչ միայն Հայաստանը, այլեւ գործընթացին աջակից եւ միջնորդ երկրները, ամբողջ միջազգային հանրութիւնը հրապարակաւ յայտարարել են, որ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի լուծումը կապ չունի հայ-թուրքական կարգաւորման գործընթացի հետ: Եւ դրանք կապակցելու փորձերը կարող են վնասել երկու գործընթացներին էլ:*

-Արդեօ՞ք ՀԱԿ-ի կողմից ներքին ճնշում կա՞ր բանակցութիւններից դուրս գալու պահանջով:

*-Ոչ միայն Հայաստանում, այլեւ Սփիւռքում բազմաթիւ հայերի դժգոհութիւնը պայմանաւորուած է Թուրքիայի հանդէպ վստահութեան պակասով: Եւ կասեցման պատճառը պայմանաւորուած է հենց այն գործօնով, որ այսօր Թուրքիան չի կարող յարգել ձեռք բերուած համաձայնութիւնները, իր պարտաւորութիւններն ու խոստումները:*

-Որոշ ժամանակ Թուրքիան կարծես թէ բաց էր յարաբերութիւնների կարգաւորման համար, բայց այնուհետեւ կտրուկ փոխեց իր վերաբերմունքը: Դուք ունէ՞ք բացատրութիւն, թէ ինչու Էրդողանը արեց դա:

*-Չեմ կարող ասել, որ ոչ ոք չգիտի ինչու, միայն կարող եմ ասել, որ գրեթէ ոչ ոք չի հասկանում:*

-Թուրքիայի վարչապետ Էրդողանը շատ պարզ կերպով սպառնաց արտաքսել հարիւրհազարաւոր հայերի: Արդեօք դա յիշեցնո՞ւմ է 1915-ի զոհերի ողբերգական տեղահանումները:

*-Այդպիսի ակնարկներն ինքնին խօսուն են: Դրանք նշանակում են, ինչն, իհարկէ, ափսոսանք է առաջացնում, որ ժամանակակից Թուրքիայում որոշ առաջնորդներ չեն հրաժարուել օսմանեան շրջանի անհանդուրժողական եւ ռասիստական մօտեցումներից:*

*Իհարկէ, այդ յայտարարութիւնը ցնցող էր բոլորի համար եւ ոչ միայն Հայաստանում: 1914-1915-ին հենց այդպիսի յայտարարութիւններով է սկսուել Հայոց ցեղասպանութիւնը: Աւելի ուշ, 20-րդ դարի վերջին Ադրբեջանում հայկական բնակչութեան ջարդերն ու տեղահանումները եւս ուղեկցւում էին այդպիսի ռասիստական յայտարարութիւններով:*

-Ինչո՞ւ է այդքան կարեւոր Հայաստանի համար, որ Թուրքիան ընդունի «ցեղասպանութիւն» ձեւակերպումը:

*-Գործընթացի ամենասկզբից մենք ասել ենք մեր Թուրք գործընկերներին, որ Հայաստանը երբեք հարցականի տակ չի դնի Հայոց ցեղասպանութեան փաստը կամ դրա միջազգային ճանաչման կարեւորութիւնը:*



*Մենք դիտարկում ենք քսաներորդ դարի առաջին ցեղասպանութեան ճանաչումն ու դատապարտումը ոչ միայն որպէս տուրք զոհերի յիշատակին, այլեւ հետագայ ցեղասպանութիւնները կանխարգելելու կարեւոր միջոց:*

-Դուք լաւատե՞ս էք: Դուք կարծում էք հնարաւո՞ր կը լինի կանխարգելել ապագայ ցեղասպանութիւնները:

*-Հաւանաբար դուք գիտէք, որ Ռաֆայէլ Լեմկինը՝ «ցեղասպանութիւն» տերմինի հեղինակը, ներկայացրել է Հայոց ցեղասպանութիւնն իբրեւ մարդկութեան դէմ այդ ոճրագործութեան արտայայտութեան բացատրութիւն:*

*Մենք չառաջադրեցինք Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանութեան ճանաչումն իբրեւ յարաբերութիւնների կարգաւորման նախապայման, թէեւ դա բաւականին բարդ էր մեզ համար: Թուրքիան պէտք է հաշտուի իր անցեալի հետ, որպէսզի հնարաւորութիւն ունենայ ապագայ կառուցելու: Նելսոն Մանդելան մի անգամ ասել է. «Իրական հաշտեցում չի նշանակում անցեալի սոսկ մոռացում»:*

*Միեւնոյն ժամանակ պէտք է նշեմ, որ Թուրքիայում սկիզբ առան որոշ գործընթացներ եւ շարժումներ՝ միտուած ցեղասպանութեան ճանաչմանը: Մեր կողմից կարգաւորման գործընթացը նախաձեռնելուց անմիջապէս յետոյ որոշ թուրք մտաւորականներ ինտերնետային «Ներողութեան արշաւ» սկսեցին: Մի քանի շաբաթուայ ընթացքում 35.000 մարդ ստորագրեց այդ կոչի տակ:*

*95 տարիների ընթացքում առաջին անգամ, այս տարուայ Ապրիլի 24-ին, Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակը նշուեց Ստամբուլի Թաքսիմ հրապարակում: Ես յուսով եմ, որ մի օր Թուրքիան կը ճանաչի Հայոց ցեղասպանութիւնը: Դա կարեւոր է հենց Թուրքիայի համար: Թուրքիայում շատերը սկսում են հասկանալ դա, իսկ Թուրքիայից դուրս գրեթէ ոեւէ մէկը կասկած չունի այդ առումով:*

-Փաստը, որ Թուրքիան հրաժարւում է անել դա, կարող է կապուած լինել փոխհատուցման պահանջի վախի եւ նոյնիսկ տարածքային պահանջների հետ: Ինչ է պահանջում Հայաստանը, բացի Թուրքիայի կողմից պատասխանատուութեան ընդունումից:

*-Իր անկախացումից սկսած Հայաստանը երբեք որեւէ յայտարարութիւն չի արել տարածքային պահանջների վերաբերեալ: Դժբախտաբար որոշ Թուրքական քաղաքական ուժեր օգտագործում են*

*Շար.ը էջ 19*

# ԻՐԱՐԱՄԵՐԺ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԲԱՑԱՅԱՅՏՈՒՄ ԵՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ

**ԵՐՈՒԱՆԴ ԽՈՍՐՈՎԵԱՆ**

*Պեռլինում աւարտուեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի եւ Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի հանդիպումը: Հանդիպումից յետոյ կողմերը հանդէս են եկել համատեղ մամուլի ասուլիսով:*

*Ներկայացնելով իրենց զրոյցի մանրամասները Թուրքիա-Հայաստան յարաբերութիւնների վերաբերեալ, Մերկելն ասել է, որ, ցաւօք, երկկողմ յարաբերութիւնների գործընթացը յետաձգուեց, վերացաւ, բայց վստահաբար այդ խնդիրը կը լուծուի այն ժամանակ, երբ որ ԼՂՀ խնդիրը լուծուած կը լինի:*

*Ցաւօք, մամուլն Անգելա Մերկելի խօսքերի այս հատուածին կամայ թէ ակամայ չի անդրադարձել, ինչն ամենակարեւոր հատուածն է: Մնացեալ խնդիրների մասին խօսակցութիւնն ու հրապարակաւ յայտարարութիւնները նորութիւն չեն հաղորդում: Հայ-գերմանական երկողմ յարաբերութիւնների, տնտեսական զարգացումների, վիզաների հեշտացման եւ այլ յարաբերութիւնների մասին բազմիցս խօսուել ու յայտարարուել է:*

*Իսկ այն, ինչ վերաբերում է Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններին եւ դրա փոխկապակցուածութեանը ԼՂՀ խնդրի լուծման հետ, բացի Թուրքիայի եւ Ատրպէյճանի պաշտօնական յայտարարութիւններից , ոչ մի երկիր պաշտօնական եւ հրապարակաւ այդ թեմայով հանդէս չի եկել եւ Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնները չի պայմանաւորել ԼՂՀ խնդրի լուծման հետ, որն արեց Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը, այսինքն՝ Գերմանիայի կառավարութիւնից:*

*Պարզւում է, որ Անգելա Մերկելն այդ մասին նաեւ խօսել է Սերժ Սարգսեանի հետ, սակայն թէ ինչ են խօսել պարզ չէ, բայց ինչ էլ որ լինի, եթէ Սերժ Սարգսեանը համաձայն չլինէր Մերկելի այդ գաղափարին, կարող էր տեղում ճշտում մտցներ եւ հերքէր կամ դէմ արտայայտուէր Մերկելի այդ կարծիքին:*

*Երկրորդ խնդիրը վերաբերում է օտարալեզու դպրոցներին: Սերժ Սարգսեանն ասում է, թէ խօսքը մի քանի մասնաւոր օտարալեզու դպրոցների մասին է:*

*«Ամէնից աւելի լաւ ճանապարհը այն է, որ մենք կարողանանք կարճ ժամանակահատուածում բարձրացնել մեր բոլոր դպրոցների մակարդակը, որպէսզի այդ դպրոցներում մեր երեխաները կարողանան ստանալ ժամանակակից մրցունակ գիտելիք: Բայց դրա հետ զուգահեռ մենք ինչո՞ւ պիտի բացառենք միջազգային չափանիշներին համապատասխանող մի քանի մասնաւոր դպրոցների առկայութիւնը»-, մասնաւորապէս ասել է Սերժ Սարգսեանը Պեռլինում հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ՝ ներկայացուցիչների կողմից տրուած հարցին ի պատասխան:*

*Ըստ Սերժ Սարգսեանի, խօսքը մի քանի մասնաւոր դպրոցների մասին է, որտեղ մի քանի առարկաների ուսուցումը, ինչպիսիք են հայոց պատմութիւնը, կրօնի պատմութիւնը եւ այլն, պարտադիր է լինելու ՀՀ քաղաքացու համար:*

*«Բայց եթէ այդ դպրոցներում ուսանեն Ռուսաստանի, Գերմանիայի կամ Ֆրանսայի քաղաքացիներ, արդեօ՞ք մենք կարող ենք նրանց պարտադրել, որպէսզի նրանք անցնեն, ենթադրենք, ֆիզիկան, քիմիան հայերէնով: Դա անհնարին մի բան է, չէ՞: Երեւանում գործում է Ամերիկեան համալսարանը, որտեղ ուսուցումն անգլերէն է, գործում է Հայ-Ռուսական համալսարանը, որտեղ ուսուցումը ռուսերէն է, որից Հայաստանին որեւէ վնաս չի հասցուել: Խօսքը, նորից եմ ասում, մի քանի մասնաւոր դպրոցների մասին է, որոնց պետական պիւտճէից մէկ դրամ էլ չենք յատկացնելու», մեկնաբանել է Սերժ Սարգսեանը:*

*Նախ, ՀՀ նախագահը խօսում է «միջազգային չափանիշներին համապատասխանող դպրոցների» մասին, այսինքն՝ դպրոցներ, որտեղ անկախ ազգութիւնից ուսում կը ստանայ «միջազգային չափանիշներին համապատասխան», իսկ մնացած դպրոցների «մակարդակը բարձրացնել» որպէսզի մեր երեխաները կարողանան ստանալ ժամանակակից մրցունակ գիտելիք: Հարց է առաջանում, թէ ի՞նչ է «միջազգային չափանիշներին համապատասխան» ուսումը, եւ ինչո՞վ է այն տարբերւում հայկական դպրոցների «մակարդակի բարձրացումից՝ ժամանակակից ուսում ստանալուց»: Արդեօ՞ք «ժամանակակից» ասելով նկատի չունենն «միջազգային չափանիշները»: Եթէ դա նկատի չունեն, ապա ի՞նչ են հասկանում «ժամանակակից» ասելով, երեւանեան ժամանակո՞վ է դա չափորոշւում:*

*Հին մի ասացուածք կայ. «Զգիտես մոլլայի մօրուքին հաւատաս, թէ աքլորի պոչին»: Ըստ ԿԳ Նախարար Արմէն Աշոտեանի, խօսքը Հայաստանի դըպրոցների 2 տոկոսի մասին է, այսինքն՝ 15 դպրոց, որոնցից 8-ը՝ Երեւանում, իսկ 7-ը՝ շրջաններում, կ'անցնեն օտարալեզու ուսուցման կամ, ինչպէս իրենք են ասում, «կը համապատասխանեցուեն միջազգային չափանիշներին»: Չնայած յետոյ որոշուեց, որ ոչ թէ 8/7, այլ 9 դպրոց Երեւանում, 2 շրջաններում, բայց դրանից խնդրի էութիւնը չի փոխւում:*

*Սերժ Սարգսեանն ասում է, մի քանի մասնաւոր դպրոցի մասին է խօսքը, նրա կառավարութեան նախարար Արմէն Աշոտեանն այդ «մի քանի դպրոցը» համարում է 8-ը Երեւանի, 7-ը շրջանների, կամ ինչպէս յետոյ որոշեցին՝ 9-ը Երեւանի, 2-ը շրջանների աշխատող դպրոցները: Փաստօրէն ըստ ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի, Հայաստանում այնքան գերմանացի, ռուս եւ այլ երկրների աշխակերտութիւն կայ, որ Հայաստանի 15, կամ 11 աշխատող դպրոցները հազիւ կը բաւարարեն այդ պահանջարկը: Այդ ո՞ր շրջաններն են, որ Գերմանացի, Ռուս եւ այլ երկրների դիւանագիտական ներկայացուցչութիւնների երեխաները պէտք է ժամանեն իրենց մայրենի լեզուով ուսուցում ստանալու: Երեւանում ինչքա՞ն օտարալեզու երեխաներ կան, որ 9-ը դպրոց պէտք է յատկացուի նրանց:*

*Սերժ Սարգսեանի խօսքով՝ մի քանի տարի առաջ Հայաստանը կրթութեանը յատկացնում էր Հայաստանի ՀՆԱ-ի մէկ տոկոսը: Այսօր արդէն, 2010 թ. պիւտճէով, կրթութեան ծախսերը մօտենում են չորս տոկոսի: «Սա մի քիչ աւելի է, քան մենք յատկացնում ենք մեր բանակին...»: Ինչքան շատ են խօսում, այնքան պարզ է դառնում ամէն ինչը: 2005 թ. տուեալներով Հայաստանի պաշտպանութեան պիւտճէն կազմել է համախառն ներքին արդիւնքի (ՀՆԱ) 3,6 տոկոսը, իսկ եթէ հինգ տարի անց, այսինքն 2010 թ. Հայաստանի պաշտպանութեան պիւտճէն «միքիչ» ցածր է ԿԳ տրամադրուողը տոկոսից, էլ ի՞նչ խօսք այն մասին, թէ մեր բանակը այսօր աւելին է պատրաստուած քան երբեւէ:*

*Վերոնշեալ հակասական յայտարարութիւնները վկայում են այն մասին, որ մեր իշխանաւորները, կամ մէկ միւսից լուր չունի, կամ էլ փորձում են մէկ միւսի արարքը արդարացնել: Հայաստանի նախագահը Պեռլինում ուղղակի փորձեց խնդիրը այլ կերպ ներկայացնել ժողովրդին հանգստացնելու համար, ինչպէս դա անում էր «Ֆուտպոլային դիւանագիտութեան» ընթացքում՝ Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնների կարգաւորման վերաբերեալ Թուրքիայի կողմից բացայայտ նախապայմանները՝ առանց նախապայմանների յարաբերութիւն ներկայացնել:*

**AGBU ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION**
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ
55 East 59th Street, New York, NY 10022-1112 U.S.A. T: 212 319-6383 • F: 212 319-6507/08 • E: agbuny@agbu.org • W: www.agbu.org

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան ("Միութիւն") Կեդրոնական Վարչական Ժողովը այսու կը ծանուցէ Միութեան բոլոր իրաւասու անդամներուն թէ Միութեան 86-րդ Ընդհանուր Ժողովը պիտի գումարուի Շաբաթ, 16 Հոկտեմբեր 2010, առաւօտեան ժամը 11-ին, Ալէք Մանուկեան Կեդրոն, 1322 Արմենիա փողոց, Պուէնոս Այրէս, Արժանթին։

Սոյնը 86-րդ Ընդհանուր Ժողովին գումարման մասին տրուող միակ ծանուցագիրն է։ Հետեւաբար, Միութեան իրաւասու անդամներէն կը խնդրենք որ անձնապէս ներկայ գտնուին ժողովին, վերոյիշեալ թուականին եւ վայրը, եւ կամ ամենէն ուշը մինչեւ Սեպտեմբեր 10, 2010 իրենց փոխանորդագրերը, – Հիմնական Կանոնագրի տրամադրութեանց համաձայն գործադրուած եւ վաւերացուած, – հասցնեն կամ յանձնեն Կեդրոնական Վարչական Ժողովի ատենադպիրին հետեւեալ հասցէով.–

Armenian General Benevolent Union
Central Board of Directors
55 East 59th Street
New York, NY 10022-1112, U.S.A.

ԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳ

1. Ներկայացում եւ վաւերացում 2008 եւ 2009 տարեշրջաններու Միութեան ընդհանուր բարոյական տեղեկագրին։
2. Ներկայացում եւ վաւերացում 2008 եւ 2009 տարեշրջաններու Միութեան ընդհանուր նիւթական տեղեկագրին։
3. Մասնակի ընտրութիւն Կեդրոնական Վարչական Ժողովի անդամներու։
4. Ընտրութիւն Հաշուեքննիչ Յանձնախումբի անդամի մը։
5. Քննարկում վերոնշեալներուն առնչուող որեւէ հարցի, ինչպէս նաեւ ժողովի առջեւ բերուող եւ անոր աշխատանքներու ընթացքին ըստ պատշաճի արծարծուող հարցերու, ներառեալ Կանոնագրի բարեփոխումներ։
6. Քննարկում Ընդհանուր Ժողովի առաջարկներու եւ բանաձեւերու։

Ի Դիմաց
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

Պերճ Փափազեան, Ատենադպիր
Պերճ Սեդրակեան, Նախագահ

Յունիս 18, 2010

# ԱՐՇԻԼ ԿՈՐՔԻ-ՈՍՏԱՆԻԿ ԱՏՈՅԵԱՆ
## Կեանքն ու Սխրալի Գործը

Ծանօթութիւն: Յունիսի 27ին, Միշըն Հիլզի Արարատ Ծերանոցի Էսքիճեան թանգարանին մէջ տեղի ունեցաւ շահեկան դասախօսութիւն մը նուիրուած Արշիլ Կորքիի նկարչական արուեստին: Պոլսահայ Միութեան եւ NAASR-ի կողմէ նախաձեռնուած սոյն միջոցառումին գլխաւոր զեկուցաբերն էր ծանօթ գրող Սարգիս Վահագն, որուն ելոյթը կու տանք ստորեւ:

Խմբ.

*ՍԱՐԳԻՍ ՎԱՀԱԳՆ*



*Արշիլ Կորքի եւ մայրը նկարուած Վանի մէջ*



*Արշիլ Կորքիի «Մայր եւ Տղան»*

*Զարմանալի ժողովուրդ ենք. 2004-ին, երբ Արշիլ Կորքի-Ոստանիկ Ատոյեանին ծննդեան հարիւրամեակն էր, մեր հանրային կարծիքն ու մշակութային մարմինները, բացառութեամբ Կորքիին կեանքին եւ գործերուն նուիրուած վէպիս շնորհահանդէսէն, մնաց անտարբեր, հակառակ անոր որ ամերիկեան արուեստաբանական մարզէն ներս, երեսունէ աւելի հատորներով գովերգուած ու փառաբանուած էր Արշիլ Կորքիին անմահական գործը, եւ մենք, որ ընդհանրապէս կը սիրենք հպարտանալ մեր արժէքներով, մանաւանդ երբ անոնք արժանացած են արդէն օտարներու հիացումին ու գովեստին՝ տարօրինակ լռութեամբ մը գլացանք մեր յարգանքի տուրքը վճարել Կորքիին: Բարեբախտաբար, այս օրերուն, Կորքիի գործերուն յետահայեաց ցուցադրութիւնը Ֆիլատելֆիայի եւ Լոնտոնի մէջ բազմութիւններուն ուշադրութեան եւ գնահատանքին արժանանալէն ետք երբ կը հասնի Լոս Անճելըս, Արդի Արուեստի Թանգարանը, կարծէք յանկարծ կը վերագտնենք մեր հին ունակութիւնը՝ հետեւելու համար գնահատանքի եւ յարգանքի միջազգային շարժումին, մեծարելու համար յիշատակն ու անգնահատելի վաստակը մեր ամենէն տաղանդաւոր եւ համաշխարհային հռչակի տիրացած նկարիչ Արշիլ Կորքիին: Այդ երկար հանդիսութեանց մէկ օղակն է այսօրուայ այս ձեռնարկը, որուն համեստ իմ բաժինս բերելու հրաւիրուած եմ Պոլսահայ միութեան եւ ՆԱԱՍՐ-ի կողմէ: Շնորհակալութիւն՝ զոյգ միութիւններուն:*

*Արշիլ Կորքիին մեծութիւնը, անտարակոյս, իր հանճարեղ գործերուն մէջ կը կայանայ: Առանց դոյզն վարանումի կրնանք հաստատել, թէ Ամերիկեան այս հսկայ երկրին նկարչական ամենայատկանշական յեղափոխութիւնը իրագործեց, Վանայ Ծովուն ափունքներէն, Խորքոմ համեստ գիւղէն ընձիւղուած եւ ճակատագրի դառն հողմամրրիկով Նիւ Եորքի խառնարանին մէջ նետուած այս տեսլապաշտ, հանճարեղ տղան, Ոստանիկ Ատոյե՛անը՝ Արշիլ Կորքի հնչեղ ծածկանունով: Քննադատներ եւ տեսաբաններ «Վերացապաշտ Արտայայտչականութիւն» որակումով մկրտեցին այդ շարժումը, որ վերջ դնելով ամերիկեան գաւառային, անհեռանկար եւ անտեսիլ նկարչութեան, ստեղծեց պանծալի հոյլ մը իրաւ արուեստագէտներու, որոնք եւրոպական ծաղկեալ եւ բազմերանգ նկարչութեան կողքին կերտեցին իրենց յառաջապահ արուեստը:*

*Այս իրագործումը սակայն չեղաւ հեզասահ հեշտութեամբ, այլ ձեռք բերուեցաւ անհուն զոհողութեան եւ անհաշիւ զրկանքներու գնովը, Կորքիին եւ անոր շուրջ համախմբուած սրբազան խենթ տղոց, որոնց, ամերիկեան կարծր նիւթապաշտ հասարակութիւնը ժամանակին չգիտցաւ արժանին մատուցանել, զանոնք դատապարտելով չքաւորութեան, մոռացութեան եւ ապա հուսկ ուրեմն՝ անձնասպանութեան: Այդ սերունդէն չորսը ինքնասպան եղան: Իսկ երկուքը՝ ալքոլամոլութեան զոհ գացին:*

*Կորքիին կեանքն ու ճակատագիրը սակայն, իր ահաւոր բարդութիւններով հասաւ աներեւակայելի դաժանութեան, առաւել՝ իր հայու եւ եղեռնապուրծի տառապանքն ու հոգեկան խռովքը: Դժբախտ պատահարներու երկար ու անվերջանալի օղակներու շղթայում մը բաժին ինկաւ իր կարճատեւ կեանքին:*

*Ան ծնաւ 1904-ին, Սեդրակ եւ Շուշան Ատոյեաններու համեստ յարկին տակ, Վանի Խորգոմ գիւղին մէջ: Իր դժնդակ ճակատագիրը կը սկսի ձեւաւորուիլ իր ծնունդէն իսկ առաջ: Մօր հայրը, Տէր Սարգիս քահանայ Տէր Մարտիրոսեանը, Եւա քոյրն ու կտրիճ Նշան եղբայրը, ինչպէս նաեւ՝ առաջին ամուսինը Թովմաս Բրուտեանը, հերոսական մահով զոհուեր էին, 1898-ի ջարդերուն, զէնք ի ձեռին, Թուրք վոհմակներուն դէմ հերոսական դիմադրութիւն ցուցաբերելով: Որպէս յուսահատ հակադարձութիւն այս ողբերգական պատահարներուն, մօր մայրը, Համասփիւռ երէցկինը, Աստուծոյ հետ քէն կապելով, որպէս վրիժառութիւն, անէծքը շրթներուն, կրակի տուեր էր Ոստան չէնի, իրենց գերդաստանի կալուած Զարահան Սուրբ Նշան վանքը դարաւոր:*

*Այս նախընթաց դժբախտ եղելութիւնները չէին կրնար իրենց խոր ազդեցութիւնը չթողուլ յետագայ մանուկ Ոստանիկին վրայ: Հոգեբանական այս ջլատումին կու գար նաեւ միանալ, հօր անժամանակ մեկնումը դէպի Ամերիկա, երբ Ոստանիկ չորս տարեկան էր միայն: Ան կ'որբանար առանց որբ ըլլալու: Տարապայման այս իրադրութեան մէջ, մայրը, Շուշանիկ տիկինը, իր երեք անչափահաս աղջիկներով եւ միակ տղայով անպաշտպան եւ անապահով մնացած՝ անել կացութեան կը մատնուի, երբ ամուսնին եղբայրներն ալ իրենց ընտանիքներով կը սկսին հալածել ու նախատել զիրենք: Լուծումը կ'ըլլայ հեռանալ: Ընտանիքը կ'ապաստանի Վանի Այգեստան գիւղը:*

*Բայց անախորժ այս պատահարէն անկախ, Ոստանիկ, Խորգոմ իրենց գիւղին մէջ, կ'ապրի երազային մանկութիւն մը, Վանայ Լճին*

*Շար.ը էջ 16*

NEW LOOK DENTAL
DIGITAL X-RAY
invisalign Ceritfied
Dental Lab on Premises
Լաբորատորիան Գտնվում է Բուժարանում
GENERAL & COSMETIC DENTISTRY FOR ADULTS & KIDS
Lousine Vahagn Kirakosian, D.D.S. University of Southern California
• TEETH WHITENING
• PERIODONTAL TREATMENT
• PREVENTIVE DENTISTRY
• SURGICAL EXTRACTIONS
• VENEERS, CROWNS
• BRIDGES, FILLINGS
• ROOT CANAL TREATMENT
• REMOVABLE DENTURES (PARTIAL & FULL)
• DENTAL IMPLANTS
• NIGHT GUARDS
• ԱՏԱՄՆԵՐԻ ՃԵՐՄԱԿԵՑՈՒՄ
• ՔԱՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՒ ԼՆԴԵՐԻ ԽՆԱՄՔ
• ԿԱՆԽԱՐԳԵԼՈՂ ԱՏԱՄՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ
• ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆ
• ԵՐԵՍԻԿՆԵՐ (VENEERS), ԾԱՊԻԿՆԵՐ
• ԿԱՄՈՒՐՋՆԵՐ, ՊԼՈՄԲՆԵՐ (FILLINGS)
• ԱՏԱՄՆԱԶԴԻ ՀԵՌԱՑՈՒՄ
• ՇԱՐԺԱԿԱՆ ԱՏԱՄՆԱՇԱՐ (ՄԱՍՆԱԿԻ ԵՒ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ)
• ԱՏԱՄԻ ՆԵՐՏՈՒՆԿ
ՎՆԱՍՎԱԾ ԱՏԱՄՆԱՇԱՐԻ ԱՐԱԳ ՆՈՐՈԳՈՒՄ
818.478.1314
321 E. Alameda Ave. Unit J• Burbank, CA 91502
Fax: 818.842.8331 • Email: info@newlookdentalinc.com
www.newlookdentalinc.com

## ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆ
# ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԸ



*ԼԻՆՏԱ ԳԱՆՏԻԼԵԱՆ*

Ուսումնական տարի մը եւս հասաւ իր աւարտին՝ ետին ձգելով բեղուն գործունէութիւն, ամբողջացած ծրագիրներ, նուաճումներ եւ յաջողութիւններ, որոնք ասկէ ետք պիտի պատկանին վարժարանի 25ամեայ պատմութեան: Իւրաքանչիւր ուսումնական տարի իրեն հետ պատմութեան էջերուն կը խառնէ նաեւ խումբ մը աշակերտներ, որոնք կ՛ըլլան այդ տարուան շրջանաւարտները:

Հայ քոյրերու վարժարանը այս տարի եւս ունեցաւ զոյգ աւարտական հանդէսներ՝ մանկապարտէզի եւ միջնակարգի համար:

Յունիս 12ին առաւօտեան տեղի ունեցաւ մանկապարտէզի հանդէսը, վարժարանիս «Դանիէլեան» սրահին մէջ, ներկայութեամբ՝ Կլենտէյլի Հայ կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ ժողովրդապետ Անտոն վրդ. Սարոյեանի, առաքինազարդ քոյրերուն, հիւրերու, ծնողներու եւ մեծ ծնողներու:

Հանդիսութիւնը սկսաւ մանկապարտէզի տնօրէնուհի Սօնա Գազանճեանի բացման խօսքով. ան ծնողներուն ներկայացուց մանկապարտէզի կատարելագործած ծրագիրները եւ հաստատեց, թէ անոնք՝ այսօրուան վկայեալները, արդէն իսկ պատրաստ են երթալու նախակրթարանի առաջին դասարան:

Աւարտական աշակերտները ներկայացուցին իրենց սորված երգերը, արտասանութիւններն ու պարերը, համարձակ եւ ինքնավստահ՝ խանդավառելով ծնողներն ու բոլոր ներկաները: Անոնք իրենց երգերով, արտասանութիւններով ու պարերով կազմեցին ծաղիկներու գունագեղ փունջ մը՝ քաղուած ՀՔ վարժարանի մանկապարտէզէն, եւ իբրեւ անմոռանալի նուէր՝ ձօնեցին իրենց ծնողներուն, ապա վկայուեցան ու հրաժեշտ տալով անհոգ մանկութեան՝ անցան նախակրթարան:

Հանդիսութիւնը փակուեցաւ վարժարանիս տնօրէնուհի քոյր Լուսիայի փակման խօսքով: Տնօրէնուհին շնորհաւորեց բոլոր ծնողները եւ շնորհակալութիւն յայտնեց ուսուցչական կազմին՝ իրենց նուիրեալ աշխատանքին եւ մասնաւորապէս՝ այդպիսի եզակի ու յաջող հանդիսութիւն մը պատրաստած ըլլալնուն համար:

Ութներորդ դասարանի պարագային, աշակերտները ոչ միայն հրաժեշտ պիտի տային ուսումնական միջնակարգ շրջանին, այլ նաեւ պիտի բաժնուէին իրենց երկրորդ տունը դարձած վարժարանէն, երթալու համար այլազան երկրորդական վարժարաններ, իրենց հետ տանելով Հայ քոյրերու վարժարանէն իրենց աւանդ տրուած քրիստոնէական եւ ազգային արժէքներն ու տարրական գիտելիքները:

Վարժարանէն ներս գեղեցիկ աւանդոյթ դարձած է Ը. կարգի աւարտականներու հրաժեշտի արարողութիւնը սկսիլ եկեղեցական Ս. պատարագով: Արդարեւ, Կիրակի, Յունիս 6ին, Կլենտէյլի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին տարբեր հանդիսաւոր երեւոյթ մըստացած էր: Ս. պատարագի արարողութեան կը մասնակցէին ՀՔ վարժարանի աւարտական դասարանի աշակերտները: Անոնք եկած էին եկեղեցի՝ իրենց երախտագիտական զգացումները յայտնելու Աստուծոյ, իրենց հոգիներուն մէջ քրիստոնէական առաջին սերմերը ցանող առաքինազարդ քոյրերուն, իր պատարագներով եւ դաստիարակիչ քարոզներով գիրենք յորդորող վարդապետին, դաստիարակներուն ու ծնողներուն, նաեւ իրենց ուխտը կատարելու՝ խոստանալով ըլլալ լաւ քաղաքացիներ եւ պատուաբեր հայ քրիստոնեաներ:

Տասնինը շրջանաւարտները մասնակցեցան պատարագի արարողութեան: Ընթերցումները կարդացին՝ անգլերէնով Ռիթա Պաստէքեան, հայերէնով՝ Սարին Քէշիշեան, իսկ իրենց սրտին խօսքը երկլեզու ներկայացուցին Նարեկ Խոտանեան եւ Ալեք Քիւրքճեան: Յուզումնալից արարողութեան աւարտին, ծնողք, աշակերտ, դաստիարակ, հոգեկան մեծ բաւարարութեամբ վերադարձան տուն՝ կրկին հանդիպելու յաջորդ Կիրակի, աւարտական պաշտօնական հանդիսութեան:

Յունիս 13ի յետմիջօրէին տեղի ունեցաւ վարժարանիս ութներորդ դասարանի աշակերտներու աւարտական հանդիսութիւնը, ուր ներկայ էին Կլենտէյլի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ ժողովրդապետ Անտոն վրդ. Սարոյեան, առաքինազարդ քոյրերը, դաստիարակներ, ուսուցիչներ, ծնողներ եւ հիւրեր: Փոխանցուեցան պաշտօնական խօսքեր՝ անգլերէնով եւ հայերէ-

Շար.ը էջ 19

## ՄԻՇԻԿԸՆԻ Հ. Բ. Ը. Մ. ԱԼԵՔ ԵՒ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ
## 29 ՇՐՋԱՆԱՒԱՐՏՆԵՐ ՁԵՌՔ ՁԳԱԾ ԵՆ 1,200.000 ՏՈԼԱՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐ



Իսկապէս յաջողութիւններով լի տարեշրջան մը եղաւ 2009-2010 կրթական տարին Հ.Բ.Ը.Մ.ի Ալեք եւ Մարի Մանուկեան վարժարանին համար: Աշնան՝ դպրոցի հիմնադրութեան փառաշուք հանդիսութիւններէն ու նոր եւ արդիական երկրորդական մասնաշէնքի բացումէն ետք, ահա տարին կ՛եզրափակուէր Յունիս 1, 2010-ին նախատեսուած դպրոցի շրջանաւարտից հանդիսութեամբ:

Այս տարուան 29 շրջանաւարտները իրենց փայլուն ուսումնական արդիւնքներով եւ ձեռք ձգած 1,200.000 տոլար համալսարանական կրթաթոշակներով գերազանցեր էին բոլոր կանխատեսումները: Դպրոցի տնօրէնութեան բերկրանքը կրկնապատկուեցաւ երբ յայտնի դարձաւ թէ ընդառաջելով վարժարանիս հրաւէրին, Հ.Բ.Ը. Միութեան Նախագահ Տիար Պերճ Սեդրակեան ներկայ պիտի գտնուէր 12րդ դասարանի շրջանաւարտից հանդիսութեան, փոխանցելու օրուան պատգամը:

Երեքշաբթի, Յունիս 1ի առաւօտուն, դպրոցի մուտքին երկու շարքով շարուած աշակերտները ջերմապէս դիմաւորեցին Հ.Բ.Մ. Միութեան Նախագահը, որ ծափահարութիւններով առաջնորդուեցաւ դէպի տնօրէնութեան գրասենեակ: Կարճ հիւրասիրութենէ եւ հոգաբարձութեան անդամներուն հետ ծանօթացման հանդիպումէն ետք, Նախագահը շրջեցաւ դպրոցը եւ այցելեց կարգ մը դասարաններ ուր ան կը զրուցէր աշակերտներուն հետ: Պրն. Սեդրակեան տպաւորուած էր յատկապէս դպրոցին բարեկարգութեամբ ու արդիական յարմարութիւններով:

Դպրոցի աշակերտները մանկապարտէզէն մինչեւ 12րդ դասարան, կէսօրին հաւաքուած էին նորակառոյց երկրորդական վարժարանի հանդիսասրահը, Միութեան եօթներորդ նախագահին պաշտօնապէս դիմաւորելու հայկական երգ ու պարով յագեցած հանդիսութեամբ: Գեղարուեստական յայտագրի աւարտին, դպրոցիս հայկական բաժանմունքի պատասխանատու պրն. Սեպուհ Աւետիքեան ներկայացնելով նախագահ Սեդրակեանը բեմ հրաւիրեց զայն իր սրտի խօսքը փոխանցելու աշակերտութեան:

Պրն. Սեդրակեան ողջունելով աշակերտները բարձր գնահատեց դպրոցի տնօրէնութեան ու հոգաբարձութեան աշխատանքը, որ այսպիսի բարձր ուսումնական մակարդակով ու հայկականութեամբ առլի դպրոց մը կը ղեկավարեն Միշիկընի մէջ, բարձր պահելով Միութեանս վարկն ու պատիւը. ան մաղթեց յարատեւութիւն եւ նորանոր ուսումնական յաջողութիւններ:

Նոյն օրը երեկոյեան, ժամը ճիշդ եօթին, Ս. Յովհաննէս եկեղեցւոյ հանդիսասրահին մէջ, շրջանաւատից հանդիսութիւնը ընթացք առաւ մուտքովը 29 հպարտ շրջանաւարտներուն: Բեմին վրայ տեղ գրաւեր էին Նախագահ Պերճ Սեդրակեան, վարժարանիս հոգաբարձութեան ատենապետ դոկտ. Ռիչըրտ Մարպըրկըր, տնօրէններ՝ օրդ. Տայանա Գըզըլեան ու դոկտ. Յովսէփ Թորոսեան, ինչպէս նաեւ դպրոցիս աւագ ուսուցչուհիները եւ դասատուներ:

Քայլերգներու յոտնկայս ունկնդրութենէ ետք բարի գալուստի ու բացման խօսքերով յաջորդաբար հանդէս եկան երկրորդական վարժարանի աւագ ուսուցչուհի Ճուտիթ Գատրի, երկրորդական վարժարանի տնօրէն դոկտ. Յովսէփ Թորոսեան եւ հոգաբարձութեան ատենապետ դոկտ. Ռիչըրտ Մարպըրկըր. իսկ տարուան ընթացքին դպրոցիս կատարուած նուիրատուութիւնները ներկայացուց միջնակարգի ու նախակրթարանի տնօրէնուհի օրդ. Տայանա Գըզըլեան:

Տնօրէն դոկտ. Թորոսեան իր խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնելով ուսուցչական կազմին ու հոգաբարձութեան, շեշտեց որ այս տարուան հունձքը դպրոցի քառասնամեայ պատմութեան մէջ ամենայաջողն է իր ուսումնական արդիւնքներով, ինչ որ վկայութիւնն է դպրոցի յարաճուն վերելքին: Ան շնորհակալութիւն յայտնեց Միութեան արժանաւոր նախագահին, որ հակառակ իր զբաղ ժամանակացոյցին չմերժեց դպրոցիս հրաւէրը եւ ահա այսօր այստեղ է կատարելու Յուսկ Բանքը: Տնօրէն Թորոսեան հանգամանօրէն ներկայացնելէ ետք Հ.Բ.Ը. Միութեան Նախագահը հրաւիրեց զայն բեմ:

Նախագահ Սեդրակեան շնորհակալութիւն յայտնելով այս հրաւէրին՝ եւ իրենց ցոյց տրուած ջերմ ընդունելութեան համար, խօսքը սկսաւ շնորհաւորելով շրջանաւարտները, որոնք կու գային միանալու Միութեան դպրոցներէն շրջանաւարտ հազարաւոր աւարտականներու փաղանգին:

Շար.ը էջ 18

# Massis Weekly

Volume 30, No. 24 Saturday, JULY 03, 2010


## Presidents of United States, France and Russia Issue Joint Statement on Karabakh Conflict Resolution

The United States, France and Russia on Saturday pledged to support Armenia and Azerbaijan as they try to agree basic principles for settling a dispute over Nagorno-Karabakh.

U.S. President Barack Obama, joined by French President Nicolas Sarkozy and Russian President Dmitry Medvedev, said both sides had made a significant step in accepting the overall framework of a deal and now needed to work on details.

"Now the presidents of Armenia and Azerbaijan need to take the next step and complete the work on the basic principles to enable the drafting of a peace agreement to begin," the three leaders said in a joint statement issued during a Group of Eight meeting in Canada.

The three powers' joint statement on Saturday said the so-called "Helsinki principles" now recognized by both sides relate to the return of the territories surrounding Nagorno-Karabakh and controled by Armenian forces, interim status for Nagorno-Karabakh guaranteeing security and self-governance and a corridor linking Armenia to Nagorno-Karabakh.

The framework also calls for the final status of Nagorno-Karabakh to be determined by a legally-binding vote and the right of all internally-displaced persons and refugees to return.

Here is the full text of the statement:

Joint Statement On The Nagorno-Karabakh Conflict by Dmitry Medvedev, President Of The Russian Federation, Barack Obama, President Of The United States Of America, and Nicolas Sarkozy, President Of The French Republic

Muskoka, 26 June 2010

We, the Presidents of the OSCE Minsk Group's Co-Chair countries, France, the Russian Federation, and the United States of America, reaffirm our commitment to support the leaders of Armenia and Azerbaijan as they finalize the Basic Principles for the peaceful settlement of the Nagorno-Karabakh conflict.

We welcome as a significant step the recognition by both sides that a lasting settlement must be based upon the Helsinki Principles and the elements that we proposed in connection with our statement at the L'Aquila Summit of the Eight on July 10, 2009, relating to: the return of the occupied territories surrounding Nagorno-Karabakh, interim status for Nagorno-Karabakh guaranteeing security and self-governance, a corridor linking Armenia to Nagorno-Karabakh; final status of Nagorno-Karabakh to be determined in the future by a legally-binding expression of will, the right of all internally-displaced persons and refugees to return, and international security guarantees, including a peacekeeping operation.

Now the Presidents of Armenia and Azerbaijan need to take the next step and complete the work on the Basic Principles to enable the drafting of a peace agreement to begin. We instruct our Ministers and Co-Chairs to work intensively to assist the two sides to overcome their differences in preparation for a joint meeting in Almaty on the margins of OSCE Informal Ministerial.

### SD Hunchakian Party Statement

The Social Democratic Hunchakian Party (SDHP) commends the statement of Presidents Barack Obama, Nicolas Sarkozy and Dmitry Medvedev on the Karabakh issue and states that.

1. Peace and security in the region are beneficial not only to the

Continued on page 4

## Clinton to Tackle Nagorno-Karabakh, Georgia Issues During Trip

Officials say Secretary of State Hillary Clinton will discuss lingering problem issues from the 2008 Russia-Georgia conflict, and the Nagorno-Karabakh dispute between Armenia and Azerbaijan in the trip to eastern Europe and the Caucasus region she begins Thursday. Clinton will visit Poland, Ukraine, Azerbaijan, Armenia and Georgia in the five-day trip.

The trip will be Clinton's first to the Caucasus region since taking office, and an opportunity to hear first-hand from leaders there on lingering territorial disputes that have hampered the political emergence of the former Soviet republics.

The brief 2008 war between Georgia and Russia left Russian troops occupying the breakaway Georgian regions of South Ossetia and Abkhazia despite international calls for a return to the pre-war status quo.

Briefing reporters on the trip, Assistant Secretary of State for European Affairs Philip Gordon said the Obama administration is dissatisfied with Russia's failure to date to live up to cease-fire requirements.

"We respect Georgia's sovereignty and territorial integrity, and we

Continued on page 2

## Freedom House Report Notes No Progress in Armenia's Democracy

In an 18-page report on Armenia published on Tuesday, Freedom House (www.freedomhouse.org) notes no particular progress made by the country in such spheres as electoral, civil society, independent media, governance, judicial framework and independence, corruption, and others.

The bottom-line Democracy Score for Armenia presented by the "Nations in Transit 2010" report (which focuses on about three dozen countries and covers the period of 2009) is thus identical with that given for the previous year of review, 5.39 (on a scale of 1 to 7, with 1 representing the highest level of democratic progress).

Armenia's regional neighbor Georgia is doing a little better, according to Freedom House, although it too fails to show year-on-year progress with its Democracy Score standing at 4.93. Azerbaijan has a lower score than Armenia (6.39, which is a slight regression from the 2009 score of 6.25).

In its executive summary the report authored by Aleksander Iskandaryan, an analyst and Director of the Yerevan-based Caucasus Institute, notes that "polarization of the society as a result of the 2008 post-election unrest gradually subsided and transformed into public apathy" and

Continued on page 3

## US Diplomat Warns Turkey of Eroding Support, Urges Ankara to Demonstrate Commitment to West

The remarks by Philip Gordon, the Obama administration's top diplomat on European affairs, were a rare admonishment of a crucial NATO ally.

"We think Turkey remains committed to NATO, Europe and the United States, but that needs to be demonstrated," Gordon told The Associated Press in an interview. "There are people asking questions about it in a way that is new, and that in itself is a bad thing that makes it harder for the United States to support some of the things that Turkey would like to see us support."

Gordon cited Turkey's vote against a U.S.-backed United Nations Security Council resolution on new sanctions against Iran and noted Turkish rhetoric after Israel's deadly assault on a Gaza-bound flotilla last month. The Security Council vote came shortly after Turkey and Brazil, to Washington's annoyance, had brokered a nuclear fuel-swap deal with Iran as an effort to delay or avoid new sanctions.

Some U.S. lawmakers who have

Continued on page 4

## Senator Robert Byrd Dies at Age 92

### Longest Serving Legislator Opposed to Affirmation of the Armenian Genocide

Washington, DC - Democratic Senator Robert C. Byrd of West Virginia passed away June 28 at the age of 92, making him the longest serving senator in U.S. history and the longest serving legislator opposed to U.S. affirmation of the Armenian Genocide.

Resorting to filibuster in order to halt a vote on the 1990 Armenian Genocide resolution introduced by Kansas Republican Senator Robert Dole, Byrd forced a cloture vote, a procedure requiring 60 votes, a threshold higher than a simple majority because Senator Dole had lined up the necessary support to pass the resolution.

Byrd's filibuster tactics generated a two-day debate on the Senate floor on February 21 and 22 between Byrd and Dole, giving occasion for many proponents and opponents to make additional floor statements. Senator Dole described the debate as a contest between David and Goliath as Byrd sought to characterize the resolution as a move against the modern Republic of Turkey. Byrd's unusually strong protection of Turkey had a chilling effect on U.S. affirmation of the Armenian Genocide and other human rights legislation.



Byrd remained a consistent supporter of Turkey and was honored by the Assembly of Turkish American Associations with its Highest Honor Award. Turkish media reporting Byrd's death called him Turkey's best friend in the U.S. Senate.

Taking a page out of the denialist playbook and citing sources manufactured by the Turkish Embassy, Byrd went so far as to say that "historians do not agree on what happened in the Anatolia region of the Ottoman Empire between 1915 and 1923.Byrd objected to the Armenian Genocide resolution by insisting that "Turkey is one of our most vital strategic allies."

# Karabakh Analysis:
## G8 Statement/Hillary Visit Raise Expectations and Concerns

**By Naira Hayrumyan**
**ArmeniaNow correspondent**

The statement by the Presidents of Russia, the United States and France on the Karabakh conflict issued from the G8 Summit in Canada over the weekend instantly caught the attention of politicians as well as pundits and political analysts, generating plenty of commentary on both sides.

The first impression of the statement is that the U.S. and Russia have managed to come to agreement over one of the key issues, on which they previously had disagreements – namely, whose troops will serve as peacekeepers in Nagorno-Karabakh. The U.S. has always opposed the presence of only Russian troops in Karabakh, especially in the areas bordering on Iran. Russia recently seconded a U.S. proposal to introduce new sanctions against Iran, and it is not ruled out that an arrangement on peacekeepers in Karabakh is part of the package of issues agreed by the U.S. and Russia. Information was circulated by the Forum of Armenians of Europe alleging that the United States and Russia had agreed that American troops would be deployed in Fizuli, on the border with Iran, and Russian troops would be deployed in Kelbajar. (Fizuli and Kelbajar are two of seven districts controlled by the Karabakh military around the territory of the former autonomous republic of Soviet Azerbaijan proper). Nor is it excluded that peacekeepers will enter jointly under the United Nations auspices.

That such an option is likely is evidenced by recent tough statements by Iran's ambassador to Armenia that Tehran will not tolerate the presence of American troops in Karabakh.




Nevertheless, the border with Karabakh remains, perhaps, the only sector of the Iranian border, to which Americans have no access. Gaining access to this part of the border, the United States can say with confidence that it has closed the ring around Iran.

The forthcoming visit of U.S. Secretary of State Hillary Clinton to the region also suggests that intensive developments are expected.

Experts believe that the main difference between the so-called "Madrid principles" and the so-called "updated Madrid principles" is that the former referred to the Armenian withdrawal from all seven districts around the former Nagorno-Karabakh autonomous region, and the updated principles call for such withdrawal only from Fizuli and Kelbajar.

Armenia has stated its agreement with the proposed scenario of the settlement, although specific details are not published. Armenian Foreign Minister Edward Nalbandyan said in his reaction to the statement issued by the leaders of the U.S., Russia and France from the G8 summit that "in the coming days it will become clear whether Azerbaijan is ready to move forward along this path, or continue its militaristic mindset, trying to derail the peace talks, taking provocative and unconstructive steps."

Nevertheless, political analyst Igor Muradyan, who stood with demonstrators at the formation of the Karabakh Movement in the late 1980s, believes that time has come for Armenia to end the negotiating process. "Continuation of talks would mean that Armenia capitulates to force-based actions, and that the actions of Azerbaijan are politically legitimate. Continuation of negotiations means political death for the political leadership of Armenia," said Muradyan.

The analyst believes that the statement of the leaders of the United States, Russia and France mean nothing else than a signal about the revival of the previous scheme of simulating negotiations. "They need to stretch time, or better altogether shelve the real process," said Muradyan. In his opinion, it is possible that the "great powers will wait and see which of the parties to the conflict has a nervous breakdown, and will not save the one who shows greater incompetence."

"The answer to force is with force, rather than exiting the negotiating process," said Deputy Foreign Minister Shavarsh Kocharyan in an interview with Armenian Public Television aired at the weekend. According to Kocharyan, continued provocation by Azerbaijan will lead to the international recognition of Nagorno-Karabakh's independence.

And Masis Mailyan, chairman of the NKR Public Council on Foreign Policy and Security Affairs, said in an interview with ArmeniaNow: "Perhaps some of the proposals would have been relevant and attractive to the people of Karabakh 20 years ago. But after a full-scale war initiated by Azerbaijan against the Nagorno-Karabakh population, after thousands of deaths, ethnic cleansings, military occupation and damage done, to offer to the Armenian parties an incomprehensible interim status for Nagorno-Karabakh with a vague "expression of will of its population" in exchange for a sharp reduction of its own security, is at least not serious."

# Long Live Minsk Group!

**By Hakob Badalyan**

The joint statement by the presidents of the OSCE Minsk group co-chairing countries Obama, Sarkozy and Medvedev issued from Canada activated somehow the home political life of Armenia. Talks affirming about some pressure on Armenia, forced "peace", neglect by the co-chairs of Azerbaijan's bellicosity, who instead of condemning it, issue general appeals to maintain peace and ceasefire, are heard.

No doubt, Hillary Clinton's visit to Armenia to take place in a couple of days will enable these conversations live longer, then in Kazakhstan, the Nalbandyan-Mamedyarov meeting will happen within the frameworks of OSCE FMs conference and the home political life will last till August. In August, everyone will calm down trying to find some material to develop because Armenia's home issues gave up being materials for political activities and discussions within our political forces.

If you noticed they become some kind of adjacent phenomena: the situation abroad is hard, football diplomacy caused harms, Turkey entered into the NKR issue, NKR issue embraced a final phase, the patience of the mediators ended, Armenia is repressed, and the government is unable to resist all these challenges because foreign policy is not national, home policy is not just and legal, plus there is almost no economy. In other words, all the issues, the key to the solution of which and their reason are in the home life, merely appeared in the "introduction" of the home political vocabulary. And it seems to be good for everyone to tie home political life to foreign processes, as to the rest- long live Minsk group!

Which the need is to do something new if something new is going to happen, and even if nothing is going to happen, so moreover, which the need is to do anything. This is the prevailing thought in Armenia's political field-starting from opposition ending with the power. Non-governmental initiatives activated in these sphere, which are the only consolation in the current drab, outdated, broken political environment, which perhaps is not capable of creating anything and turned into a full consumer. Here the danger is that these initiatives do not exhaust themselves either: they are so few, while the consumers are numerous and experienced.

# Clinton to Tackle Nagorno-Karabakh

**Continued from page 1**

call on Russia to abide by its commitments in the August 2008 cease-fire, which not only called for the non-use of force and an end to hostilities, but called upon the parties to move their military forces back to where they were before the conflict began, and that hasn't been done," he said.

Gordon said in Armenia and Azerbaijan, Clinton will press the neighbors to live up to commitments under the Minsk Group process aimed at ending their long-running dispute over Nagorno-Karabakh, an Armenian controlled enclave within Azerbaijan. Tensions there have recently flared into violence.

"I think we've seen in some of the violence that has appeared in the region lately that we can't take stability for granted and Armenia and Azerbaijan would both benefit from moving forward in the Minsk Group process, and the Secretary will have a chance in both countries to underscore what the presidents said in Toronto the other day," he said.

ArmenienInfo.net
News. Informationen. Kommentare.

# Giving No Quarter, Jerusalem's Armenians Keep Flame Alive, Fear For Future

**By Alastair Macdonald (Reuters)**

In Jerusalem's Armenian Quarter, a library stores precious memoirs which are all that remain of hundreds of Armenian communities, erased from the map of Turkey a century ago in what many regard as genocide.

Now the Armenians in Jerusalem itself, many descended from refugees, fear their own 1,500-year-old Christian presence may disappear, too. Their society and extensive landholdings risk becoming collateral damage in a demographic conflict for land and power in the holy city between Israel and the Palestinians.

"It's a dying community. Only the church holds us together," lamented 97-year-old Arshalouys Zakarian, as she sat with family and friends in her garden near St. James's Armenian cathedral.

The church, with its distinctive rites and dozens of black clad singing monks, dominates a Quarter which the Armenians, now just 2,000 of them, have held since Ottoman times alongside the Old City's bigger Muslim, Jewish and Christian Quarters.

Over tea, Zakarian's guests, some living locally, others back on visits from overseas, joined in tales of children gone abroad in search of jobs and of struggles, often in vain, with Israeli bureaucracy to retain rights to come back home to live.

"For the first time in our history, we are not sure we can stay, after 1,500 years," concluded one man, now working for the Armenian church after a career spent in the United States. His daughter, born here, can visit, but may no longer live here.

Officials of the church, at the Armenian Patriarchate, share a view held by the mostly Muslim Palestinians -- that Israel's designation of the whole city as capital of the Jewish state means its control of residence and building permits is being used to press Arabs and other non-Jews to give up and leave.

"The withdrawing of ID cards is becoming very serious," said historian George Hintlian, a former Patriarchate secretary. Five local-born Armenians lost residence rights last month, he added.

Non-Jews, a third of today's 750,000 population in greater Jerusalem, have had residence rights but not citizenship since Israel seized the Arab east, including the Old City, from Jordan in 1967. Israel, which promotes Jewish immigration, says it is not obliged to grant re-entry to other residents who emigrate.

It says it respects the access of other faiths to Jerusalem and denies any policy to discriminate or to push non-Jews out. But the Armenians see double standards and fear for their land.

In the library, Hintlian leafs through volumes of memoirs detailing names, families, anecdotes, plans and sketches of lost Armenian communities in Turkey, from where refugees came to Jerusalem after World War One, bolstering the local population.

"What remains of historical Armenia is these books. For a people who suffered genocide, it is very important," he said.

But while many Jews had sympathy for a people whose history of dispersal and suffering has echoes of their own, Armenians are wary of the Israeli state: "For the private Israeli, we are full-time genocide survivors," Hintlian said. "But for the Israeli bureaucracy, we are full-time Palestinians."

Many fear territorial designs on their Quarter, which covers a sixth of the square kilometer (230 acres) inside the walls but houses only a small fraction of the Old City's 40,000 people. It lies next to the Jewish Quarter, ravaged under Jordanian rule after 1948. Israelis have rebuilt and expanded it since 1967.

A rash of spitting at clergy in the street by ultra-Orthodox Jews in recent years add to a sense of siege among a community which traces its roots back to monks and pilgrims who settled in the 5th century. By the mid-1940s, the community numbered 16,000 across Jerusalem and other cities of British-ruled Palestine.

Many were refugees from Turkey who revived Armenian language among native compatriots assimilated in Arabic. They brought, too, colorful ceramic work which still fills their shops today.

Many left when British rule ended in 1948. More followed in 1967. Those who stayed on in the Old City under Israeli rule were cut off from 400,000 other Armenians in the Middle East -- in countries like Syria and Lebanon, at war with Israel. They are part of a global Diaspora of 10 million whose language and religious roots lie in a Caucasian kingdom that was the first to adopt Christianity as a state religion, in 301.

St. James's Cathedral is a serene jewel, hung with precious lamps and treasures donated by Armenians scattered far and wide and infused with the haunting singing of its black cowled monks.

The Armenian Church has parity at Jerusalem's Christian holy places with the much bigger Roman Catholic and Greek Orthodox Churches, 6,000 of whose Palestinian Arab adherents live in the Christian Quarter. Its history, income from local rents and gifts from the Diaspora, should assure the Church's future here. But the lay community surrounding it does question whether future generations will be here; residents say Armenians feel disadvantaged in getting work with Jewish or Arab employers and so move abroad and then face Israeli refusal to allow them back.

"It's a demographic struggle," said Hintlian, as he strolled the quiet courtyards that distinguish the Quarter from the crowded lanes typical of the rest of the Old City. "The basic struggle is to have numbers," he added. "Diplomats say, 'Look, the Armenians have a lot of space and very few people...'."

Among Armenian fears is that Israel and Palestinian peace negotiators might revive an idea to divide sovereignty over the Old City by allotting the Muslim and Christian Quarters to a Palestinian state and handing the Armenian Quarter to Israel.

The end of Communism in Armenia has thrown a lifeline to the church, bringing a supply of novices from the ex-Soviet state, said Archbishop Nourhan Manoogian, who himself came from Syria just before the 1967 war. But having returned now from 20 years abroad, he too faces a problem renewing his residence permit. "What kind of freedom of religion is there?" he asked.

Life can be uncomfortable beyond the walls of the monastery compound. Relations with Muslims have cooled, Manoogian said. There have been fights between Armenian and Greek clergy around Jesus's tomb. And some ultra-Orthodox Jews are openly hostile.

But, consoled by a history that has seen Armenians survive bloodier sieges and regimes in Jerusalem down the centuries, Manoogian has confidence after four decades of Israeli rule: "In another 40 years, we'll still be here," he said.

And for all the anxieties that tinge the nostalgia round the tea table in Arshalouys Zakarian's garden, there too there is a note of cheerful defiance: "The Armenians had a hard life," the retired schoolmistress concluded. "But they are survivors."

The Armenian Quarter in Jerusalem




# Freedom House Report Notes No Progress in Armenia's Democracy

**Continued from page 1**

that "the negative aftermath of the 2008 political crisis and global economic recession was offset somewhat by the moderate success in regional politics."

"Armenia's legislation provides for democracy and rule of law, but executive authorities continue to dominate in governance," notes the report on National Democratic Governance and continues on Judiciary Independence: "The constitution of Armenia provides for an independent judiciary, but in practice, courts are vulnerable to pressure from executive powers."

"The global economic crisis touched almost every sphere of public life and further aggravated the country's atmosphere of insecurity and pessimism," it adds.

The report notes lack of progress in Armenia in the conduct of elections, but says the perception of corruption in Armenia slightly improved in 2009. Even so, it stresses that "corruption still remains a major deterrent to the country's democratic development."

The report's Outlook for 2010 predicts that "Armenia will continue to work toward neutralizing the consequences of the global economic crisis" but "can expect poorer economic prospects" unless relations with Turkey are normalized and the border with it opens.

"Rapprochement with Europe will continue in the framework of the Eastern Partnership project. The unresolved conflict over the breakaway region Nagorno-Karabakh is likely to stagnate while stakeholders continue to make optimistic statements regarding progress in negotiations," it says. "In domestic politics, the main challenge for Armenia is the creation of a level playing field in politics and the emergence of a viable opposition… Given the absence of national elections in 2010, this goal will probably not be achieved during the coming year."

## Anoush Nikoghosyan Wins International Violin Competition




**Sparkasse Competition Director Alois Hochegger, Anoush Nikoghosyan, and Maestro Fabio Luisi, director of the Vienna Symphony Orchestra**

AGBU scholarship recipient Anoush Nikoghosyan, a 20-year-old violinist from Yerevan, won the Kärntner Sparkasse international violin competition in Kärntner, Austria, on June 6, 2010. The competition drew 96 talented young violinists from 30 countries, including Russia, France, U.S.A., Germany, Italy, China, Austria, UK and Japan. Nikoghosyan took home a prize of 10,000 euros, and was also selected for the best performance of a Mozart concerto.

In response to her outstanding placement at the competition, the Vienna Symphony Orchestra, under the direction of the renowned Fabio Luisi, signed Nikoghosyan for two performances in February 2011. She also received 14 different invitations from orchestras and festivals, including the Sapporo Music Festival of Japan.

Nikoghosyan was born in Yerevan in 1990. She studied at the Sayat-Nova Music School of Yerevan from 1995-2003, and graduated from Yerevan State Conservatory in 2005. Today, Nikoghosyan is in her third year at the Munich Music Academy. She is a recipient of the AGBU scholarship, and AGBU funds her stay in Germany. The violinist has performed in the UK, Lithuania, UAE, Syria, Russia, and Germany. She has appeared as a soloist with the Yerevan Symphony Orchestra, Armenian Philharmonic Orchestra, Serenade Chamber Orchestra (Armenia), and Kaunas Chamber Orchestra (Lithuania).

## A.G.B.U. Presents Singer/Songwriter Gor Mkhitarian



The Armenian General Benevolent Union Southern California (A.G.B.U.) to present Armenian singer/songwriter Gor Mkhitarian in partnership with the Levitt Pavilion on July 9th as part of the Levitt's summer concert series.

Gor Mkhitarian who reflects the very best of the burgeoning music scene now taking root in Armenia is widely known throughout the country and now the United States, Gor launched his solo career in 2001 having released seven albums since. Being nominated for a total of eleven industry music awards, he makes fresh and compelling music that successfully fuses traditional Armenian music with both rock and folk idioms. What has made Gor a favorite with audiences is his uncanny ability to combine unique songwriting ability with stunning modern arrangements of Armenian folk music.

In 2003 he moved to Los Angeles where drummer Andranik Harutyunyan, basist Varujan Hovakimyan, pianist Art Grigorian and guitarist Jay Dean joined the band. Stepping away from his previous acoustic-driven "signature", with the new band he features remarkable musicianship.

"Complimented by wonderful vocals, reflective lyrics and tasteful arrangements, Gor's melodies are simple, yet beautiful and fresh to the ears." - Yatrika Shah-Rais, Host and Producer of Global Village (KPFK 90.7 FM)

## Armenian Nursing and Rehabilitation Center New Building



**Armenian Nursing and Rehabilitation Center Board members presenting a check to the new building architect. Standing left to right John Vanishkian, Board Member; Dave Rowan,Treasurer; Annette Tamalian-Almond, Corresponding Secetary; Craig Froonjian, DMD, Ombudsman; Khoren Naldandian, Secretary; Matt Russo, LNHA, ANRC Administrator; Sitting Vatche Baghdikian, Vice President; Bob Cozzarelli, AIA , Architect; Andy Torigian, President and Chairman of the Board.**

On June 24, 2010 during the annual meeting of the ANRC, Andy Torigian announced that the contract had been signed and the new building for the ANRC will begin. The new building project began several years ago. It took a long time and a great deal of effort to get all the State and Town approvals. It will have enough rooms and facilities to serve the Tri State Area.

The new building will be using the latest Leadership in Energy and Environmental Design (LEED) rating in sustainable design, water conservation, energy and atmosphere conservation, as well as materials and resource conservation and indoor environmental quality. The building can also be called a "Green" Building. It will also have all the latest state of the art amenities of a nursing and rehabilitation center.

While the ANRC works towards the new building, its excellence in service to its residents continues. Attesting to this is its maintenance of its 4 star rating.

## SD Hunchakian Party Statement

**Continued from page 1**



peoples of Armenia and Azerbaijan but also to the whole region and superpowers. But, SDHP believes that the stated proposals could only lead to a war.

2. The OSCE MG co-chair countries made an anti-Armenian proposal full of more perils than the controversial Madrid Principles.

3. The superpowers again showed preference to Baku's black oil than to justice and norms of international law.

4. The Co-Chair countries apply double standards in the international law. We are more than convinced that Russia would not have listened to similar proposals for Abkhazia and South Ossetia conflicts, or the United States for the Kosovo conflict.

5. In the given situation Armenian authorities are obliged to conduct public discussions and hold a referendum to know the opinion of the Armenian people before signing any document.

## US Diplomat Warns Turkey of Eroding Support

**Continued from page 1**

supported Turkey have lashed out and warned of consequences for Ankara since the Security Council vote and the flotilla raid that left eight Turks and one Turkish-American dead. The lawmakers accused Turkey of supporting a flotilla that aimed to undermine Israel's blockade of Gaza and of cozying up to Iran.

The raid has led to chilling of ties between Turkey and Israel, countries that have long maintained a strategic alliance in the Middle East.

Gordon said Turkey's explanations of the U.N. episode have not been widely understood in Washington, Lethbridge Herald reported.

"There is a lot of questioning going on about Turkey's orientation and its ongoing commitment to strategic partnership with the United States," he said. "Turkey, as a NATO ally and a strong partner of the United States not only didn't abstain but voted no, and I think that Americans haven't understood why."

# ՄԻ ՆՈՐ ԳԻՐՔ ՄԵՐ ՍԵՂԱՆԻՆ

***ՀԱՑԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊԵԱՆ***
***(Բանասիր. գիտութ. թեկնածու, դոցենտ)***

«Երբ մենք պոէզիա էինք որոնում, պոէզիան եկաւ ու անցաւ մեր կողքով: Ուշացումով միայն արձագանքեցինք, որ բանաստեղծը եկել, մեզ խօսք է ասել ու գնացել...»:
Դաւիթ Գասպարեան

*Նման պարագայում անմիջապէս յայտնւում են մխիթարութեան խօսքերը: Բանաստեղծն անցել է ֆիզիկապէս, սակայն եւ անմահ է իր թողած գրական ժառանգութեամբ, բարի գործերով, այսաշխարհային գոյութեան շարունակութիւններով՝ Գրիգոր եւ Անի զաւակներով, իր անունը կրող յիշատակի վայրերով՝ հարազատ գիւղի դպրոցով, բուժկենտրոնով, «մարդ գալու ու անարատ մարդ երթալու« երանութեամբ...*

*Յունիսի 17-ին Արտակ Համբարձումեանը կլինէր ընդամէնը 41 տարեկան: Սակայն մօտ տասը տարի առաջ դժբախտ պատահարը ընդհատեց նրա 32-ամեայ երկրային կեանքը՝ դարձնելով նրան յաւերժի երկնագնայ մի ճամփորդ: «Ես մեռնում եմ ամէն տողիս հետ եւ յարութիւն առնում երգս աւարտելուց յետոյ»,-քրիստոնէական յարութեան ոգով տոգորուն՝ գրում է բանաստեղծը: Ցիրաւի, նա այսօր իր իւրաքանչիւր բառի հետ յարութիւն է առել, որպէս հողին պահ տուած հատիկ, որ մէկի տեղակ տալիս է 20... 30... եւ աւելի:*

*Արտակ Համբարձումեանը ընթերցողին ծանօթ է դեռեւս իննսունականներին տպագրուած «...ու արտասուել մազերիդ մէջ» (1996), «Երկնքից այն կողմ» (1998) եւ յետմահու հրատարակուած «Սպասի՛ր ինձ, Տէ՛ր» բանաստեղծութիւնների ժողովածուներով (2002): Մի քանի ամիս առաջ բանաստեղծի ծննդեան 40-ամեակի առթիւ կրկին լոյս է տեսնում «Սպասի՛ր ինձ, Տէ՛ր» ժողովածուի լրամշակուած տարբերակը (702 էջ), որը հրատարակութեան են պատրաստել բանաստեղծի եղբայրը՝ Գարիկ Համբարձումեանը, եւ գրականագէտ Դաւիթ Գասպարեանը: Երկրորդ լրամշակուած հրատարակութեան մէջ արտացոլւում է հեղինակի մինչ այդ տպագիր եւ անտիպ գրական ամբողջ ժառանգութիւնը: Ժողովածուն բացւում է բանասիրական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր Դաւիթ Գասպարեանի «Շռայլ՝ կեանքը վստահելու չափ» գրախօսականով, որին յաջորդում է Վահագն Դաւթեանի «Բարով եկար, սիրելի՛ Արտակ» սրտի խօսքը (Գրական թերթ, 28.08.1992):*

*Համահաւաք տարբերակում զետեղուած «...ու արտասուել մազերիդ մէջ» առաջին ժողովածուն բաղկացած է «Եթէ մոռանում են...», «Տխուր պարահանդէս», «Զբացուած ծրարներ կամ ցաւի հեքիաթ», «...Ձեր խոնարհ ծառան եմ եղել» բանաստեղծական շարքերից եւ պոէմներից:*



*Երկրորդ՝ «Երկնքից այն կողմ» ժողովածուն կազմուած է «Քարաւան», «Աղմուկի մէջ», «Ապարանք», «Վերջին երգեր» եւ այլ բանաստեղծական շարքերից: Գրականագէտ Դ. Գասպարեանի՝ երիտասարդ քնարերգակին բնորոշող բանաձեւը հետեւեալն է. «Արտակ Համբարձումեանի պոէզիան շատ միասնական է ու միաձոյլ, որովհետեւ իւրաքանչիւր տողի մէջ իր կեանքի մէկ դրուագն է, իւրաքանչիւր գործի մէջ՝ իր կեանքի մէկ էջը: ...Արտակ Համբարձումեանն առաջին հերթին սիրերգակ է»:*

*Լրամշակագմ ժողովածուի ինը տասներորդ մասը հեղինակի մահից յետոյ հրատարակուած «Անտիպ ժառանգութիւն» վերնագիրը կրող բաժինն է, որում զետեղուած բանաստեղծական շարքերի վերնագրերն իսկ խօսուն վկայութիւնն են քնարերգուի ուրոյն լեզուամտածողութեան ու ինքնատիպ խօսքարուեստի: «Կապուտաչեայ սէր», «Աուրէ հոգու մթնշաղը բորբ», «Հրկիզուած կարօտ», «Մոմէ կակաչներ», «Մեղաւոր հոգու շշունջ», «Պոկուած վարագոյր», «Քո անունը մնաց լուսնի ծայրից կախուած», «Ցաւի փաթիլներ», «Առնէտի ժպիտ», «Միայնակ ծառերի անտառը» եւ այլ ենթավերնագրեր վկայում են կեանքն ու աշխարհը ոչ սովորական, տարակերպ ընկալող, հոգեւոր գանձեր, բանաստեղծական հարուստ ներաշխարհ ունեցող անհատականութեան մասին:*

*«Անտիպ ժառանգութեան» երկրորդ մասը «Երգիս թագուհի» ենթաբաժինն է, որը հեղինակը նուիրել է իր սիրելի կնոջը՝ Գայեանէին: Այս բաժնի ենթավերնագրերը եւս խօսում են առանձնայատուկ կենսափիլիսոփայութիւն ունեցող սիրառատ անձի մասին՝ «Զսպասուած հանդիպում կամ սիրոյ տաճար», «Սպիտակ սուգ», «Օվկիանոսը կղզու վրայ», «Երկնային երկիր», «Կեանքի վարագոյրն իջնում է ցած», «Երազի տուն», «Կարկատած ծիածան»... եւ այսպէս շարունակ:*

*«Արձակ էջեր» բաժնում ընդգրկուած են «Ժապաւէնի վրայ» խոհափիլիսոփայական, յուշագրական, մենախօսական արձակի նմուշները, որոնց յաջորդում են մէկերկու նախադասութեամբ արտայայտուած խտախոհումները՝ «Խոհեր, մտքեր» ենթավերնագրով:*

*«Սէրը բացայայտուելիս տուժում է, ինչպէս բանաստեղծութիւնը՝ թարգմանուելիս» կամ՝ «Երաժշտութիւնը բացայայտում է բանաստեղծութեան սքանչելի անյայտ կողմերը», «Բոլոր արուեստները գրականութեան զաւակներն են»...*

*Գրքի վերջում ներկայացւում է մի տեսասկաւառակ, որում ամփոփուած «Կապուտաչեայ առասպել», «Հայից հայ», «Բանաստեղծութիւններ» շարքերը հնչում են ասմունքի վարպետներ Վ. Աբաջեանի, Հ. Ջինանեանի, Ա. Ասատուրեանի կատարմամբ:*

*«Սպասի՛ր ինձ, Տէ՛ր» ժողովածուն խօսուն փոխաբերութիւնների, բնապաշտական անձնաւորումների, գեղեցիկ պատկերների, մակդիրների, դիպուկ համեմատութիւնների շտեմարան է: Այստեղ «մեր քաղցրաբառ հայոց լեզուն» նորովի է փայլատակել ու շքեղօրէն ծիածանուել: Եւ օրինակներ բերելու համար ամենեւին հարկ չկայ որոնումներ կատարելու. ցանկացած էջ եւ ցանկացած տող խորհել, ներհայեցնել ու փիլիսոփայել են տալիս: «Կարօտս սողաց թփերի միջով ու խայթեց ոտքս...», «Արեւը սահեց, շրթունքը պոկեց ամպի շուրթերից ու իջաւ ծովը...», «Քամիները վերջին տերեւները տարան, մի մեղեդի լացէ իր մազերը պոկեց...», «Եւ քո հիաթափանց արցունքներից կապոյտ Ադամանդներ շարել հորիզոնի մարմնին...», «Մի՞թէ կանցնի կեանքս, այսքան կիսատ ձգուած երազներիս ճամփին...» եւ այսպէս շարունակ...*




*Իսկական քնարերգութիւնն ու ժամանակի մէջ անանցանելի արժէքներն այսպէս են հիւսւում, եւ որպէսզի «պոէզիան մեր կողքով անցած չլինի», մեր սեղանի գրքերին աւելացնենք մէկը եւս՝ Արտակ Համբարձումեան, «Սպասի՛ր ինձ, Տէ՛ր»...*

***

Կարօտիս մէջ՝ իբրեւ լոյս, իբրեւ բախտի հիացում,
Քո արծնապատ թեւերի բեկուած շողքից գունաթափ,
Ցած են վազում մազերդ՝ իբրեւ թելեր ձիւն առ ձիւն,
Ու երգերիս հայելում շուարում են թեւաթափ:
Ու քո թաւշեայ հոգու մէջ ծլող մատներս ոսկրոտ,
Որ սովոր են շոյելու փշոտ ուսերն արեւի,
Տխուր պատւում են արեամբ, մալախիտով ու ոսկով՝
Սիրերգութեան հողմահար, բայց չպոկուող տերեւից:
Եւ խաշամով այն դեղին, որ դիւթել էր քեզ մի օր,
Ես ծածկել եմ տունն իմ խեղն, ուր միայն ես եմ թախծում,
Որ իմ հոգու պատերին քո պատկերը ամէն օր
Նուաղում է իբրեւ լոյս, բայց դեռ լոյս է տարածում:

***

Անքնութեամբ եմ ես տառապում.
Անծայր գիշերը դառնում է երգ,
Ցուշերիս դուռը ներսից փակում,
Դառնում եմ տխուր ապրումի հեւք.
Հեծկլտանքով՝ թոյլ, անեզր,
Ցուշերիս խոյրն եմ քանդում մէկ-մէկ,
Անցած օրերիս նաքած հեւքը
Քամու շուրթերով սուլում է դեռ,
Ելնում է շունչը թոյրով անմեռ,
Թակում է մութի ծեփը փրփուր,
Ընծա՛յ է շունչը՝ իբրեւ տանջանք,
Եւ մարող մոմի հմայքի շուրթ,
Ու թէեւ ձայնը, ինչպէս մի գութ,
Մարում է օդում իմ երկիւղած,
Արեւածագի ձայնը անգութ
Բացում է հոգնած աչքերս թաց:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
massis2@earthlink.net

## ՔՍԱՆ ԿԱԽԱՂԱՆՆԵՐ
### 95-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ
### ԱԼԲԵՐՏ ԳՐՔԱՇԱՐԵԱՆ

Քսան հսկայ դիւցազնական
Ժայռեր անշարժ ու աներեր,
Որոնք եղան ազատութեան
Հրեղէն սիւները երկնաքեր:

Փառք ու պատիւ յաւերժական
Ուխտեալներին մեր Հնչակեան:
Ահա նրանք քսան անմահ
Փարամազներ գաղափարի,
Որոնց համար չեղաւ ոչ ահ
Եւ ոչ էլ մահ սարսափելի:

Փառք ու պատիւ յաւերժական
ուխտեալներին մեր Հնչակեան
որ միշտ եղան հերոսական
Ահեղ մուրճեր ու բազուկներ
Փշրելու միշտ լուծի շղթան
Ստրուկների՝ մերկ ու անտէր:

Փառք ու պատիւ յաւերժական
ուխտեալներին մեր Հնչակեան:

Քսան սիւներ կախաղանի,
որոնք ընդհուպ շեմին մահուան
սարսափեցրին սուլթանների
պալատները կարմիր արեան:

Փառք ու պատիւ յաւերժական
Ուխտեալներին մեր Հնչակեան:

Եւ մենք այսօր ձեր բոլորի
Ճակատներին Մասեաց գագաթ:
Պիտ դրոշմենք մեր սրտերի
Համբոյրները երախտապարտ:

Փառք ու պատիւ յաւերժական
ուխտեալներին մեր Հնչակեան:

Ու մենք նոյնպէս պիտի լինենք
ուխտեալները նուիրական
դրօշակին Ս. Դ. Հ. Կ.
Եւ կոչումին վեհ Հնչակեան:

Փառք ու պատիւ յաւերժական
ուխտեալներին Հնչակեան:

# ՉՈՒԽԱՃԵԱՆԻ «ԿԱՐԻՆԷ» ՕՓԵՐԷԹԻ ՓԱՅԼՈՒՆ ՄՈՒՏՔԸ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԲԵՄ

ՄԱՐԿՕ ՏԱՎԻՏՈՎԱ

Աշխատանքային ուղեւորութեամբ մը կը գտնուէի Գերմանիա երբ համացանցի միջոցաւ տեղեկացայ Տիգրան Չուհաճեանի «Կարինէ» օփերէթի ներկայացման մասին ֆրանսական բեմին վրայ: Մայիս 11ին հասայ Փարիզ տեսնելու համար «Կարինէ»ի ներկայացումը Սէն Մոր շքեղ թատերասրահին մէջ, որ կը գտնուի մայրաքաղաքի պատմական մէկ արուարձանին մէջ: Վայելքը իսկապէս արժեց՝ արդարացնելու համար երկար ճամբորդութիւնը:

Սրահը լեցուած էր ամբողջութեամբ ժամանակէն առաջ: Հանդիսականներուն մէջ էին ֆրանսահայ թեմի Առաջնորդ Նորվան Սրբազան Զաքարեան, Հայաստանի դեսպան պրն. Վիգէն Չիտէջեան, Սէն Մար քաղաքի քաղաքապետ յարգարժան Հանրի Փլանիոլ, որ նոյնպէս անդամ է Ֆրանսայի խորհրդարանին, ինչպէս նաեւ բազմաթիւ ներկայացուցիչներ, արուեստագէտներ եւ արուեստասէրներ:

Բեմադրութիւնը կը ներկայացուէր ֆրանսերէն լեզուով՝ ամբողջութեամբ արհեստավարժ ֆրանսացի կատարողներով: Ինը հոգինոց նուագախումբը իր կատարողական բարձր ու ներդաշնակ որակով աւելի լայն նուագախումբի մը դերը կը ցոլացնէր. խմբավար՝ յայտնի ֆրանսացի երաժիշտ Վենսան Պոնզոն:

## ԿԱՐԻՆԷԻ ՅՕՐԻՆՈՒԱԾՔԸ

Բեմադրութիւնը զոր վայելեցինք Չուհաճեանի «Կարինէ» օփերէթի նոր մեկնաբանութիւնն էր՝ Ժիրայր Բաբազեանի հնարամիտ յօրինումով: Ծանօթ է թէ Կարինէն Չուհաճեանի կողմէ սկզբնապէս կոչուած էր «Լեպլեպիճի Հոր Հոր աղա». Թրքերէն լիպրեթթօն գործն էր երաժիշտին մտերիմ գործակից Թագւոր Նալեանի: Պատմութիւնը ոչ մէկ առնչութիւն ունէր հայկական ոեւէ նիւթի հետ. գործողութիւնները տեղի կ՚ունենային 18րդ դարուն, Պոլսոյ մէջ, ուր գաւառացի Լեպլեպիճիին դուստրը՝ Ֆաթիմէն կ՚առեւանգուէր Խուրշիտ պէյի կողմէ, անոր հարեմին մաս կազմելու: Հայրը՝ վշտահար, կը դիմէ ամէն միջոցի, ազատելու համար իր դուստրը: Կարգ մը կատակներ ու խաղեր կը սարքուին հօրը գլխուն, զուարճալի դարձնելու համար խաղարկութիւնը:

Ժամանակի ընթացքին բազմաթիւ կառուցային փոփոխութիւններու ենթարկուած է գործը, առանց կորսնցնելու իր ժողովրդականութիւնը՝ շնորհիւ Չուհաճեանի առինքնող երաժշտութեան: Ան բեմադրուած է Եւրոպա, Ամերիկա, Թուրքիա եւ Հայաստան, ուր թրքական տիպարները մկրտուած են հայկական անուններով. Ֆաթիմէն դարձած է Կարինէ, Խուրշի պէյը՝ Արմէն, եւայլն: Պատմութիւնը եւս կրած է կարգ մը փոփոխութիւններ: Ներկայ փոփոխակը գործն է դերասան, բեմադրիչ եւ թատերագէտ Ժիրայր Բաբազեանի որ հիմնադիրն է Տիգրան Չուհաճեան հետազօտական կեդրոնին (Փարիզ): Բաբազեան մասնագէտ մըն է չուհաճեանագիտութեան: Ան ամբողջութեամբ նոր լիպրեթթօ մը պատրաստած է, լիովին համապատասխանող յօրինողի երաժշտութեան ուրկէ ոչ մէկ երաժշտական նօթ զեղչուած է: Այս նոր լիպրեթթօն ունի պատմական խորք, որովհետեւ ներշնչուած է հայ թատրոնի պատմութեան զարգացումներէն: Ատենին Պոլսոյ մէջ իգական դերերը կը կատարուէին այր դերակատարներու կողմէ: Այդ թեման զարգացնելով Բաբազեան հարեմին փոխարէն հայ բեմը ներկայացուցած է իբրեւ «Կարինէ»ի «փախուստ»ի վրայ, բան մը որ նոյնքան «անբարոյական» է վշտահար հօր: Միւս կողմէ բեմադրիչ-հեղինակը չէ զեղչած հարեմի տեսարանը, այլ զայն վերածած է թատրոնի մէջ թատրոնի խաղարկութեան՝ իբրեւ դրուագ մը արեւելեան «Հազար ու մէկ գիշերներ»էն: Եւ այսպէս կը ներկայացուի հայ թատրոնի պատմութեան գոյացումը թատերական սրամիտ հնարքներով եւ վարպետ դարձուածքներով ու տրամաթիզով:

Չուհաճեանի երաժշտութիւնը, իր վերտիական աւանդներով եւ արեւելեան մեղեդայնութեամբ իսկապէս յանկուցիչ էր օտար երաժշտասէր հասարակութեան որ անզուսպ ոգեւորութեամբ կը դիմաւորէր ամէն մէկ արիան:

Այս ներկայացումը միասնաբար հովանաւորուած էր «Լէ զամուրեօ թրանզիս»ի եւ «Չուհաճեան հետազօտական հիմնարկ»ի կողմէ:

Բազմաթիւ տարբեր ներդաշնակօրէն ընդելուզուած էին կատարեալ բեմադրութիւն մը իրականացնելու Չուհաճեանի ծանօթ բայց էքզօթիք երաժշտութիւնը, Բաբազեանի թատերական հնարքներն ու կատարողներու արհեստավարժութիւնը: 35 հոգինոց երաժիշտ ու երգիչներուն իւրաքանչիւրը յայտնի երիտասարդ մենակատարներ էին որ հմտօրէն կը միանային համոյթի ամբողջութեան:

19-րդ դարու օփերէթ մը բեմ կը բարձրանար արդիական տեսիլքով մը:

«Կարինէ»ն բազմաթիւ յաջող ու կիսայաջող ներկայացումներ ունեցած է հայկական թէ թրքական բեմերու վրայ. յաճախ բեմականացումը կայուն է, ապաւինելով երաժշտութեան զօրութեան:

Այս ֆրանսերէն ներկայացման մէջ ակնահաճոյ երեւոյթը լոյծ շարժումներն էին քորէոկրաֆիք հնարքներով, լոյս սաուերի խաղերով, քօղարկելով նոյն ատեն բեմի սարքերու մերկութիւնը:

Կարինէի դերը ստանձնած էր սքանչելի երիտասարդ՝ սոփրանօ Օրօր Քինթար, որ լիակատար արդարացում տուաւ Չուհաճեանի երաժշտութեան երանգաւորումներուն: Արմէնի դերը կը կատարէր Ստեֆան Մալպէք-Կարսիա, Մարգարի դերը կը կատարէր Ալեքսանտր Մարթէն-Վարոյ, Շուշանին դերը՝ Փոլին Սեքիրճի, իսկ Խաչիկի դերը՝ Օլիվիէ Փոտեսթա: Հրապուրիչ պարերը իրականացուցին Քլէր Ֆորօ եւ հայազգի Լորի Պաղտասարեան:

Ժիրայր Բաբազեան առաջին անգամ բեմ կը բարձրանար իբրեւ երգիչ եւ ան արհեստավարժ մեկնաբանութեամբ մը ապրեցուց Հոր Հոր Աղայի դերը: Ան այս բեմականացման մէջ հանդէս կու գար բազմաթիւ դերերով, իբրեւ լիպրեթթոյի հեղինակ, բեմադրիչ-դերակատար եւ կազմակերպիչ:

Այս բեմադրութեան իւրաքանչիւր արիան դիմաւորուեցաւ արտակարգ ոգեւորութեամբ: Կ՚իմանանք թէ ընթացիկ տարուան Հոկտեմբերին «Կարինէ»ն երկու ներկայացում պիտի ունենայ Մարսէյլի պատմական Օտէոն սրահին մէջ:

Ֆրանսայի մէջ ուրիշ սրահներ եւս հրաւիրած են Չուհաճեանի այս ժողովրդական գործը:

Կ՚իմանանք նաեւ թէ Բաբազեանի այս նոր փոփոխակը ունի իր անգլերէն ու հայերէն լիպրեթթոները՝ նոյնքան հարազատ Չուհաճեանի երաժշտութեան:

Այս բեմադրութեան առիթով կ՚արժէ քանի մը խորհրդածութիւններ ընել: Կ՚ըսուի թէ հանդիսատեսներուն 70-75%-ը ֆրանսացիներ էին. հազիւ 25-30%ը ֆրանսահայեր. այս երեւոյթը կարելի է մեկնաբանել երկու ձեւով. թէ՝ հայերը, այս պարագային՝ ֆրանսահայերը, կարեւոր չափով կորսնցուցած են տիրութիւնը իրենց արուեստի ժառանգութեան: Միւս կողմէ այդպիսի ծաւալով ֆրանսացի արուեստասէրներու պահանջկոտ ու խանդավառ ներկայութիւնը կը վկայէ թէ երբ հայ երաժշտաթատերական արուեստը ներկայացուի միջազգային մակարդակով ընկալելի ու գնահատելի է օտար հասարակութեան համար:

Միւս երեւոյթը հայ արուեստին քաղաքական անդրադարձն է, նոյնիսկ երբ ան այդ դիտաւորութեամբ չհրամցուի. այդ երեւոյթը պարզուեցաւ երբ, բեմադրութեան աւարտին, բեմ բարձրացաւ Սէն Մորի քաղաքապետը, որ շնորհաւորելէ ետք բեմադրութիւնը իբրեւ թատրոնի տարուան լաւագոյն ներկայացումը ու աւելցուց. «ահաւասիկ այս զուարթ, երջանիկ եւ ստեղծագործ ժողովուրդն է որ ենթարկուեցաւ ցեղասպանութեան ոճիրին»:

Իր կողմէ դեսպան Վիգէն Չիտէջեան շնորհաւորեց բեմադրիչն ու խումբը աւելցնելով. «փոքրիկ ժողովուրդի մը մեծ արուեստն է որ կ՚ընծայենք Ֆրանսային»:

Այս բեմադրութիւնը իրականացած էր գերազանցապէս քանի մը արուեստասէր անհատներու ճիգերով, ինչպէս նաեւ «Կարինէ»ի բարեկամներու շրջանակին ճիգերով. այդ բարեկամներն են Լեւոն եւ Հուրի Պաղտասարեաններ, Վահէ Խաչերեան, Արա Ահարոնեան եւ Քլոտ Մութաֆեան: Ֆրանսահայ աւանդական կազմակերպութիւնները կը փայլէին իրենց բացակայութեամբ. փաստ մը՝ որ ետ մնացած են իրենց յաւակնած յառաջապահ արուեստի մակարդակէն:

Կը յուսանք «Կարինէ»ի անգլերէն փոփոխակը մօտ ատենէն վայելել Ամերիկայի մէջ:





ՎԱՐՉՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Avenue
Pasadena, CA 91107

Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

# ԲՌՆԱԳԱՂԹ.. Հայաստանի Խորհրդային Հանրապետութիւնից հայերի բռնագաղթի վաթսուն մէկ ամեակի առթիւ

ՊՕՂՈՍ ԼԱԳԻՍԵԱՆ

1949 Թուականի Յունիս 29ի առաւօտ, բանաւանն էր զարթնել, արեգակը արծաթ լոյս էր վառել կաղնիների սաղարթներին, կանաչն էր վառւում ու հոսում բնակելի տաղաւարների վրայ: Արեգակի լոյսով հուրթած կանաչը տիեզերական առասպել, բնութեան հէքիաթային առեղծուած է, արեւ աստուած Միհրի արարչութեամբ է այնտեղ կենսանիւթ համադրւում: Լոյսն էր ժպիտով գրկել անտառի բացատի բանաւանը, բնակիչները դուրս էին ելել իրենց փոքրիկ պատշգամբներին, լուռ նայում էին իրար, բանաւանը լռել էր, ինչո՞ւ... արդեօ՞ք պատահածի առթնած վախի սարսափից էր այն: Փոխանակ արեւին ժպտալու, փոխանակ առաւօտեան արդար արեգակի բարի լոյսի մաղթանք աւետելու, փոխանակ լուսոտ ժպիտ ցանելու դրացիների սրտերին, փոխանակ իրենց աչքերը անտառի կանաչ լոյսով հրճուելու, փոխանակ անտառի անուշ գփիւռով իրենց դէմքը ցօղելու... լուռ էին: Գործարանի շոգեմեքենայի շչակներն էին հնչում աշխատանքի կանչելու, կարծես այն ամէն օրուայ նման աշխատանքի հրաւէր չէր, կարծես այն ողբաձայն բուքի նման մռնչում էր: Ի՞նչ էր պատահել... բանաւանի հարաւ արեւելեան կողմի տաղաւարի՝ Տաթեւ գիւղից Բաբայեան ընտանիքին, կէս գիշերուայ անտառային լուռ ու խաւար մութին, աքսորի էին տարել, ինչո՞ւ:

Գորիսի շրջանի Շուռնուխի գիւղին յարող բանաւան, այդտեղ էր հիմնադրուել Կապանի (Ղափան) Փայտամշակման գործարանը: Այդ ինչպէ՞ս էր, որ Մոսկովից իմացել էին հեռու Զանգեզուրի անտառների ծառեր փայտանիւթի ամրութեան մասին, երեւի տեղի պոլշեւիկները վերեւներին հաճոյանալու համար, հայոց անտառներին էին մատնել: Բեխի ծառեր էին, որոնց արմատները մխրճուած Սիւնեաց աշխարհի հողին, պղինձ ու ոսկի քաղելով՝ ամրացել էին: Կայծեր էին թռչում, երբ կացինով հարուածում էին նրանց չոր բնափայտին: Որոտան գետի հուքի լանջերից մինչեւ Կապանի մատոյցները տանող ինքնաշարժի խճուղին պատում էր Զանգեզուրի կուսական անտառների սիրտը: Այո, ճեղքել էին Զանգեզուրի սիրտը եւ այն կողմէ կոչել Ատրպէյճան: Ո՞վ էր պատռել սիրտը այդ լեռների, հեռուից եկող կարմիր զինուորներն էին, որոնց իրենց ձեռքերը լուացին այստեղ ու այնտեղ հայոց բզկտած հողից հոսող արիւնով: Հռովմէացի Պիղատոսը իր մեղքը լուաց ջրով, իսկ, նրանք ե՞րբ պիտի մաքրեն իրենց արիւնոտ ձեռքերը... չէ, չեն մաքրի, դեռ հիմա էլ նրանց յետնորդները նրանց տարածքային ամբողջականութեան առասպելն են քարոզում, սակայն որո՞ւն տարածքը 1920 Թուականին, իրենց նոր կարգերը հաստատելու համար, հայոց աշխարհի վրայ ծագած առաջին հանրապետութեան լոյսը մարեցին, հիմա էլ ազդեցութեան ոլորտ պահպանելու համար նոր հէքիաթ: Հազար, հազար ամօթ նրանց:

Խճուղիի միայն հիւսիսային կողմի լանջերի ծառերն էին հատում, որոնց հուժկու իրաններից տարբեր չափերի ու տեսակների տոցանիւթ էին պատրաստում՝ իրենց երկրի մանուագործական հաստոցների մազոզներ եւ դղեակների տախտակամածները յարդարելու մանրատախտակ: Նման ծառերն աճում էին խճուղիի երկու կողմերին էլ, բեխիները, յաճախ իրար գրկած, բարեւի էին կանգնում ինքնաշարժերին, իրենց վարսերով շոյելով նրանց տանիքները, սակայն, այն կողմից ոչ մէկ ծառ էին թողել հատել: Հայեր, ձեր հին աստուածները ինչքան անանձնական բարութիւն էին ցանել ձեր սրտերին, տուեցիք տալիս էք ինչ որ կայ ձեր արիական հոգիներում, եւ թողեցիք նաեւ ձեր ծառերը լացէին, անդունդներն էին նրանց ցաւի արձագանգներից ողբաձայն որոտում: Այդ ճանապարհներով նորէն քայլել եմ, սահման չկայ հիմա: Հայու գէնքը, հայոց քաջերի կռիւը իրենց սահմանը տարաւ մինչեւ Մայր Արաքս եւ կռուից քրտնած իրենց դէմքերը ցօղեցին նրա ջրերում:

Մուսա Լեռցի «Կապորալ» Արմենակը իր մանչերը շուրջը բոլորած՝ բակ էր դուրս եկել, զարմանցիքց չորս դին էր նայում, ի՞նչ, հայերին իրենց Հայաստան աշխարհի աքսո՞րի էին տարել, Արաարայի յաղթական ճակամատարտից դէպի Կիլիկիա իր արշաւանքի ճանապարհին, Թուրքի արարած գաղթի քարաւանների փշրանքներ տեսել էր, սակայն, այստեղ ինչո՞ւ տեղահանութիւն, բռնագաղթ: Շշուկաձայն իրարու հաղորդում էին, որ Բաբայեանների ամբողջ ընտանիքին՝ մանչերին, ծնողներին, այդ անտառային գիշերը լցրել էին բեռնատար ինքնաշարժի թափքին ու տարել դէպի Կապան: Ասում էին, որ հայր Բաբայեանը ցարական իշխանութեան ժամանակ պարզապէս ոստիկանութեան համակարգում ծառայող էր եղել: Յետոյ, պիտի իմանայինք, որ հայրենի երկրի շէների բռնի հանրայնացուած հողի շինականներին ու քաղաքների հազարաւոր ընտանիքներին, նրանց անկողնային հիւանդներին, ծերունի ծնողներին, մանչերին, գրկի մանչերին առանց դատի այդ սեւ մութ գիշերին տարել էին երկաթուղային կայարաններ, լցրել ապրանքային փոխադրակառքերին ու տարել դէպի ցուրտ երկիր: Զարի երկիր, չարի կառավարում, դրանից մի տասնամեակ առաջ՝ երեսունական թուականներին, քառասուն հինգ միլիոն իրենց քաղաքացիներին բանտարկել էին, տանջահարել, խոշտանգել, սպաննել, աքսորել ցուրտ երկիր, Կոլիմա երկրամաս, Կուլակ թերակղզի: Բանտարկել էին հայոց աշխարհի համարեայ բոլոր իմաստուններին, իրենց քերթողներին, վարժապետներին, նոյնիսկ անմեղ շինականների ու բանուորների: Աստուած չունէին, որ գութ կաթէր իրենց սրտերին, դատարկուել էին հոգիները իրենց, փլելու, սպաննելու կուռքին էին պաշտամունք նուիրել եւ իրենց երգով աշխարհը քանդելու կոչ:

Ազատ աշխարհի խոշոր պետութիւնները, դաշնակցած խորհրդայինների հետ, նացիզմն էին ճզմել՝ իր իսկ որջում: Նրանց զարկին էին մասնակցել նաեւ գերմանների թողտուութեամբ սպանուած մի արիական ցեղի յետնորդների զօրաբանակները: Նրանց այրուած խորհրդարանի առաջ թմբուկ զարկին, իրենց լեռնականի պարի դոփիւնից թշնամու խորհրդարանի շէնքը դողաց, նրա քարէ պատերին Ապարանցի, Զանգեզուրցի, քաջորդիներ իրենց հայկեան անունները դրոշմեցին, մի մարտիկ էլ իր սուինով փորագրել էր՝ «Հիթլեր

Տար.ը էջ 18




EVERY SATURDAY
Live Arabic Music
MOHAMAD SALEM
& HIS BAND

Singer Mohamad Salem

Lebanese Special Mezza .............per person $27
Hummos, Imtabbal, Tabbouleh, Falafel, Spinach and Meat Pies, Raw Kubbeh, Salad, Kebbeh, Vegetarian Grape Leaves, Labneh, Feta Cheese, and Shawarma (Beef or Chicken). Your choice of Kebabs (Lamb, Bref, Chicken, and Kafta).



Sheik Wahib

WHOLE LAMB SPECIAL
$245.00 + Tax
Whole Lamb Stuffed with Rice, Almonds, Pine Nuts and Pickles
WHOLE LAMB WITH MEZZA
$399.00 + Tax
LEBANESE SUSHI

| | |
|---|---|
| Raw Kubbeh | $10.95 |
| Habra Nayieh | $10.95 |
| Raw Liver | $10.95 |
| Kafta Nayieh | $10.95 |

WAHIB'S MIDDLE EAST RESTAURANT
ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԱՄԵՆԱՀԱՄԵՂ ՃԱՇԱՏԵՍԱԿՆԵՐ: ՈՒՆԻ ՆԵՐՔԻՆ ԵՒ ԲԱՑՕԴԵԱՑ ՆՍՏԵԼՈՒ ԲԱԺԻՆՆԵՐ
Բաց է Շաբաթը 7 օր: Ունի յատուկ սրահ հաւաքոյթների

(626) 281-1006
(626) 576-1048
910 E. Main Str.
ALHAMBRA, CA




CALL WAHIB FOR RESERVATIONS

# ԱՐՇԻԼ ԿՈՐՔԻ-ՈՍՏԱՆԻԿ ԱՏՈՅԵԱՆ

*Շարունակուած էջ 7-էն*

*ափերուն, սքանչագեղ բնութեան մը ծոցին մէջ, որ անջնջելի տպաւորութիւն կը ձգեն մանկական իր ներաշխարհին վրայ: Ցետագային, Արշիլ Կորքի պիտի լայնօրէն այդ յիշատակներն ու տպաւորութիւնները օգտագործէր իր խայտաբղէտ խորհրդապատկերներով իր լաւագոյն պաստառներուն մէջ:*

*Հազիւ հաստատուած Վանի Այգեստան թաղը, Ատոյեանները կը ստիպուին դիմագրաւել նոր աղէտներ. վրայ կը հասնին 1915-ի Վանի կոտորածն ու ապա ինքնապաշտպանութեան կռիւները: Ընտանիքը կ'ապաստանի Ամերիկեան Միսիոնարութեան շէնքը: Տասնըմէկ տարեկան Ոստանիկ ուրոյն ձեւով իր մասնակցութիւնը կը բերէ կռիւներուն, սուրհանդակի վտանգաւոր առաքելութիւններ կատարելով, ընդհանուր հրամանատարութեան եւ ճակատի դիրքերուն միջեւ: Ռուսական բանակի մուտքը Վան, ժամանակաւոր փրկութիւն կը բերէ, սակայն անոր անակնկալ նահանջը, պատճառ կը հանդիսանայ որ Վանի եւ շրջակայքի հայութիւնը բռնէ գաղթի տաժանագին ճամբան դէպի Էջմիածին: Ատոյեաններն ալ կը հետեւին հոսանքին: Էջմիածինի պատերուն տակ սակայն արեւմտահայ գաղթականներու բազմահազար զանգուածը կը մատնուի սովի եւ վարակի: Կեանքի դաժան այս պայմանները արագընթաց հասունացում կը պարտադրեն պատանի Ոստանիկին: Զարմանալի ձեռներէցութեամբ ան կը յաջողի ընտանիքը փոխադրել Երեւան, կիսափուլ երդիքի մը ապաստանը ապահովելով անոր: Մինչեւ 1919-ը, չարքաշ աշխատանքով, զրկանքով բայց գոյատեւման կամքով, կը յաջողին ձեւով մը պահպանել իրենց գոյութիւնը: Վերջին այդ տարուայ խստաշունչ ձմեռը սակայն եւ անոր ընկերացող սովը կը կատարեն իրենց աւերիչ դերը: Սովամահ կը մեռնի Շուշանիկ Տիկինը, որպէս մարմնացում անձնազոհութեան: Մինչ այդ, Երկու տարեց աղջիկները՝ Ագապի եւ Սաթենիկ կրցեր էին Ամերիկա մեկնիլ, որպէս հեռակայ ընտրեալ հարսնացուներ: Երկար տաժանալից ոդիսականէ ետք, վերջապէս Ոստանիկ եւ Վարդուհի քոյրն ալ, 1920-ին կը հասնին Ամերիկա:*

*Առաջին յուսախաբութիւն՝ հայրը վերամուսնացած ըլլալուն, չի գար զիրենք դիմաւորելու: Հարկադրուած՝ ապաստան կը գտնեն Պոսթըն, իրենց երէց քոյրերուն մօտ: Կորքի հարկադրուած գործի կ'անցնի կօշիկի գործարանի մը մէջ: Հոն, կօշիկի տուփերու վրայ այլազան իր գծագրումները կը փորձէ եւ բռնուելով գործէն կ'արտաքսուի: Սակայն, ան արդէն վճռած է. նկարիչ պիտի դառնայ ամէ՛ն գնով: Պահ մը հինգ տոլար վճարումի փոխարէն, չարժանկարի սրահի մը մէջ, միջնարարներուն, ամերիկեան հինգ նախագահներուն նկարները կը գծէ քանի մը վայրկեանէն: Ի վերջոյ, 1925-ին կը մեկնի Նիւ Եորք՝ գրպանը քանի մը տասնեակ տոլարներ ունենալով, առանց ծանօթի, յանձնարարականի կամ նեցուկի: Շնորհիւ իր կանխայայտ նկարչական ձիրքերուն կը յաջողի արձանագրուիլ Նիւ Եորքի ամենէն հեղինակաւոր Արուեստի Կեդրոնական Վարժարանը եւ քանի մը ամիսէն, իր տաղանդին յայտնաբերումով, կ'ընդունուի որպէս ուսուցիչ: Տարիներ շարունակ այդ փոքր պաշտօնը, իր վտիտ բայց մնայուն եկամուտով, կը մնայ նիւթական մնայուն աղբիւրը: Վերջնական կայք կը հաստատէ Կրինիչ Վիլէճ, պոհեմ արուեստագէտներու թաղամասին մէջ: Շուտով կը ծանօթանայ, իրեն պէս հոն ապաստանած նորաթուխ նկարիչներու, որոնք նմանապէս կը փնտռեն իրենց ուղին: Հինգ տարիներու Ամերիկա իր կեցութեան ընթացքին ան արդէն բաւական տիրացած է անգլերէն լեզուին եւ ամբարած նկարչական տեսական գիտելիքներ՝ ինքնաշխատութեամբ, թանգարաններ եւ գրադարաններ յաճախելով: Պոսթընի մէջ իսկ, որպէս նախափորձ, իրագործած է քանի մը իւղանկարներ՝ բնանկարներ, նաթիւր մորթ եւ դիմանկար, իրեն համար անգոհացուցիչ իրապաշտ ոճով: Նկարչական որեւէ ուսուցում չունենալով, ան իր իսկական դպրոցը կը դարձնէ ինքնաշխատութիւնը: Կը սկսի մէկ առ մէկ փորձարկել արդէն հռչակի հասած հին եւ նոր նկարիչներու գործերը,անոնց հետեւողականութեամբ ինքնուրոյն գործեր նկարելով. այսպէս՝ Սեզանի, Փիքասոյի, Մաթիսի, Միրոյի եւ Քանտինսքիի ոճն ու մթնոլորտը ուսումնասիրելով Կորքի կը փնտռէ իր ուրոյն ուղին:: Ասիկա պատճառ ու պատրուակ կը դառնայ, որպէսզի, յետագային, կարգ մը թուլթակամիտ քննադատներ, չարակամօրէն զինք բնորոշեն որպէս ընդօրինակող եւ հետեւող նկարիչ: Մինչդեռ, իսկութեան մէջ Կորքի իր այդ ուսուցման շրջանի գործերուն մէջն իսկ տառացիօրէն չընդօրինակեց այլ անոնցմով մարզուեցաւ ու զարգացուց իր ճարտարութիւնը եւ սակայն անոնց վրայ դրոշմելով իր անհատական ներանձնականութիւնն ու հայեացքը: Իր սեզաննեան վարդերու փունջը օրինակ, Սեզան կը յիշեցնէ որոշ դասաւորումով, բայց բոյրով ու թոյրով արդէն կորքիական է: Նոյնը խորանարդապաշտ, քիւպիգ իր գործերուն մասին կրնանք ըսել: Կը խորհիմ թէ անոնք նոյնքան գեղեցիկ ու արտայայտիչ են որքան Փիքասոյինը, անշուշտ միշտ չմոռնալով այն պարագան, որ Փիքասոն ալ իր կարգին, իր ներշնչումները ստացաւ Աֆրիկեան նախնական արուեստի նմոյշներէն եւ Մաթիսն ալ՝ ճաբոնական վիմանկար էսթամփներէն: Արուեստներու զարգացումը միշտ հին նուաճումներու վերանորոգման եւ նոր կերպարանափոխման հանգրուաններով յառաջացած երեւոյթ է: Հին օղակաշարքին նոր օղակներ աւելցնելով: Բայց ոչ կրկնութեան կարգով, այլ՝ ինքնատպութեամբ եւ այլընտրանքներով:*

*Կեանքը հետզհետէ կը վատթարանար: Տնտեսական մեծ տագնապի տարիներն էին: Համատարած անգործութիւնն ու թշուառութիւնը կը հարուածէր նաեւ արուեստի սպասարկուներն ալ: Կորքի իր կարգին կը մատնուէր անել կացութեան: Մասնաւոր դասերու վտիտ եկամուտն ու չծախուող պաստառները չէին կրնար բաւարարել եռապատկուած ընտանիքին առօրեայ ծախսերուն, երբ Վարդուհի քոյրը, Հայաստան կատարած ձախող ճանապարհորդութենէն վերադարձած, անգործ ամուսինին եւ նորածին մանչուկին հետ ապաստաներ էր Ոստանիկին տունաշխատանոցը: Գաղափար մը կազմելու համար, թէ ինչպիսի անտանելի անցուկ վիճակ կը տիրէր տան մէջ, կ'արժէ թուել փոքրիկ նորածին Կարլենին կաթի սա միջադէպը: Վիլէմ տը Քունինկ այցելութեան եկած է Կորքիին: Սեղանին դրուած է նորածինին օրուայ կաթի շիշը, զոր Վիլէմ պատահաբար գետին գլտորելով կը թափէ պարունակութիւնը: Նորածինը, անօթի՝ կը ճչայ: Տան մէջ ուրիշ կաթ չկայ: Հարկ է վար իջնել եւ նոր կաթ բերել: Բայց ինչպէ՞ս: Զորս տարեցներուն գրպանը սենթ մ'իսկ չկայ: Լուծումը՝ Կորքի կը վերցնէ իր մէկ իւղանկարը եւ կը վազէ դուրս: Կէս ժամ ետք կը վերադառնայ երկու շիշ կաթ ձեռքին: Իւղանկարը փոխանակած է երկու շիշ կաթով: Տարբեր առիթներով ալ, քանի մը տոլարներով, ան հարկադրուած է ծախել իր կարգ մը գործերը, որոնք սակայն յետագային հարիւր հազարներ բերին իրենց անարժան տէրերուն:*

*Շնորհիւ իր կապերուն, Կորքի կը յաջողի գործ կարգադրել Վարդուհիի ամուսինին, Շիքակոյին մէջ: Առանձինն, աւելի դիւրին կ'ըլլայ գոյութեան պայքարը: Որոշ ժամանակ կը տոկայ, մինչեւ որ ամերիկեան կառավարական օգնութեան կոմիտէն կազմուելով, որպէս օգնութիւն զանազան պատուէրներ կու տայ չքաւոր նկարիչներուն: Կորքի կ'ունենայ երկու կարեւոր ապսպրանքներ: Նախ՝ Նիւ Եորքի միջազգային տօնավաճառի տաղաւարին նկարազարդումը եւ ապա՝ Նիւ Ուարք օդակայանի որմանկարներու շարքը: Ճիշդ է, լաւ կը վճարուի, բայց Ամերիկան տակաւին պատրաստ չէ ընկալելու համար արդիականութեան այդ երախայրիքները:*

*1936-ին, արդէն հեղինակութիւն է ան Կրինիչ Վիլէյճի նկարիչներու խումբին մէջ: Տը Քունինկ, Ռոթքօ, Բոլաք, Սթիլըրտ, Կրէհըմ, Լի Քրազնըր եւ ուրիշ շատեր, որոնք յետագային պիտի հռչակաւոր նկարիչներ դառնային, Կորքիին գործերէն ոգեշնչուած, յիսունական թուականներուն, մերժելով ամերիկեան գաւառային բնապաշտութիւնն ու ընկերվարական իրապաշտ մօտեցումները, պիտի հիմը դնէին Կորքիին արդէն իրագործած արդիապաշտ վերացական դպրոց ուղղութեան: Այսօր այդ նուաճուած եւ հռչակուած նկարչութիւնը Վերացական Արտայայտչականութիւն )Abstact Expressionism( անունով կը բնորոշուի: Փաստօրէն այդ ուղղութեան ներշնչարանը, նախակարապետն ու տեսաբանը կը հանդիսանայ Արշիլ Կորքին, որ, 1940-ին իսկ, արդէն լրիւ կազմաւորուած, վերջ դնելով իր փորձառական շրջանին, կը ստեղծէ իր ինքնուրոյն ոճը, ձեւն ու տեսականը, որոնցմով ան նոր լուսամուտներ պիտի բանար արդի նկարչութեան հորիզոնին վրայ, անոր ընձեռելով նաեւ հայկական լեռնաշխարհէն բխող ակնաղբիւրներուն նրբերանգեալ հրավառութիւնն ու կախարդանքը՝ գոյներու, երանգներու եւ կոր ու ոլոր գիծերու հեզաճկուն դաշներգութեամբ:*

*Իր առաջին ընդգրկուն ցուցահանդէսը կը բացուի Սան Ֆրանսիքոյի Արդի Արուեստներու Թանգարանին մէջ, 1941-ին: Պարզ տեղաշարժ մըն է ասիկա՝ Նիւ Եորքեան գալիք իսկական արժեւորումները նախապատրաստող, յաջողութեան սկիզբը: Ցուցահանդէսը Նախաձեռնուած եւ կազմակերպուած էր իր եւ ապագայ կնոջ, Ակնէսին նորայայտ բարեկամուհի եւ հիացող Ժանն Ռէյնըլի կողմէ: Դարձեալ անոր պնդումով է որ, ցուցահանդէսէն անմիջապէս յետոյ, տարիէ մը աւելի կենակցելէ ետք, Կորքի եւ Ակնէս կ'որոշեն ամուսնանալ: Խնայողութեան նկատառումներով, )մինչ այդ Կորքի Սան Ֆրանսիսքոյի կեցութեան ընթացքին գրեթէ սպառած է որմանկարներէն ստացած գումարը( ամուսնութիւնը կը կատարեն քաղաքային գրանցումով՝ Նեվատա նահանգի Վիրճինիա Սիթի աննշան գիւղին քաղաքապետարանին մէջ:*

*Այդպէսով, ճակատագրական երկսայրի քայլն էր որ կ'առնէր Կորքի: Ակնէս Մաք Կրուտըր, ազնուատոհմ, գեղեցիկ, զտարիւն ամերիկուհի մըն էր, դուստրը նաւատորմի ծովակալի մը: Ուսումը ստացած էր ֆրանսայի եւ Զուիցերիոյ մէջ եւ ապա ժամանակ մը ապրած՝ Չինաստանի Շանկայ քաղաքին մէջ, ուր հայրը որպէս զինուորական կցորդ կը ծառայէր Ամերիկեան Դեսպանատան մէջ: Թէ կենցաղով եւ թէ մտածողութեամբ չափազանձ ազատամիտ լրագրողուհի մը, ան պիտի յաջողէր իր լայն կապերով Արշիլ Կորքին ծանօթացնել վերի դասակարգի շրջանակներուն եւ իր ֆրանսերէնի գիտութեամբ, որպէս թարգմանչուհի, մեծապէս նպաստել Կորքիին եւ Անտրէ Պրըթոնի միջեւ կապի ամրապնդումին եւ իրար հասկացողութեան: Պէտք է ըսել, Ակնէս դարձաւ Կորքիին նոր ներշնչական Մուսան, բայց եւ նաեւ՝ անոր կործանման գլխաւոր պատճառը: Սխալ ընտրութիւն մը՝ ի սկզբանէ, անհամատեղելի երկու հակոտնեայ նկարագիրներու եւ մտածելակերպերու միջեւ:*

*1941-ը կ'ըլլայ անկիւնադարձային՝ Կորքիին համար: Համաշխարհային Երկրորդ Պատերազմէն փախչելով, գերիրապաշտ գրական եւ արուեստի յեղափոխիչ աշխարհահռչակ փարիզեան փաղանգը, իր գերագոյն առաջնորդ, բանաստեղծ եւ տեսաբան Անտրէ Պրըթոնի գլխաւորութեամբ, Ամերիկա կ'ապաստանի եւ կը հաստատուի Նիւ Եորքի մէջ:*

*Առաջին հայեացքով իսկ Պրըթոն կը յափշտակուի Կորքիին գործերով: Առանց վարանումի Կորքին կը մկրտէ որպէս «ամերիկեան ցամաքամասի մեծագոյն զտարիւն գերիրապաշտ նկարիչը»: Կորքիին տարիներու սպասած հռչակագիրն է այս, եկած՝ չսպասուած, չակնկալուած, շատ կարեւոր մէկ աղբիւրէ. որովհետեւ, երբ Պրըթոն կը պատգամէ, համայն արուեստի աշխարհը իր լռութիւնը կը սրէ ու կը լարէ հետաքրքրութիւնը: Հրամանի պէս անյեղելի են անոր խօսքերը: Արդարեւ, անոր վճռորոշ միջամտութիւնը կ'արդիւնաւորուի 1945 Մարտ 6-ին, Կորքիի նիւեորքեան առաջին համապարփակ ցուցահանդէսի բացումով, Ժիւլիէն Լեւի հանրածանօթ ցուցասրահին մէջ: Ցուցակագրքին յառաջաբանը կը գրէ նոյն ինքը, Անտրէ Պրըթոն, «Ակնաղբիւրը՝ Արշիլ Կորքի» խորագիրով, ուր կը հռչակագրէ. «Ինծի համար Կորքի առաջին նկարիչն է որ ակնաղբիւրին գաղտնիքը ամբողջութեամբ բացայայտեց: Ան եկած է ձեւակերտելու պատկերացում-կապը, ամբողջութեամբ այլակերպ տարրերու միջեւ: Կորքի գերիրապաշտ բոլոր նկարիչներէն միակն է, որ անմիջական կապ կը պահէ բնութեան հետ. կը նստի անոր դիմաց, նկարելու համար*

*Տար.ը էջ 17*

# ԱՐՇԻԼ ԿՈՐՔԻ-ՈՍՏԱՆԻԿ ԱՏՈՅԵԱՆ

*Շարունակուած էջ 16–էն*

*անոր ոգին: Ահա՛ւասիկ ամբողջութեամբ նոր արուեստ մը ձեզի հրամցուած: Ոստում մը՝ հասարակէն եւ ճանչցուածէն անդին գացող, եւ լուսեղէն, աննկուն աղեղի մը հանգոյն, ազատութեան հարազատ զգացողութիւնը բացայայտող»: Դեռ աւելին՝ Պրըթոն նաեւ յանձն առած է իւրաքանչիւր պաստառին համար թռիչքաւոր երեւակայութեամբ անուանումներ գտնել, ցուցահանդէսը աւելի հետաքրքրական դարձնելու համար: այսպէս՝ մէկ առ մէկ մկրտուեցան իր պաստառները արտասովոր եւ խօսուն անուններով, ինչպէս՝ «Էնկինարին տերեւը բու մըն է», «Տարի մը, կաթնախոտը», « Ծաղկած ջրաղացի ջուրը», «Արեւը, տերվիշը ծառին վրայ», «Լեարդը աքլորին բըուկն է», «Ինչպէս մօրս ասեղնագործուած գոգնոցը կը բացուի կեանքիս մէջ»: Իսկ Կորքիին «Խորգոմի Պարտէզները» անունով գործը վերանուանեց՝ «Սոչիի Պարտէզներ»:*

*Ամբողջական յաջողութեամբ պսակուեցաւ ցուցահանդէսը: Հանրութիւնէն աւելի արուեստի մարդիկ խանդավառուեցան: Իսկ մեծազդեցիկ «Նիւ Եորք Թայմզ» գրեց. «Արդ, իր նորակերտ արտայայտչականութիւնը քնարական է, հոսանուտ եւ թափանցիկ՝ տիրապետուած եւ ճարտարութեամբ դրսեւորուած: Բարդ եւ միանգամայն անմիջական գծագրումները կը միահիւսուին վերարտադրելու համար իր հարուստ ներաշխարհը: Իր երանգապնակին զուարթ ջերմութիւնը արեւայորդ հեղեղի կը նմանի»:*

*Սառնամանիքին բեկումն էր ա՛լ: Վե՛րջ մեկուսացումին: Եթէ նախապէս Կորքի Կրինիչ Վիլէյճի հանրածանօթ տարաշխարհիկ դէմքն էր՝ իր պարթեւ հասակով, սեւ ալեծածան բաշերով եւ խորհրդաւոր տերվիշի եւ պոհեմ արուեստագէտի կերպարով, ցուցահանդէսէն ետք, ան հռչակուեցաւ ինքնատիպ ու տաղանդաշատ նկարիչ, որ արդէն ունէր տոկուն գործ մը՝ գեղեցիկի անսովոր ընկալութեան հետ, վա՛ռ գոյներու հրավառութիւն՝ երեւեկայութեան գերակշիռ թափով բացայայտուած: Ան կը յայտնաբերէր նոր տեսլական եւ նոր ներհայեցողութիւն: Այս Բոլորը՝ պաշտպանուած չեչտուած անհատականութեամբ, տոկուն ճարտարութեամբ եւ հմայիչ արուեստով: Ալեւս փնտռուած անուն մըն էր Կորքին: Հեղինակաւոր թանգարաններ կը բանային իրենց դռները իր գործերուն առջեւ, մնայուն նմոյշներ ցուցադրելով, ինչպէս Նիւ Եորքի Մեթրոփոլիթընը, Արուեստից Վիթնին եւ ապա նշանաւոր Կուկընհայմը:*

*Կորքիին մէջ սակայն, մանկութենէն սկսեալ, բոյն դրած, արմատացած վախն ու անցկութիւնը, որ կը սկսէր շատ կանուխէն, հօր մեկնումով դէպի Ամերիկա, եւ կը շարունակուէր մօրենական գերդաստանին ողբերգական եղելութիւններու մնայուն յիշողութեամբ, եւ ապա կը բարդանար հայ մարդու ապրած ջարդ կոտորածի եւ գաղթի ահաւոր արհաւիրքներով, կը ստեղծեն իր մօտ ճակատագրապաշտութիւն մը՝ թէ անէծք կայ իրենց գերդաստանին վրայ, մօրենական մեծ մօր, իր ամուսնին եւ զաւակներուն նահատակութեան որպէս Աստծոյ դէմ քէն ու փոխ վրէժ, վանքին կրակ տուած ըլլալու սրբապղծութեան դիմաց: Մնայուն այս յաճախանքը տարիներով հալածեց զինք, անապահովութեան տեւական զգացումով: Հոգեկան այս տագնապը գործեց իր ներգործումը նաեւ իր գործերուն վրայ: Ու կարծէք իր կանխագուշակումները իրականացան կեանքի ամբողջ տեւողութեան: Դժբախտութիւններու չարաղէտ շղթաներ, եւեւէ եւեւ հարուածեցին զինք, ստեղծելով մղձաւանջային հոգեվիճակ: Եղէռնէն յետոյ, մօր սովամահութիւնը, հօր ոչ արժանավայել կեցուածքը, աշխատանոցին մէջ ծագած հրդեհը որ ոչնչացուց իր վերջին գործերէն քանի մօտ պաստառներ, ապա՝ հաստ աղիքներու չարաղէտ գործողութիւն մը, որ զինք դատապարտեց բնական պէտքերուն համար տոպրակի դրութեան, ինքնաշարժի արկած մը, որ անդամալոյծ դարձուց նկարող իր աջ թեւը: Տակաւին՝ սիրած ու պաշտած կինը ոչ միայն դաւաճանեց իրեն, հետեւելով նորայայտ սիրականի մը, այլ նաեւ իրմէ հեռացուց երկու աղջնակները: Ի՞նչ կը խորհիք. այսքան դժբախտ պատահար շատ չէ՞ր մէկ անձի համար: Միայն չկարենալ գծելը արդէն մահ էր արուեստագէտին համար: Անողոք հիւանդութիւնն ու թեւի արկածը հաշմած էին մարդն ու անոր արժանապատուութիւնը: Իսկ կնոջ դաւաճանութիւնն ու զաւակներուն յափշտակութիւնը, վերջնականապէս խախտեցին իր հոգեկան հաւասարակշռութիւնը:*

*«Ա՛լ կեանքը ոչ մէկ իմաստ ու հրապոյր ունէր:*

*Վաղ առաւօտուն, արդէն պատրաստած օղակաւոր չուանը վերցնելով, ուղղուեցաւ դէպի ջրվէժի լքուած ջրաղացը: Հոն, պարզ խաւաքարտի մը վրան, կաւիճով գրեց. «մնա՛ք բարով , սիրելինե՛ր...»:*

*Ու ապա, քաջաբար, պարանը անցուց վզին ու վճռական կիցով հարուածեց ոտքերուն տակ տեղաւորուած սնտուկը:*

*Այդ հարուածին մէջ ամփոփուած էին իր բոլոր դառնութիւններն ու զարշանքը ճակատագրի սադրանքներուն դէմ: Հպարտ մարդու իր կամքն էր հո՛ն, եւ միաժամանակ արհամարհանքը՝ իր հանդէպ անգութ մնացած շրջապատին ու մարդոց դէմ:*

*Հարուած՝ որ սակայն փրկեց զինք գալիք կարելի բոլոր նուաստացումներէն, եւ ընձեռեց իրեն ազատութիւնը՝ ընտրելու վախճանական ելքը ճակատագին, ինչպէս նաեւ՝ այնքան փայփայուած բայց միշտ զլացուած հռչակը, որ սակայն եկաւ յետ մահու՝ հաստատաքայլ տիրականութեամբ, անառարկելիօրէն:*

*Ու ի՞նչ փոյթ, թէ մարմինը ճօճուեցաւ պարապութեան մէջ, քանի որ այդ պարապութիւն կոչուածը անմահօթեան դուռն էր բացուող:*

*Տարին 1948-ն էր, Յուլիսի 21-ը:*

*Քառասուն եւ չորս տարեկան էր միայն»:*

*Արշիլ Կորքի նկարիչը, ըսուեցաւ արդէն, ոչ մէկ նկարչական ուսում ստացած էր: Ամբողջութեամբ ինքնաշխատութեամբ կազմաւորուած՝ ան, յամառ աշխատանքով, տքնութեամբ եւ ուշիմութեամբ ձեռք բերաւ նկարչական իր ճարտարութիւնն ու գիտելիքները: Ի վերուստ իրեն տրուած շնորհը ան զարգացուց անյագ ընթերցումներով եւ դիտողականութեամբ, գրադարաններ եւ թանգարաններ մնայուն կերպով յաճախելով: Իր ուսումնական ընդհանուր մակարդակն ալ նախնականէն աւելիին առիթ չունեցաւ: Բայց դարձեալ, ինքնաշխատութեամբ ան հասաւ այնպիսի բարձր մակարդակի, որով ան կրցաւ հաղորդակից դառնալ մինչեւ Փոլ Էլիւարներու խորաթափանց քերթողութեան հետ եւ տիրապետել տեսաբանական արդիական բոլոր իզմերուն: Ամբողջութեամբ ինքնակերտ արուեստագէտն էր ան: Իր արուեստին ակնաղբիւրը, Անտրէ Պրըթոն ի զուր կը փնտռէր գերիրապաշտական վերացական ոլորտներուն մէջ, երբ ան կը գտնուէր հայ մանրանկարչութեան խոր ակունքներուն եւ հայ աշխարհի, իր ծննդավայրի նկարչագեղ բնութեան մէջ:*

*Մանրանկարչութեան հետ իր հանդիպումը կու գար մանկութենէն, երբ իր մօր գերդաստանին հսկողութեան յանձնուած Ջարահան Սուրբ Նշան վանքը յաճախակի ուխտի կը տարուէր ան եւ հոն կը տեսնէր պատերուն սրբանկարներն ու մատեաններու մանրանկարները: Արուեստի առաջին բնազդային ընկալումը այդ տեղէն կը սկսէր: Վարդուշ քոյրը կը վկայէ, որ Ոստան, մանուկ հասակէն, Ջատկուայ տօներուն, արագիլներու հաւկիթները կը գծագրէր ու կը գունազարդէր ճարտարութեամբ: Ուրեմն երբ հասուն պատանի, ան Ամերիկա հասաւ, թթխմորը պատրաստ էր արդէն: Պոսթոն, քոյրերուն հետ անցուցած տարիները յումպետս չվատնուեցան: Պոսթոնի գեղարուեստից թանգարանը իր առաջին դպրոցը հանդիսացաւ: Հոն, յաճախակի այցելութիւններով ան դիտեց, ծանոթացաւ եւ ուշի ուշով ուսումնասիրեց Իտալական Վերածնունդի հսկաներուն գործերը, ֆրանսական տպաւորապաշտ եւ խորանարդապաշտ արդի գործերը: Ապա գործնականի անցնելով երկնեց հետեւողական կարգ մը գործեր, որոնք այսօր կ՛արժեւորուին իրենց բարձր որակին, ճաշակի եւ գոյներու եւ գիծերու կատարելութեամբ, բնաւ սկսնակ մը չմատնելով անոնց ետին: Անոնցմով ճանչցաւ նկարչութեան թեքնիքներն ու մօտեցումները, զարգացուց զանոնք եւ վերջապէս կատարելապէս տիրապետելով, ստեղծեց ինքնաարտայայտման անհրաժեշտ, յարմարագոյն միջոցբանալին: Այդ եղաւ Վերացականութիւնը, իր բոլոր յատկանիշներով եւ արտայայտութիւններով: Բայց զերծ՝ որեւէ կաղապարումէ: Կորքի վեր մնաց ամէն տեսակի ism-երէ: Իրեն համար էականը, տեսնուածէն անդին անցնելով, բացայայտելն էր այն ճշմարտութիւններն ու երեւոյթները որոնք չեն տեսնուիր պարզ տեսողութեամբ կամ չեն արտայայտուիր բառային կամ պատկերային համակարգով: Մարդուն բարդ ներաշխարհը օրինակ, անոր խինդն ու անձկութիւնները, սարսափն ու նուաստացումները, անոր զաղտնարանին մէջ յաճախանք դարձած յուշերուն հալածախտը, մտորումներն ու երազները, իղձերն ու յուսախաբութիւնները կարելի չէր լուսանկարային ճշգրտութեամբ իսկ, կամ իրապաշտ պատկերներով արտայայտել: Ուստի, հարկ էր քանդել ամէն տեսակի սահմանափակումները եւ զարկ տալ շղթայազերծ երեւակայութեան եւ ներքնատեսողութեան, եւ անոնց յայտնաբերածը պաստառին բերել նոր ձեւերով ու գոյներով, որոնք չըլլան միայն տուեալ պատկերի մը, իմաստի մը կամ զգայնութեան մը սահմանափակեալ կրողն ու ձայնատարը: Այլ, իրենց ներքին ուժականութեամբ մեզի փոխանցեն անտեսանելին ու անմեկնելին: Ահա այդ միջոց գործիքը հանդիսացաւ վերացականութիւնը, որ փրկեց պաստառը նիւթին եւ երեւութականի պատկերացեալ տիրապետութենէն, իրապաշտութեան տառով նաեւ ներաշխարհի սուզակային խուզարկման եւ բացայայտման նոր ու բացառիկ կարողութիւն:*

*Արշիլ Կորքի ըլլալով գերազանձապէս զգացական արուեստագէտ, հիանալի օգտագործեց գոյներու բոլոր նրբերանգները, գիծերու հեզաճկուն ոլորումներն ու սլացքը, ձեւերու եւ ծաւալի համաչափութիւնները, պաստառին բերելու համար կեանքէն կրած իր տառապանքներն ու մրմուռը, դառն ու անոյշ իր յուշերը, երազները, եւ մանաւանդ յորդող լաւա-զգացական բարդ աշխարհը: Ոմանք, ընդհանրապէս կ՛ուզեն առարկել թէ վերացականութեան ապաւինող նկարիչները իրենց գծագրական անկարողութիւնը ծածկելու համար կ՛ընտրեն այդ ուղղութիւնը: Գուցէ ճշմարտութեան նշոյլ մը կայ այդ պնդումին մէջ, որոշ լարախաղացներու պարագային միայն: Բայց Կորքին անտարակոյս վեր կը մնայ այդպիսի կասկածանքէ, քանի որ ան, իր իրապաշտ եւ տպաւորապաշտ կտաւներով, նախապէս ստեղծած էր այնպիսի գլուխ գործոցներ, ինչպիսին էին, օրինակ, իր եւ մօր իւղանկարը, Պոսթոնի տաճարը եւ տաք գոյներով պտղամանը, որոնք առանձինն բաւարար պիտի ըլլային զինք դասելու մեծ նկարիչներու կարգին եւ անմահացնելու զինք:*

*Ֆիլատելֆիայէն ու Լոնտոնէն ետք, Լոս Անճելըսի մէջ այժմ բացուած յետահայեաց այս ցուցահանդէսը լրիւ գաղափար մը կուտայ Կորքիին երկու ուղղութիւններու մասին: Ան այլեւս, աշխարհասփիւռ իր հռչակով գրաւած է իր արժանի տեղը, նկարչական միջազգային պանթէոնէն ներս: Իսկ իր ճառագայթումով, հայկական ծիրանգեղ գոյներով, հայադրոշմ բովանդակութեամբ եւ ոգիով, ան համայն աշխարհին կը պարզէ իր անաղարտ հայու ինկութիւնը, որուն այնքա՜ն ձգտեցաւ ան, երբ ողջ էր, բայց չունեցաւ բաղդը, առիթը եւ մանաւանդ ժամանակը, իրագործելու համար զայն, բայց իր անառարկելի ինքնութեամբ եւ դրոշմով, ան յետ մահու, պարտադրեց իր հայութիւնը՝ բոլորին: Զարմանի չէ, որ այսօր, Արշիլ Կորքիի անունը կը զուգադրուի Մեծ Եղեռնի յիշատակութեան հետ: Ու մենք, պարտաւորութիւնը ունինք շնորհակալ ըլլալու իր մատուցած այս ծառայութեան համար ալ, ինչպէս նաեւ իրաւունքը՝ հպարտանալու իր աննման վաստակով: Իրմով մարդկութեան յառաջընթացին մենք կը մուծենք մեր նշանակալից ներդրումը:*



## Հ. Բ. Ը. Մ. ԱԼԵՔ ԵՒ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

*Շարունակուած էջ 8-էն*

*Նախագահը բարձր գնահատեց տարուած տքնաջան աշխատանքը, ուր առաջին անգամ ըլլալով այս դպրոցի տարեգրութեան մէջ, շրջանաւարտներ կը ստանային այս գումարով կրթանպաստներ: Այս իրողութիւնը կը փաստէր Մանուկեան վարժարանի յաջող կրթական հաստատութիւն մը ըլլալու հանգամանքը:*

*Նախագահ Սեդրակեան իր խօսքին մէջ քաջալերեց շրջանաւարտները հպարտ ըլլալու իրենց հայկական արմատներով, միեւնոյն ժամանակ չխուսափելու իրենց շրջապատին հետ առնչուելէ, հետապնդելով համամարդկային նպատակներ, մնալով հանդերձ հաւատարիմ իրենց հայկականութեան: Ան խորհուրդ տուաւ իրենց ապագայ մասնագիտական կեանքին աւընթեր մասնակցիլ ու ծառայել իրենց համայնքին ու ազգին:*

*Նախագահ Սեդրակեան հաստատեց թէ Բարեգործականը իր ծրագիրներուն մէջ յատուկ դերակատարութիւն վերապահած է երիտասարդութեան որովհետեւ Միութիւնը կը հաւատայ երիտասարդութեան կորովին եւ դրական դերակատարութեան: Նախագահը նշեց որ չի բաւեր հայկական ազգանուն կրել այլ կարեւոր է արժեւորել այդ ազգանունը ինչ որ ձեւով օժանդակելով հայկական զանազան ծրագիրներու:*

*Նախագահին իմաստալից խօսքէն ետք ելոյթ ունեցաւ դպրոցի երգչախումբը, ապա ուղերձներ կարդացին հայերէն ու անգլերէն լեզուներով Նինա Ֆէրհըտսըն (Ֆէրհատեան) ու Ռոմանա Սվիթքա, որմէ ետք վկայականներու բաշխման արարողութիւնը տեղի ունեցաւ:*

*Կը մաղթենք Հ.Բ.Ը.Մ.ի Ալեք եւ մարի Մանուկեան վարժարանի նոր բարձրունքներու նուաճում եւ դալարագարդ ապագայ:*

*Թղթակից*

## ԲՌՆԱԳԱՂԹ..

*Շարունակուած էջ 15-էն*

*ես քու...» եւ իրենց յաղթական դրօշներով՝ հայոց մայր հող էին վերադարձել: Կաթողիկոս Ամենայն Հայոց Գէորգ Զ. միջնորդել էր կեդրոնական կառավարութեանը ի սփիւռս հանգրուանած հայերին՝ հայրենադարձնել: Երեք տասնամեակ առաջ մահուան քարաւաններից փրկուած փշուրները խանդաղատանքով էին դիմաւորել հայրենի երկրի կանչը, եւ հայրենիքի վառուող կարօտը իրենց սրտերում՝ տասնեակ հազարներով փութացել էին արձանագրուել հայրենիք գնալու մատեաններին:*

*Եւ 1946-1947 թուականներին, նաւերին բազմած բազում քարաւաններ անցան Վոսփորի ափերով, եւ շատեր, եւ ես, երեւի ինչեր չասացին նրա ափերին ճեմող թուրքերին: Արաբական Կոմունիստական Կուսակցութեան մէջ սպրդած ապազգային հայ պոլշեւիկները պարտադրել էին Դաշնակցական հայրենադարձներին, Յովհաննէս Աղպաշեանի «Ժողովուրդի Ձայն» լրագրում գրաւոր յայտարարութեամբ հրաժարուելու կուսակցութիւնից, որոնց արձագանգները հասել էին Հայաստանի Պետական Անվտանգութեան Կոմիտէ: Եւ Յունիսի վերջի այդ ողբի գիշերին նրանց եւ այլ բազում անմեղների տարել էին մերձերեւանեան երկաթուղային կայարաններ, հայրենի երկրից բռնագաղթ, թուրքից ընդօրինակած գաղթ:*

*Գարշելի, դիւահար այդ «Մարդուկ»ի սրտի սեւ լոյսը խաւարելուց յետոյ, 1950-ականներին, ցուրտ երկրից վերադարձած բազում բռնագաղթուածների հետ զրուցել եմ, ունկնդրել նրանց խօսքը: Նրանց դէմքերից ցաւ էր կաթում, ճակատներին ակօսուած կնճիռները տառապանքների անցած ուղիներն էին, վարսերին ցուրտ երկրի ձիւնն էին բերել, հայրենիքի բեկանուած կարօտի յոյզն էր հոսում խօսքերից, նրանցից մէկը դառնացած գոռաց, թէ Արագածի գագաթին պայթած շանթերը բեկանեմ եւ այն նետեմ՝ այս երկրի տիրակալների սրտերը այրելու: Երկրից դառնացած հոգեկան տուայտանքի սրտի կսկիծից, ցրտից, արկածներից հայու ինչքան ճրագներ մարեցին, մանչեր որբացան, հարազատները լուռ սգալով՝ անէծք թափեցին երկրին, ցուրտ երկրի հողում մրսեցին իրենց յանգած մարմինները: Արարիչը ինչո՞ւ այդքան սեւ գրեց հայու ինչքան ճրագներ մարեցին, մանչեր որբացան, հարազատները լուռ սգալով անէծք գրեց հայոց արմենական լայն ճակատներին, թէ իրենք չկարողացան կռուով դարբնել իրենց ճակատագրերը: Արեւի հուրը գրկած զէնքով նրանք չպաշտպանեցին իրենց նահապետից ժառանգած հողը, տարբեր տիրակալներ յօշոտեցին այն եւ այս նոր տիրակալը այդ մի փշուր հողից էլ տարաւ նրանց շատերին:*

*Լիբանան, Այնճարի ճահճոտ դաշտ էին բերել Մուսա Լեռցիներին: Եօթ-ութ տարի առաջ, թշնամու սուրերներից փախչելու եւ ազատութեան տենչի համար, «Մեռայ հայրենի հողին» կանչելով՝ թողլ էին իրենց չէները ու գաղթել: Լուցկու տուփիկի նման թրծաչադախէ մէկ սենեականոց իրենց տնակներին էին հասել հայոց երկրի տուն դարձի զանգերի ղօղանջները: Նրանց կէսից աւելի, 1946-47 թուականներին հայրենիք էին գաղթել: Արքայից Արքայ Մեծն Տիգրանն էր երկու հազար տարի առաջ իր յաղթական բանակների հետ նրանց բնակեցրել այդ լեռների լանջերին, եւ վերադարձ: Նրանց հոգիներում իրենց լեռների գեփիւռի քնքշանքը դեռ չյանգած, իրենց դաւանած կուսակցութեան պատկանած լինելու համար շատ ընտանիքների ցուրտ երկիր տարան, եւ ընդմիշտ մրսեցին իրենց հոգիները: Ափսոս իրենց ցաւին:*

*Հայրենիքում բնակութիւն հաստատելու վայր նշանակելու Պաթումի հաւաքակայանի տեսուչը յայտնել էր Արմենակին, որ Գորիսի շրջանը Երեւանից վաթսուն քմ էր հեռու, եւ որ շատ յարմար վայր էր բնակութիւն հաստատելու: Չէր առարկել, գիտակցելով հանդերձ, որ նա խաբում էր: Հայր Արմենակի ութ հոգիանոց ընտանիքը հանգրուանել էր Զանգեզուրի լեռներ, Շուռնուխի գիւղին մօտիկ փայտամշակման գործարան: Հայոց երկրում իմ կեցութեան ամենաերջանիկ պահը եղել է իմ ծննդավայր Մուսա Լեռն յիշեցնող Զանգեզուրում բնակիլս, նրա անտառների կանաչ լոյսը, նրա մարդկանց անուշ յուշերը, մայր ոստանում տուն պատելս, նրա բակում ծառեր ու խաղողի որթատունկ տնկելը: Փախայ այնտեղի մարդկանցից, փլաւ այգիս:*

*Այդ Յունիսի 29-ին, ինձ գործուղել էին Կապան: Ճանապարհին, բեռնատարներն էին հեւալով շարժւում առաջ, կարծես չէին ուզում բաժանուել իրենց տանիքներին հպած ծառերից, որոնք ցաւագին լացի նման մեղմ խշխշում էին: Մեր ինքնաշարժը լուռ անցնում էր բեռնատարների կողքով, որոնց վրայ նստած էին աքսորականները: Մանչերն էին գրկել հայրերին, որոնց նայուածքներից օգնութիւն հայցելու պաղատանք էր կաթում: Փոքր մանչերը հպել էին մայրերին, որոնցից մէկի կանչը «Մամի տուն եմ ուզում» ճզմել էր հոգիս: Մայրերի գրկերին փոքրիկները ճչում էին ողբաձայն, իմ ջահել հոգիս լացում էր: Ձեռքերը ճակատներին հերարձակ կանայք, եղեռնամայրերի նման լուռ ողբում էին: Այլայլուած, մշուշոտ դէմքերով տղամարդիկ, հայեացքներն էին դէպի ետ՝ իրենց չէների սուրերները փնտռելու: Հայերին հատել էին իրենց լեռներից, նրանց կանաչ լոյսից, իրենց հազար, հազար տարիների չէներից:*

*Կապանում ինձ յանձնարարուած աշխատանքը աւարտելուց յետոյ, երկաթուղային կայարան գնացի: Ես ինչո՞ւ գնացի այնտեղ, ինչո՞ւ նայեցի այդ դժխեմ տեսարանին, ինչո՞ւ ականատեսը եղայ այդ մարդկային ողբերգութեանը, որը մինչ այժմ, որպէս ահաւոր թախծութիւն, պատկերուած է երեւակայութեանս տեսիլքում: Գրասեղանիս հակած, փշրւում է սիրտս, փշրւում եմ նրանց դէմքերին իջած աքսորականի ցաւի մրմունջների յուշերից: Կայարանի բացատում խուռներամ մարդիկ, երկաթուղային բեռնատար կառքերի դռներին աքսորականներ, լացի ու հառաչանքի լուռ ողբ, բաժանման անդամուկ ցաւի կսկիծի խշշիւն: Ամպերն էին կախուել կայարանի վրայ, մթնել էին, կարծես ահա երկինքն էր փլուելու, կարծես այնտեղից շանթեր պիտի պայթէին խարոյկելու չարութիւնը: Դէմքս հակած ներքեւ, վերադառնում էի, ինձ հետ տանելով հայոց երկրի աքսորականների ցաւը, մանչերի լացի կանչերը: Ափսոս նրանց տառապանքին: Հոգիները նրանց փշուր փշուր եղան, այդ երկրի երեսին կաթած անէծքից փլուեց այն: Ես փախայ այնտեղից:*

*Հանգստեան կոչուած աւագ դատաւոր՝ Վարդուշ Մանասէրեանին կադրերի բաժնի պետ էին նշանակած եղել իմ պաշտօնավարած կազմակերպութիւնում: Նախկինի նման յոխորտ էր, տիրական կամքն էր թելադրում, աշխատակիցները ակամայ համակերպւում էին: Իմ սրտում դեռ չէր մարել նախնիներից ժառանգած ըմբոստ ոգին, յաճախ հակադարձում էի նրան, սպառնացել էր միջնորդել ետ վերցնելու ինձ շնորհուած շքանշանը, միայն տնօրէնի յորդորով ես այն կամովին ետ չվերադարձրի: Ասում էին, որ հետագայում կուրացել էր, երեւի շատ «արդար» դատելուն համար:*

*Հայաստանի Հանրապետական դատախազութեան քննչական բաժանմունքում էր Վարդուշը ծառայած եղել: Պատմում էր, որ Յունիսի 29ի աշխատանքի օրուայ աւարտին եռուզեր էր եղել եւ իրենց կարգադրուել մնալ աշխատատեղերում: Ընդհանուր ժողով, դատախազը յայտարարել էր, որ իրենց ընտանիքներով մնալ աշխատատեղերում: Ընդհանուր ժողով, դատախազը յայտարարել էր, որ իրենց ընտանիքներով հանդերձ, Երեւան քաղաքից աքսորուելու էին ոչ բաղձալի անցեալ ունեցող անձինք: Առանձին աշխատողների կարգադրուել էր մասնակցել ընտանիքների տեղահանմանը, մինչեւ երկաթուղային կայարան: Իրեն յանձնարարուած է եղել կազմակերպել մէկ օր առաջ ծննդաբերած մօրը ու մանկան ծննդատնից տեղահանումը: Վարդուշը մերժել էր կատարելու հրամանը, դատախազը զայրացած՝ նրա յանդգնութիւնից, կարգադրել էր գնալ աշխատասենեակ: Անձկանօք սպասել էր, սակայն մի քանի ժամ յետոյ, թոյլատրել էին գնալ տուն: Ամուսինն էր պարսաւել նրան, այդ գիշեր կարող էին ձերբակալել իրեն:*

*Առաւօտեան աշխատատեղում էր եղել, բոլորը ակնապիշ նայել էին իրեն, մի քանի օրեր նոյնը: Այդպէս էր այդ իշխանութիւնը, ասում էին մարդը գնահատատուած է եղել 70 կոպէկ, այն էլ իրենց գնդակահարելու փամփուշտի արժէքը...: Մի խրոխտ տղամարդ էլ կատարած չէր եղել անկողնային մի հիւանդի տեղահանումը, պահանջել էր ստուգում, իր բուռն հակադարձութիւնից յետոյ, նրան աքսորի չէին տարել: Եւ տիկին Վարդուշը պատմում էր նաեւ, որ մի քանի ամիս յետոյ, դարձեալ ընհանուր ժողով էր հրաւիրուած եղել, եւ դատախազ Յովհաննիսեանը այսպէս էր ելոյթ ունեցել «Ես ակամայ կատարեցի Մոսկուի հրամանը, այն սահմանադրական ու օրէնսդրական իրաւական հիմք չունէր, որի համար այսօր իմ պաշտօնից հրաժարուելու դիմումնագիր եմ ներկայացրել, միայն Վարդուշն էր համարձակուել չկատարելու իմ հրամանը, ճիշտ էր նա»: Այդ խրոխտ հայուն հետագայում նորէն պատասխանատու պաշտօնի էին նշանակած եղլ, անշուշտ Խրուշչեւեան տարիներին:*

*Հայոց Խորհրդարան, Ազգային ժողով, ամէն տարուայ Յունիսի 14ը յայտարարել է «Բռնագաղթուածների Յիշատակման Օր», եւ քաղաքակրթութեան բեմից հեռացած այդ վարչակարգի բռնարարնքերի դեռ ինչքան յիշատակման օրեր պիտի սահմանուեն:*

**ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ**
**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ**
**(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)**
**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ**
**1060 N. ALLEN AVE. PASADENA**
**ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680**

## ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

*ԼՈՒՍԻՆ ԽՈՏԱՆԵԱՆԻ մահուան առթիւ Ս.Դ.Հ.Կ. Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինը իր վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանիքի համայն անդամներուն, ի մասնաւորի շրջանիս Վարիչ Մարմնի ատենապետ՝ Տէր եւ Տիկ. Վազգէն եւ Սեդա Խոտանեաններուն:*

*Ս.Դ.Հ.Կ. Վարիչ Մարմին*

## ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

*ԼՈՒՍԻՆ ԽՈՏԱՆԵԱՆԻ մահուան առթիւ «Մասիս» Շաբաթաթերթի խմբագրութիւնն ու անձնակազմը իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի բոլոր հարազատներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Քաթիա Խոտանեանին եւ Տէր եւ Տիկ. Վազգէն եւ Սեդա Խոտանեանին:*

## ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

*Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը խորապէս կը ցաւակցի իր վարչութեան անդամներէն Տէր եւ Տիկ. Սեդա եւ Վազգէն Խոտանեանին, իրենց սիրեցեալ հարազատին՝ ԼՈՒՍԻՆ ԽՈՏԱՆԵԱՆԻ մահուան տխուր առիթով:*

*Ն.Ս.Մ.Մ.-ի Վարչութիւն*

## ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

*Տիկ. ԼՈՒՍԻՆ ԽՈՏԱՆԵԱՆԻ մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Նորայր եւ Մարի Խաչատուրեան իրենց խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն եւ յատկապէս Տէր եւ Տիկ. Գիրգոր Խոտանեանին եւ Տէր եւ Տիկ. Վազգէն Խոտանեանին:*

*Առ այդ $100 կը նուիրեն «Մասիս»ին:*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ ԷԴՈՒԱՐԴ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

*Շարունակուած էջ 5-էն*

*նման փաստարկներ թուրքական հասարակութիւնում վախ սերմանելու համար:*

-Իսկ ֆինանսական փոխհատուցման պահանջնե՞ր:

***-Դա հիպոթետիկ հարց է: Ամբողջ աշխարհում կան այն ժամանակ իրենց սեփականութիւնը կորցրած հայերի ժառանգներ: Նրանք կարող են իրաւական ուղիներով փորձել բաւարարել իրենց պահանջները՝ անկախ այն բանից Ցեղասպանութիւնը ճանաչուած է, թէ՝ ոչ:***

-Նախագահ Սերժ Սարգսեանն ասել է գերմանական Der Spiegel շաբաթաթերթին, որ պատմաբանների միացեալ յանձնաժողովը իմաստ կ'ունենայ միայն այն դէպքում, եթէ Թուրքիան ընդունի իր մեղքը Ցեղասպանութեան համար: Արդեօք դա անընդունելի պահանջ է այն գործընթացի համար, որը պէտք է որոշի, թէ ինչ է իրականում տեղի ունեցել:

***-Հայոց ցեղասպանութեան փաստը չի կարող հարցականի տակ դրուել: Մենք ասել ենք դա մեր թուրք գործընկերներին գործընթացի հենց սկզբում: Մենք պայմանաւորուել ենք երկկողմ յարաբերութիւնների զարգացման համար միջկառավարական յանձնաժողովի շրջանակներում ստեղծել ենթայանձնաժողովներ, որոնցից մէկը ունենալու է մի նպատակ՝ վերականգնել երկու ժողովուրդների միջեւ փոխվստահութիւնը: Բայց, ihարկէ, ոչ Հայոց ցեղասպանութիւնը հարցականի տակ դնելու հաշուին: Հնարաւոր չէ հասնել մեր ժողովուրդների միջեւ վստահութեան վերականգնմանը՝ Հայոց ցեղասպանութիւնը հարցականի տակ դնելով:***

-Ձեզ հաճելի՞ է, որ չորս տարի առաջ Ֆրանսիայի Ազգային ժողովը ընդունեց օրէնք, որը պատիժ էր սահմանում հայերի դէմ իրականացուած Ցեղասպանութեան ժխտման համար: Ի՞նչ իմաստ ունէր ընդունել այդպիսի օրէնք երկրներում, որոնք ոչ մի կապ չունեն ցեղասպանութեան հետ:

***-Այն նոյն իմաստը, որ Հոլոքոսթի հետ ոչ մի կապ չունեցող երկրներ օրէնքներ են ընդունում դրա վերաբերեալ: Մենք դեռ յիշում ենք Հիտլերի սահմռկեցուցիչ բառերը. «Գնացէք եւ սպանէք առանց խղճալու: Ի վերջոյ, ո՞վ է յիշում հայերին»:***

***Ցեղասպանութիւնը մարդկութեան դէմ ուղղուած յանցագործութիւն է: Դա վերաբերում է ամբողջ մարդկութեանը եւ ոչ միայն այն զոհ դարձած ժողովրդին:***

-Գերմանիան դեռ հրաժարւում է իր պաշտօնական բառապաշարում 1915-ի իրադարձութիւնները բնութագրելու համար օգտագործել »ցեղասպանութիւն« տերմինը, չնայած որ այն կրում է ընդհանուր պատասխանատուութիւն ջարդերի վրայ աչքեր փակելու եւ ուշադրութիւն չդարձնելու համար: Ի՞նչ է Հայաստանը ակնկալում Գերմանիայից:

***-Ուղիղ հինգ տարի առաջ Գերմանիայի Բունդեսթագում ընդունուած «Հայերի 1915-ի ջարդերի եւ տեղահանումների յիշատակումը» վերնագրուած բանաձեւում ասւում է. «Բունդեսթագը ցաւում է Գերմանական Ռայխի անփառունակ դերակատարութեան համար, որը, չնայած հայերի կազմակերպուած տեղահանման եւ ոչնչացման վերաբերեալ տեղեկատուութեան առատութեանը, որեւէ փորձ չձեռնարկեց միջամտելու եւ կանգնեցնելու այդ դաժանութիւնները»:***

***Ես հաւատում եմ, որ այդ բառերն ինքնին խօսուն են: Ամէն անգամ, երբ գերմանական առաջնորդները այցելում են Եադ Վաշեմի յուշահամալիր՝ տուրք մատուցելու Հոլոքոսթի զոհերի յիշատակին, Նրանք այդ քայլի համար արժանանում են համաշխարհային հանրութեան համակրանքին եւ խոր յարգանքին: Գերմանիան հաշտուել է իր սեփական պատմութեան հետ, եւ մենք յոյս ունենք, որ Գերմանիան օրինակ կը ծառայի Թուրքիային՝ նոյնն անելու համար:***

# ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԸ

*Շարունակուած էջ 8-էն*

*նով՝ ներկայացուած տնօրէնուհի քոյր Լուսիայի եւ դաստիարակներ Լինտա Գանտիլեանի եւ Ուիլերմ Պասեթի կողմէ: Աշակերտութեան կողմէ ուղերձ արտասանեցին Ռիթա Ղուկասեան (հայերէն) եւ Պարեթ Երէցեան (անգլերէն): Օրուան հիւր պատգամաբերն էր վարժարանիս 2002ի շրջանաւարտներէն Ալեքս Թապուռեան, որ ընթացիկ տարուան գիտական դասերու օգնական ուսուցիչ էր: Ան իր ուսումնական կեանքի ընթացքը օրինակ բերելով՝ յորդորեց շրջանաւարտները, որ միշտ անվհատ աշխատին, որովհետեւ աշխատանքով կարելի է հասնիլ փափաքներու իրականացման:*

*Հանդիսութիւնը շարունակուեցաւ հայերէն եւ անգլերէն ոտանաւորներով, խմբերգներով, որոնց դաշնամուրի վրայ կ'ընկերակցէր վարժարանիս երաժշտութեան ուսուցչուհի Վարդուհի Պաղտասարեանը: Յայտագիրը համեմուեցաւ շրջանաւարտներէն Սարին Քէշիշեանի՝ դաշնամուրի վրայ կատարած գեղեցիկ երաժշտութեամբ: Հանդիսութեան ընթացքին գնահատագիր յանձնուեցաւ աւարտական դասարանէն Նարեկ Խոտանեանի:*

*Հանդիսութեան աւարտին, շրջանաւարտները իրենց վկայականները եւ նուէրները ստանձնելէ ետք, երբ Արմինէ Շէրիկեան յայտարարեց եւ կոչեց աւարտականները 2010 տարուան շրջանաւարտներ, ներկաներու ծափողջոյններու եւ ուրախութեան արտայայտութիւններու մթնոլորտին մէջ աշակերտները մէկ կողմ նետելով իրենց գլխարկները՝ հեռացան սրահէն... մինչ «Վերջին Զանգը»ի երաժշտութեան արձագանգը տակաւին կը յամենար դպրոցի պատերէն ներս:*

*Այսպիսով, Յունիս 13ի երեկոյեան, 19 շրջանաւարտներու միջնակարգի ուսումնական ուղեւորութիւնը վերջ գտաւ Անտոն վրդ. Սարոյեանի օրհնութեան խօսքով: Անոնք գեղեցկօրէն արտասանելով, երգելով, եզրափակեցին իրենց 11ամեայ ուղեւորութիւնը եւ հրաժեշտ տալով՝ մեկնեցան, հաստատ քայլերով մուտք գործելու զանազան այլ երկրորդական վարժարաններ:*

*Յաջողութիւն շրջանաւարտներ. կը շնորհաւորենք ձեզ եւ ձեր ծնողները, կը մաղթենք բարի երթ ձեր ապագայ ուսումնական կեանքին մէջ: Շնորհակալութիւն բոլոր ուսուցիչներուն, որոնք համբերութեամբ եւ հոգատարութեամբ իրականութիւն դարձուցին աւարտական զոյգ հանդիսութիւնները:*

*Կ'ուզենք յիշատակել, թէ այս տարի հանդէսի աւարտին տեղի ունեցաւ գնահատագիրի տուչութիւն: Մեծարանքի արժանացած վարժարանիս վաստակաշատ ուսուցչուհիներէն Մարի Թիւթելեանը, որ կը գնահատուէր Հայաստանի հանրապետութեան Սփիւռքի հարցերու Նախարարութեան յատուկ գնահատագիրով՝ իբրեւ երկար տարիներու հայերէն լեզուի դասատու եւ նուիրեալ աշխատող՝ Հայ քոյրերու վարժարանէն ներս:*

*Յիշենք, որ Մարի Թիւթելեան ծնած է Հալէպ, Սուրիա. ուսումը աւարտելէ ետք նուիրուած է ուսուցչական ասպարէզ եւ ծառայած է Անարատ յղութեան միաբանութեան Հայ քոյրերու վարժարանէն ներս, նախ Հալէպի մէջ, ապա՝ Քալիֆորնիոյ, միշտ նուիրուելով հայ փոքրիկներուն մայրենիին սէրը սերմանելու նուիրական աշխատանքին: Յիշարժան է, որ Մարի Թիւթելեան իր ուսուցչական ասպարէզի կողքին հաւատաւոր միութենական մըն է եւ անխոնջ աշխատող, միշտ կիզակէտ ունենալով հայապահպանումն ու հայ գիր ու գրականութեան տարածումը:*

*Վարձքդ կատար Մարի Թիւթելեան. վարժարանի ընտանիքը հպարտ է քեզմով եւ քեզի կը մաղթէ յաջողութիւն ու բարի երթ՝ շարունակելու նուիրական եւ ազգօգուտ գործունէութիւնդ:*

**ՔԱՋ ՆԱԶԱՐ**

**ՈՒԴԻԴ ԵԹԵՐ ՇՕ**

**Ամէն Կիրակի երեկոյեան**
**ժամը 10:00-ից 12:30**
**Կլենտէյլի**
**380-րդ կայանից**

**REQUEST FOR PROPOSALS**
**(RFP# 7535)**
**RENT REASONABLENESS**
**DATA PROVIDER**

**The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified firms interested in creating a rent comparables database with quarterly updates of new data sets. Copies of the RFP may be obtained beginning June 21, 2010 online at www.hacla.org/ps Proposals will be accepted at 2600 Wilshire Blvd., #3100, Los Angeles, CA 90057, until 2:00 P.M., July 9, 2010.**

7/1/10
CNS-1885276#
MASSIS WEEKLY

**massisweekly.com**
**Updated**
**every Friday**

**REQUEST FOR PROPOSALS**
**(RFP# 7533)**
**PROPERTY MANAGEMENT SERVICES**

**The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from property management companies to perform the management and operation of its Asset Management Portfolio consisting of up to 67 multi-family and senior market rate and multi-family, senior and income-restricted scattered properties which include up to 1,106 units. Copies of the RFP may be obtained beginning June 21, 2010 online at www.hacla.org/ps Proposals will be accepted at 2600 Wilshire Blvd., #3100, Los Angeles, CA 90057. until 2:00 P.M., July 16, 2010.**

7/1, 7/8/10
CNS-1885316#
MASSIS WEEKLY

## ԵՐԵՒԱՆՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵՑ ՊԱՍՔԵԹՊՈԼԻ ԵՒՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ ԿԱՆԱՆՑ C ԲԱԺՆԻ ՄՐՑԱՇԱՐԸ



*Այսօր Հայաստանում մեկնարկեց պասքեթպոլի Եւրոպայի առաջնութեան կանանց C բաժնի մրցաշարը՝ հիւրընկալելով Անդորրայի, Ջիբրալթարի, Ուէլսի, Շոտլանդիայի, Մոլդովայի խմբերին, որոնք ՖԻԲԱ-ի երեք դիվիզիոններից ամենացածր վարկանիշ ունեցողներն են: Մրցաշարին մասնակցող Հայաստանի հաւաքականը յոյս ունի բարելաւել իր դիրքերը եւ յայտնուել B դիվիզիոնի կազմում:*

*Առաջին խաղում Մոլդովայի հաւաքականը 82:66 հաշուով յաղթեց Անդորրայի խումբին: Այնուհետեւ տեղի ունեցաւ բացման արարողութիւնը, որը սկսուեց 20 րոպէ ուշացումով:*

*Նախ դահլիճ մտան առաջնութեան մասնակից բոլոր թիմերը եւ մրցավարները: Ապա բացման խօսքով հանդէս եկաւ ՖԻԲԱ-Եւրոպայի փոխնախագահ Ջոն Գոնսալվեսը, ընդ որում նա իր տեքստը կարդաց հայերէն, ինչով զարմացրեց ներկաներին: Ապա ողջոյնի խօսքով դիմեց Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտէի նախագահ Գագիկ Ծառուկեանը:*

*Այնուհետեւ հնչեց Հայաստանի օրհներգը, որից յետոյ սկսուեց բացման արարողութեան համերգային մասը: Այն աւարտուեց դհոլչիների խմբի համաչափ հարուածների ներքոյ: Վերջում մարզադահլիճը տրամադրուեց Հայաստանի եւ Ջիբրալթարի պասքեթպոլիստուհիներին, որոնք սկսեցին նախավարժանք կատարել:*

*Ինչ վերաբերւում է բուն հանդիպմանը, ապա այն անցաւ մեր խումբի բացայայտ առաւելութեամբ եւ աւարտուեց վստահ յաղթանակով՝ 98:45:*

## ՓՈՒԹՊՈԼԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ ԱՒԱՐՏԱԽԱՂԵՐՈՒ 1/8 ՅԱՆԳՐՈՒԱՆԻ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ

Յուլիս 2 Ուրբաթ
ժամը 7:00
Յոլանտա-Պրազիլ
ժամը 11:30
Ուրուկուէյ-Կանա

Յուլիս 3 Շաբաթ
ժամը 7:00
Արժանթին-Գերմանիա
ժամը 11:30
Փարակուէյ-Սպանիա




## ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻ ԵՒՐՈՊԱՅԻ ՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ ԵՐԿՈՒ ԱՐԾԱԹ, ԵՐԿՈՒ՝ ՊՐՈՆԶ

*Ուկրաինայի Լվով քաղաքում աւարտուեց բռնցքամարտի Եւրոպայի աւագ տարիքի պատանեկան առաջնութիւնը:*

*Ինչպէս արդէն տեղեկացրել ենք, Հայաստանի պատուիրակներից չորսը յաղթահարելով առաջին արգելքները, մտել էին կիսաեզրափակիչ եւ շարունակում էին պայքարը:*

*Թեթեւ քաշային Հենրիկ Մոկոյեանն յաղթելով Դանիլ Շամսուդինովին (Ռուսաստան), մտաւ եզրափակիչ, սակայն այստեղ մեր մարզիկը տանուլ տուեց ուկրաինացի Ալեքսանդր Մելենյուկի հետ մարտը եւ արժանացաւ արծաթէ մետալի:*

*50 կգ քաշային Արթուր Ներսիսեանը նոյնպէս նուաճեց եզրափակիչի ուղեգիր, բայց կրկին պարտուեց վճռորոշ մենամարտում՝ զիջելով անգլիացի Թոմաս Ուորդին:*

*Իսկ ահա 57 կգ քաշային Գոռ Երիցեանը եւ ծանրքաշային Ռաֆայէլ Սիմոնեանը անյաջող հանդէս եկան եւ պարտութիւն կրեցին կիսաեզրափակիչում: Նրանք արժանացան պրոնզէ մետալների:*

---

*Հայաստանի հաւաքականի հիմնական խաղացողները ներկայացնում են «Հատիս», «Գրանդ քենդի» եւ «Գիւմրի» ակումբները: Կազմում ընդգրկուած են նաեւ Քրիստինէ Քեփենակեանն ու Արփինէ Ամիրխանեանն ԱՄՆ-ից եւ Ցասմիկ Մամիկոնեանը Ռուսաստանից:*

*Հայաստանի հաւաքականի կազմում է նաեւ «Հատիս»-ում հանդէս եկած Ամանդա Ջեքսոնը ԱՄՆ-ից: 25-ամեայ, արդէն Հայաստանի քաղաքացիութիւն ստացած սեւամորթ պասքեթպոլիստուհին խաղից առաջ «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց, թէ յուզուած է, որ Հայաստանի հաւաքականում պիտի խաղայ, հպարտ է լինելու Հայաստանի եւ հաւաքականի մի մասնիկը եւ ամէն ինչ անելու է Հայաստանի յաղթանակի համար:*

